

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ  
ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

2010 թվականի հունիսի 18-ի թիվ 317

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ**

***Փոփոխող փաստաթղթերի ցանկ***

*(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342, 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 455, 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569, 2011 թվականի մարտի 2-ի թիվ 570, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623, 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 724, 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 726, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 834, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73, 2012 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 85 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 274, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 43 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 192, 2013 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 244 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 84 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի*

*դեկտեմբերի 10-ի թիվ 294, 2014 թվականի փետրվարի 11-ի թիվ 18, 2014 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 178 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 244, 2015 թվականի հուլիսի 14-ի թիվ 83 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160, 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 14, 2016 թվականի հունիսի 7-ի թիվ 63, 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 34 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի մայիսի 30-ի թիվ 60, 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 165 որոշումների խմբագրությամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի հունիսի 7-ի թիվ 67 որոշմամբ կատարված փոփոխություններով)*

Մաքսային միության հանձնաժողովը որոշեց՝

1. Հաստատել՝

- Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների միասնական ցանկը (այսուհետ՝ Միասնական ցանկ, թիվ 1 հավելված),
- «Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթը (թիվ 2 հավելված),

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)*

- «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքների (արտադրանքի) փորձանմուշներ վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթը (թիվ 3 հավելված),

- Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող միասնական անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) պահանջները (այսուհետ՝ Միասնական պահանջներ, թիվ 4 հավելված),

- Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձեւերը (թիվ 5 հավելված):

2. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարություններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից կիրառել Միասնական ցանկը եւ Միասնական պահանջները:

3. Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության լիազորված մարմիններին՝ 2010 թվականի հուլիսի 1-ից իրականացնել՝

- անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին եւ մաքսային տարածքում՝ սույն որոշման թիվ 2 հավելվածին համապատասխան,

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

- անցկացնել անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների եւ ապրանքների (արտադրանքի) փորձանմուշների վերցման համատեղ ստուգումներ՝ Եվրասիական տնտեսական միության անդամ

պետությունների եւ երրորդ երկրների տարածքներում՝ սույն որոշման թիվ 3 հավելվածին համապատասխան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հուլիսի 1-ից:

Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի անդամները՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

<b>Բելառուսի Հանրապետությունից՝</b>	<b>Ղազախստանի Հանրապետությունից՝</b>	<b>Ռուսաստանի Դաշնությունից՝</b>
(Ստորագրություն)	(Ստորագրություն)	(Ստորագրություն)
<b>Ա. ԿՈՐՅԱԿՈՎ</b>	<b>ՈՒ. ՇՈՒԿԵԵՎ</b>	<b>Ի. ՇՈՒՎԱԼՈՎ</b>

Հաստատված է

Մաքսային միության հանձնաժողովի

2010 թվականի հունիսի 18-ի

թիվ 317 որոշմամբ

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ՑԱՆԿ

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

(ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ

#### *Փոփոխող փաստաթղթերի ցանկ*

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 570, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73, 2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 43, 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)*

ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Ապրանքի անվանումը	Ծանոթագրություն
0101	Ձիեր, ավանակներ, ջորիներ եւ կիսագրաստներ կենդանի	
0102	Խոշոր եղջերավոր անասուն՝ կենդանի	
0103	Խոզեր՝ կենդանի	
0104	Ոչխարներ եւ այծեր՝ կենդանի	
0105	Ընտանի թռչուն՝ կենդանի, այսինքն ընտանի հավեր (Gallus domesticus), բադեր, սագեր, հնդկահավեր եւ խայտահավեր	

0106	Կենդանի կենդանիներ՝ այլ	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</b>		
0201	Խոշոր եղջերավոր անասունների միս՝ թարմ կամ պաղեցրած	
0202	Խոշոր եղջերավոր անասունների միս՝ սառեցրած	
0203	Խոզի թարմ միս՝ պաղեցրած կամ սառեցրած	
0204	Ոչխարի կամ այծի միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0205 00	Ձիու, ավանակի, ջրու կամ կիսագրաստի միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0206	Խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, այծերի, ձիերի, ավանակների, ջրիների կամ կիսագրաստների սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0207	ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0105 ապրանքային դիրքում նշված՝ ընտանի թռչունների միս եւ սննդային ենթամթերք՝, թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
0208	Այլ միս եւ մսից սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
0209	Չհալեցրած կամ այլ եղանակով չստացված՝ անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ եւ ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված<*>, աղաջրի մեջ դրված<*>, չորացրած<*> կամ ապխտած	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</b>		
0210	Միս եւ մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված <*>, աղաջրի մեջ դրված <*>, չորացրած <*> կամ ապխտած <*>. սննդային այլուր՝ ստացված մսից կամ մսի ենթամթերքից <*>	

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0301	Կենդանի ձուկ	
0302	Ձկներ՝ թարմ կամ պաղեցրած՝ բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0304 ապրանքային դիրքում ընդգրկված ձկան ֆիլեի եւ այլ ձկան մսի	

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)**

0303	Ձուկ սառեցրած՝ բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0304 ապրանքային դիրքում ընդգրկված ձկան ֆիլեի եւ ձկան այլ մսի	
------	--	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)**

0304	Ձկան ֆիլե եւ ձկան այլ միս (ներառյալ խճողակը)՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	
------	---	--

0305	Ձուկ՝ չորացրած, աղ դրած կամ աղաջրի մեջ դրած. ձուկ՝ ապխտած՝ մինչեւ ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված. ձկնայուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ ձկներից հատիկներ՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի <*>	
------	---	--

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0306	Խեցգետնակերպեր՝ զրահի մեջ կամ առանց զրահի, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած <*>, աղ դրված <*> կամ աղաջրի մեջ դրված <*>. Խեցգետնակերպեր ապխտած<*>՝ զրահի մեջ կամ առանց զրահի, մինչեւ ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված. Խեցգետնակերպեր զրահի մեջ՝ շոգեխաշած <*> կամ եռացող ջրի մեջ եփած <*>, պաղեցրած կամ չպաղեցրած, սառեցրած, չորացրած <*>, աղ դրված <*> կամ աղաջրի մեջ դրված <*>. այուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ հատիկներ Խեցգետնակերպերից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի <*>	
------	--	--

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0307	Կակղամորթներ՝ խեցու մեջ կամ առանց խեցու, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած <*>, աղ դրված <*> կամ աղաջրի մեջ դրված <*>: Կակղամորթներ ապխտած <*>՝ խեցու մեջ կամ առանց խեցու, մինչև ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված <*>: այլուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ հատիկներ կակղամորթներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի <*>	
------	---	--

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0308	Ջրային անողնաշարավորներ՝ բացի խեցգետնակերպերից եւ կակղամորթներից, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած <*>, աղ դրված <*> կամ աղաջրի մեջ դրված: ջրային անողնաշարավորներ՝ բացի խեցգետնակերպերից եւ կակղամորթներից, ապխտած <*>, մինչև ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման ենթարկված կամ չենթարկված <*>: այլուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ հատիկներ՝ ջրային անողնաշարավորներից՝ բացի խեցգետնակերպերից եւ կակղամորթներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի <*>	
------	---	--

**(ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշմամբ. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0401	Կաթ եւ սերուցք՝ չխտացրած եւ առանց շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացնելու	
------	--	--

0402	Կաթ եւ սերուցք, խտացրած կամ շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած <*>	
------	--	--



**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0403	Թան, կտրված կաթ եւ սերուցք, յոգուրտ, կեֆիր եւ այլ խմորման ենթարկված կամ թթվեցրած կաթ ու սերուցք՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, համարուրավետիչ հավելումներով կամ առանց դրանց, մրգեր, ընկույզ կամ կակաո ավելացրած կամ չավելացրած <*>	
------	---	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0404	Կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած. մթերքներ՝ կաթի բնական բաղադրիչներից՝ շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, այլ տեղում չնշված կամ չներառված <*>	
------	---	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0405	Սերուցքային կարագ եւ կաթից պատրաստված այլ ճարպեր ու յուղեր. կաթնային մածուկներ <*>	
------	--	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0406	Պանրի տեսակներ եւ կաթնաշոռ <*>	
------	--------------------------------	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0407	Թռչնի ձվեր՝ կճեպով, թարմ, պահածոյացված <*> կամ եփված <*>	
------	--	--

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0408	Թռչնի ձվեր՝ առանց կճեպի, եւ ձվի դեղնուցներ՝ թարմ, չորացրած, շոգեխաշած <*> կամ եփած եռացող ջրում <*>, կաղապարած <*>, սառեցրած կամ այլ կերպ պահածոյացրած <*>, շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած կամ չավելացրած	
------	---	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0409 00 000 0	Մեղր բնական	
0410 00 000 0	Կենդանական ծագում ունեցող սննդամթերք՝ այլ տեղում չնշված կամ չներառված	
0502	Խոզի կամ վարազի ստեւ. փորսուղի կամ այլ մազ՝ խոզանակային արտադրատեսակների արտադրության համար օգտագործվող. դրանց մնացուկները	
0504 00 000 0	Կենդանիների (բացի ձկներից) աղիքներ, պարկեր եւ ստամոքսներ՝ ամբողջական եւ կտորներով, թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված, աղաջրի մեջ դրված, չորացրած կամ ապխտած	

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0505	Թռչունների մորթիկներ եւ այլ մասեր՝ փետուրներով կամ աղվափետուրով, փետուրներ եւ փետուրների մասեր (կտրված կամ չկտրված եզրերով) եւ աղվափետուր՝ պահելու համար մաքրված, ախտահանված կամ մշակված, սակայն հետագա մշակման չենթարկված. փետուրների եւ դրանց մասերի փոշին ու մնացուկները	
0506	Ոսկորներ եւ եղջյուրների կոթուն՝ չմշակված, ճարպագերծված, առաջնային մշակման ենթարկված (առանց ձեւ տալու), թթվով մշակված կամ ապաժելատինացված. այդ մթերքների փոշին եւ թափոնները	
0507	Փղոսկր, կրիաների զրահներ, կետի բեղ եւ ստեւ կետի բեղից, կոտոշներ, եղջերուի եղջյուրներ, սմբակներ, եղունգներ, մագիլներ եւ կտուցներ՝ չմշակված կամ առաջնային մշակման ենթարկված, սակայն առանց ձեւ տալու. այդ մթերքների փոշին եւ թափոնները	

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

0508 00 000 0	Բացառվել է: - Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831 որոշում	
0510 00 000 0	Համալար մոխրագույն, կղբեշիթ, ցիվետա եւ մուշկ. իսպանական բզեզ. լեղի, այդ թվում՝ չոր. գեղձեր եւ դեղագործական ապրանքների արտադրության մեջ օգտագործվող կենդանական ծագման այլ մթերքներ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած կամ կարճաժամկետ պահպանման համար այլ ձեւով մշակված	
0511	Կենդանական ծագման մթերքներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված. ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 01 կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 03 խմբում նշված սատկած կենդանիներ՝ ոչ պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
0511 99 310 0, 0511 99 390 0	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831 որոշում	
0511 99 859 2	Ձիու մազ եւ դրա թափոնները, այդ թվում՝ որպես քաթան՝ հիմնաշերտով կամ առանց դրա	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման խմբագրությամբ)</b>		
0511-ից, 9601-ից, 9705 00 000 0-ից	Որսորդական հաղթանշաններ, խրտվիլակներ, այդ թվում՝ տաքսիդերմիկ մշակում անցած կամ կոնսերվացված	
0713 10 900 1, 0713 50 000 0	Լոբազգի բանջարեղեն	Անասնաբուծության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում
<b>(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշմամբ)</b>		
1001 19 000 0-ից	Յորեն՝ կարծր (միայն ֆուրաժային հատիկ)	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</b>		

1001 99 000 0-ից	Յորեն՝ փափուկ (միայն ֆուրաժային հատիկ)	
<i>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</i>		
1002 90 000 0-ից	Աշորա (միայն ֆուրաժային հատիկ)	
<i>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</i>		
1003 90 000 0-ից	Գարի (միայն ֆուրաժային հատիկ)	
<i>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</i>		
1004 90 000 0-ից	Վարսակ (միայն ֆուրաժային հատիկ)	
<i>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</i>		
1005 90 000 0-ից	Եգիպտացորեն՝ այլ (միայն ֆուրաժային հատիկ)	
<i>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</i>		
1201 90 000 0-ից	Սոյայի հատիկներ (միայն ֆուրաժային հատիկ)	
<i>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</i>		
1208-ից	Մանր եւ խոշոր աղացվածքի այլուր՝ ստացված յուղատու մշակաբույսերի սերմերից կամ պտուղներից (բացի մանանեխի սերմերից), որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
1211-ից	Բույսեր եւ դրանց մասերը (ներառյալ սերմերն ու պտուղները)՝ որպես միջատասպան կամ նոյնանման նպատակներով կամ անասնաբուժության մեջ օգտագործվող, թարմ կամ չորացրած, ամբողջական կամ մանրացրած, մանրատած կամ աղացած	Անասնաբուժության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում

1212 99 950 0-ից	Այլ (պերգա, ծաղկափոշի)	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման խմբագրությամբ)</b>		
1213 00 000 0	Հացահատիկային բույսերի ծղոտ եւ մղեղ՝ չմշակված, մանրացրած կամ չմանրացրած, աղացած կամ չաղացած, մամլած կամ գրանուլների տեսքով	
1214	Շաղգամ, տերեւավոր ճակնդեղ (մանգոլդ), կերային արմատապտուղներ, խոտ, առվույտ, երեքնուկ, կորնգան, կերային կաղամբ, լյուպին, գյուլուկ եւ նույնանման կերամիջոցներ, հատիկավոր (գրանուլացված) կամ ոչ հատիկավոր	
1301 90 000 0-ից	Այլ (Ակնամոմ)	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման խմբագրությամբ)</b>		
1501	Խոզաճարպ (ներառյալ հալած խոզաճարպը) եւ ընտանի թռչունների ճարպ՝ բացի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0209 կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1503 ապրանքային դիրքերում նշված ճարպից	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
1502	Խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների կամ այծերի ճարպ՝ բացի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1503 ապրանքային դիրքում նշված ճարպից	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
1503 00	Հալած խոզաճարպ-բնաճարպ (ստեարին), հալած խոզաճարպ-օյլ, օլեոստեարին, օլեո-օյլ եւ կենդանական յուղ, չեմուլսացված կամ չխառնուրդած, կամ որեւէ այլ ձեւով չպատրաստված	
1504	Ձկան կամ ծովային կաթնասունների ճարպեր, յուղեր եւ դրանց զտամասեր՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	

1505 00	Ճարպաքրտինք եւ դրանից ստացվող ճարպանյութեր (ներառյալ լանոլինը)	
1506 00 000 0	Կենդանական այլ ճարպեր, յուղեր եւ դրանց զտամասերը՝ չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն առանց քիմիական բաղադրության փոփոխության	
1516 10	Կենդանական ճարպեր եւ յուղեր ու դրանց զտամասերը՝ լրիվ կամ մասնակի հիդրոգենացված, ընդթերացված, վերաթերացված կամ էլաիդինացված, չռաֆինացված կամ ռաֆինացված, սակայն հետագա մշակման չենթարկած	
1516 20	Բուսական ճարպեր եւ յուղեր ու դրանց թորամասերը	Անասնաբուժության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում
1517-ից	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831 որոշում	
1518 00	Կենդանական կամ բուսական ճարպեր եւ յուղեր ու դրանց զտամասերը, եփված, թթվեցրած, ջրազրկված, սուլֆացված, օդային փչումով թթվեցրած, պոլիմերացված տաքացմամբ՝ վակուումում կամ իներտ գազի մեջ կամ քիմիապես վերափոխված այլ եղանակով՝ բացի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1516 ապրանքային դիրքում ընդգրկված մթերքներից. սննդի մեջ օգտագործելու համար ոչ պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերքներ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 15 խմբի կենդանական կամ բուսական ճարպերից կամ յուղերից կամ տարբեր ճարպերի կամ յուղերի զտամասերից, այլ տեղում չնշված կամ չընդգրկված	Անասնաբուժության մեջ, այդ թվում՝ կենդանիների կերերի մեջ օգտագործումը հայտարարագրելու դեպքում
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
1518 00-ից, 2102-ից, 2309-ից, 2936-ից, 3002-ից, 3203 00-ից, 3302-ից, 3504 00-ից, 3507-ից, 3808-ից, 3824-ից	Կերային հավելումներ	

**(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի՝ 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշմամբ)**

1521 90	Մեղրամոմ եւ այլ միջատների մոմ ու կետածարպ՝ ներկած կամ չներկած, ռաֆինացված կամ չռաֆինացված	
1601 00	Երշիկներ եւ մսից, մսային ենթամթերքից կամ արյունից պատրաստված նույնանման մթերքներ. դրանց հիմքով պատրաստված պատրաստի սննդամթերք <*>	

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

1602	Մսից, մսային ենթամթերքներից կամ արյունից պատրաստի կամ պահածոյացված այլ մթերք <*>	
------	--	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

1603 00	Լուծամզվածքներ եւ հյութեր մսից, ձկնից կամ խեցգետնակերպերից, կակղամորթներից կամ ջրային այլ անողնաշարավորներից	
1604	Պատրաստի կամ պահածոյացված ձուկ. թառափազգիների ձկնկիթ եւ դրա փոխարինիչները՝ պատրաստած ձկան ձկնկիթի հատիկներից <*>	

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

1605	Պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր, կակղամորթներ եւ ջրային այլ անողնաշարավորներ <*>	
------	---	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

1902 20-ից	Մակարոնային արտադրատեսակներ միջուկով՝ ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված կամ այլ եղանակով պատրաստված, որը պարունակում է ձուկ, խեցգետնակերպեր, կակղամորթներ կամ այլ ջրային անողնաշարավորներ, երշիկ, միս, մսային ենթամթերք, արյուն կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 04 խմբի մթերքներ կամ այդ մթերքների ցանկացած համադրություն <*>	
------------	---	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)**

1904 20-ից	<p>Հացաբույսեր (բացի եգիպտացորենի հատիկից)՝ հատիկի կամ փաթիլների տեսքով կամ այլ եղանակով մշակված հատիկի տեսքով (բացի մանր եւ խոշոր աղացվածքի ալյուրից)՝ նախապես եփած կամ այլ եղանակով պատրաստված, որոնք պարունակում են ձուկ, խեցգետնակերպեր, կակղամորթներ կամ այլ ջրային անողնաշարավորներ, երշիկ, միս, մսային ենթամթերք, արյուն կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 04 խմբի մթերքներ կամ այդ մթերքների ցանկացած համադրություն &lt;*&gt;</p>	
------------	---	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)**

20-րդ խմբից	<p>Մթերքներ՝ ստացված բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից եւ դրանց խառնուրդները, որոնք պարունակում են երշիկ &lt;*&gt;, միս &lt;*&gt;, մսային ենթամթերք &lt;*&gt;, արյուն &lt;*&gt;, ձուկ &lt;*&gt; կամ խեցգետնակերպեր &lt;*&gt;, կակղամորթներ &lt;*&gt; կամ այլ ջրային անողնաշարավորներ &lt;*&gt; կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 04 խմբի մթերքներ կամ այդ մթերքների ցանկացած համադրություն &lt;*&gt;</p>	
-------------	---	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)**

2102 20-ից	<p>Ոչ ակտիվ խմորասնկեր. այլ մեռած միաբջիջ միկրոօրգանիզմներ, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար</p>	
------------	---	--

2104-ից	<p>Պատրաստի ապուրներ ու արգանակներ եւ նախապատրաստուկներ դրանք պատրաստելու համար (բացառությամբ բանջարեղենային նախապատրաստուկների). հոմոգենացված բաղադրված պատրաստի սննդամթերք, որը պարունակում է երշիկ &lt;*&gt;, միս &lt;*&gt;, մսային ենթամթերք &lt;*&gt;, արյուն &lt;*&gt;, ձուկ &lt;*&gt;, խեցգետնակերպեր &lt;*&gt;, կակղամորթներ &lt;*&gt; կամ այլ անողնաշարավորներ &lt;*&gt; կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 04 խմբի մթերքները &lt;*&gt; կամ նշված մթերքների ցանկացած համադրություն</p>	
---------	--	--

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)**



2105 00-ից	Պաղպաղակ՝ բացի պտղահատապտղային հիմքով պատրաստված պաղպաղակից, մրգային եւ սննդային սառույցից <*>	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</b>		
2106-ից	Հալած պանիրներ եւ այլ պատրաստի սննդամթերք, որոնք պարունակում են երշիկ, միս, մսային ենթամթերք, արյուն, ձուկ, խեցգետնակերպեր, կակղամորթներ կամ այլ անողնաշարավորներ կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 04 խմբի մթերքները կամ այդ մթերքների ցանկացած համադրություն <*>	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
2301	Խոշոր եւ մանր աղացվածքի այլուր եւ հատիկներ՝ մսից կամ մսային ենթամթերքից, ձկնից կամ խեցգետնակերպերից, կակղամորթներից կամ ջրային այլ անողնաշարավորներից, որոնք պիտանի չեն սննդի մեջ օգտագործելու համար. ճարպատակուցք	
2302-ից	Հացաբույսերի կամ լոբազգիների հատիկների մաղումից, աղալուց կամ այլ կերպ վերամշակումից ստացված թեփ, մաղուցք, դարման եւ այլ մնացորդներ՝ չհատիկավորված (չգրանուլացված) կամ հատիկավորված, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
2303-ից	Օսլայի արտադրության թափոններ եւ համանման թափոններ, բազուկի քուսպ, բազասսա, կամ շաքարեղեգի քուսպ եւ շաքարի արտադրության այլ թափոններ, տակուցք եւ գարեջրագործության կամ օղեգործության այլ թափոններ՝ չհատիկավորված (չգրանուլացված) կամ հատիկավորված, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
2304 00 000-ից	Կոպտոն եւ այլ կոշտ թափոններ, որոնք ստացվում են սոյայի յուղի զատման ընթացքում՝ չաղացած կամ աղացած, չհատիկավորված (չգրանուլացված) կամ հատիկավորված, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	

2306-ից	Կուպոնն եւ այլ կոշտ թափոններ, որոնք ստացվում են բուսածարպերի կամ յուղերի գատման ընթացքում՝ բացի սոյայի կամ գետնընկույզի թափոններից, չաղացած կամ աղացած, չհատիկավորված կամ հատիկավորված, որոնք օգտագործվում են կենդանիներին կերակրելու համար	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</b>		
2308 00	Բուսական ծագում ունեցող մթերք եւ բուսական թափոններ, բուսական մնացորդներ եւ կողմնակի մթերք, չհատիկավորված (չգրանուկացված) կամ հատիկավորված, որոնք օգտագործում են կենդանիներին կերակրելու համար, այլ տեղում չնշված կամ չընդգրկված	
2309	Կենդանիներին կերակրելու համար օգտագործվող մթերքներ	
29-րդ խմբից	Օրգանական քիմիական միացություններ (անասնաբուժության մեջ կիրառելու համար)	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</b>		
30-րդ խմբից	Դեղագործական արտադրանք (անասնաբուժության մեջ կիրառելու համար)	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)</b>		
3101 00 000 0	Կենդանական կամ բուսական ծագման պարարտանյութեր՝ խառնած կամ չխառնած, քիմիական եղանակով մշակված կամ չմշակված. պարարտանյութեր՝ ստացված բուսական կամ կենդանական ծագման մթերքները խառնելու կամ քիմիական մշակման ենթարկելու միջոցով	
3501-ից	Կազեին, կազեինատներ եւ կազեինի այլ ածանցյալներ	
3502	Ալբումիններ (սպիտակուցներ) (ներառյալ երկու կամ ավելի այն շիճուկային սպիտակուցների խտանյութերը, որոնք պարունակում են չոր նյութի հաշվարկով 80% զանգվածային բաժնից ավելի շիճուկային սպիտակուցներ), ալբումինատներ եւ ալբումինի այլ ածանցյալներ	

3503 00	Դոնդողանյութ (այդ թվում՝ ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) թերթերով, մակերեսային մշակմամբ կամ առանց մշակման, ներկած կամ չներկած) եւ դոնդողանյութի ածանցյալները. ձկնասոսիւնձ. կենդանական ծագման այլ սոսիւնձներ՝ բացի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3501 ապրանքային դիրքում ընդգրկված կազեինի սոսնձից	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
3504 00	Պեպտոններ եւ դրանց ածանցյալները. սպիտակուցային այլ նյութեր եւ դրանց ածանցյալները՝ այլ տեղում չնշված կամ չներառված. կաշվի կամ հում կաշվի փոշի՝ քրոմապատված կամ չքրոմապատված	
<b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ 73, 2013 թվականի հուլիսի 2-ի թիվ 43, 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշումների խմբագրությամբ)</b>		
3507-ից	Ֆերմենտներ (էնզիմներ). ֆերմենտային պատրաստուկներ՝ այլ տեղում չնշված կամ չներառված (անասնաբուժության մեջ կիրառման համար)	
3808-ից	Ինսեկտիցիդներ, ռոդենտիցիդներ, ախտահանող ու նույնանման միջոցներ, որոնք բաժնեծրարված են մանրածախ վաճառքի համար նախատեսված տարաներում կամ փաթեթվածքներում՝ կամ ներկայացված են պատրաստի պատրաստուկների կամ արտադրատեսակների ձեւով (անասնաբուժության մեջ կիրառելու համար)	
3821 00 000 0-ից	Մշակային միջավայրեր՝ նախատեսված մանրէներ աճեցնելու համար՝ անասնաբուժության մեջ կիրառման համար	
3822 00 000 0-ից	Ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր տակդիրով, պատրաստի ախտորոշիչ կամ լաբորատոր ազդանյութեր՝ տակդիրով կամ առանց տակդիրի՝ բացի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3002 կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 3006 ապրանքային դիրքում նշված ապրանքներից	

	(անասնաբուժության մեջ կիրառման համար), հավաստագրված չափանմուշային նյութեր (անասնաբուժության մեջ կիրառելու համար)	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
4101	Խոշոր եղջերավոր անասունների (ներառյալ գոմեշների) կամ ձիազգի կենդանիների (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմագաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված) չմշակված մորթեր՝ մազաձածկույթով կամ առանց մազաձածկույթի, երկտակված կամ չերկտակված	
4102	Ոչխարների չմշակված մորթեր կամ գառների մորթիկներ (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմագաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված)՝ բրդյա ձածկույթով կամ առանց բրդյա ձածկույթի, երկտակված կամ չերկտակված՝ բացի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 41-րդ խմբի 1.գ ծանոթագրությամբ բացառվածներից	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
4103	Այլ չմշակված մորթեր (թարմ կամ աղադրված, չորացրած, մոխրած, աղջրած կամ այլ կերպ պահածոյացված, բայց չդաբաղած, չմագաղաթացրած կամ հետագա մշակման չենթարկված)՝ մազաձածկույթով կամ առանց մազաձածկույթի, երկտակված կամ չերկտակված՝ բացի ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 41-րդ խմբի 1.բ կամ 1.գ ծանոթագրությամբ բացառվածներից	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
4206 00 000 0	Արտադրատեսակներ՝ աղիքներից (բացի շերամի ֆիբրոինից ստացված մանրաթելից), սինյուզայից, պարկերից կամ ջլերից	

4301	Մուշտակամորթ հումք (ներառյալ գլուխները, պոչերը, թաթերը եւ այլ մասեր կամ կտորտանքը՝ պիտանի մորթուց պատրաստվող արտադրատեսակների արտադրության համար)՝ բացառությամբ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4101, ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4102 կամ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 4103 ապրանքային դիրքերում նշված չմշակված մորթերի	
<b>(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102, 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշումների խմբագրությամբ)</b>		
5001 00 000 0	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831 որոշում	
5002 00 000 0	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831 որոշում	
5003 00 000 0	Հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 831 որոշում	
5101	Բուրդ՝ չենթարկած սանդերքագզման կամ սանրագզման	
5102	Կենդանիների մազ՝ բարակ կամ կոշտ, սանդերքագզման կամ սանրագզման չենթարկած	
5103	Բրդի կամ կենդանիների բարակ կամ կոշտ մազի մնացուկներ՝ ներառյալ մանվածքային մնացուկները, բայց բացառելով փխրունացրած հումքը	
9508 10 000 0-ից	Շրջիկ կրկեսների եւ շրջիկ գազանանոցների կենդանիներ	
9705 00 000 0-ից	Հավաքածուներ եւ հավաքածուներ կազմելու առարկաներ՝ կենդանաբանության, կենդանիների անատոմիայի եւ հնէաբանության վերաբերյալ (բացառությամբ թանգարանային պահպանման ցուցանմուշների)	
3923-ից, 3926-ից, 4415-ից, 4416 00 000 0-ից, 4421-ից, 7020 00-ից, 7309 00-ից, 7310-ից,	Բոլոր տեսակի կենդանիների փոխադրման, բուծման, ժամանակավոր պահելու համար օգտագործվող սարքավորումներ եւ հարմարանքներ, ինչպես նաեւ կենդանական ծագման հումքի (արտադրանքի)	

<p>7326-ից, 7616-ից, 8436 21 000 0-ից, 8436 29 000 0-ից, 8436 80 900 0-ից, 8606 91 800 0-ից, 8609 00-ից, 8716 39 800-ից</p>	<p>տրանսպորտային փոխադրման համար օգտագործվող սարքավորումներ հարմարանքներ՝ օգտագործված ԵՆ</p>	
<p><b>(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 859 որոշման խմբագրությամբ)</b></p>		

Ծանոթագրություն: Սույն ցանկի օգտագործման նպատակներով անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանմամբ:

(ծանոթագրությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի մայիսի 17-ի թիվ 23 որոշման խմբագրությամբ)

-----

**<1> Հղումը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշում:**

**<\*> Հղումը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշում:**

**<\*> Անասնահամաճարակային բարեկեցության առումով:**

**(հղումը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 102 որոշման խմբագրությամբ)**

Հաստատված է

Մաքսային միության հանձնաժողովի

2010 թվականի հունիսի 18-ի

թիվ 317 որոշմամբ

## **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԵՒ  
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ  
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ)  
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

### ***Փոփոխող փաստաթղթերի ցանկ***

***(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի  
թիվ 342, 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 724 որոշումների,  
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի  
հոկտեմբերի 12-ի թիվ 85, 2013 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 84,  
2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

## **I. Կիրառության ոլորտը**

1.1. Սույն հիմնադրույթը մշակված է Եվրասիական տնտեսական համայնքի Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)՝ պետությունների ղեկավարների մակարդակով ընդունված 2009 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 29 որոշման հիման վրա՝ Մաքսային միության անասնաբուժասանիտարական միջոցների վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 11-ի գործող համաձայնագրի՝ մինչև «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելը զարգացման նպատակով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

1.2. Սույն հիմնադրույթի պահանջները կիրառվում են Անասնաբուժական (հսկողության) վերահսկողության ենթակա ապրանքների միասնական ցանկում նշված ապրանքների (այսուհետ՝ հսկողության վերցված ապրանքներ) նկատմամբ:

Սույն հիմնադրույթով սահմանվում է Միության մաքսային սահմանին եւ Միության մաքսային տարածքում հսկողության վերցված ապրանքների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների՝ անասնաբուժության ոլորտում գործունեություն իրականացնող պետական մարմինների եւ հաստատությունների կողմից (այսուհետ համապատասխանաբար՝ անդամ պետությունների լիազորված մարմիններ, անդամ պետություններ, Միություն) հսկողության իրականացման կարգը՝ հսկողության վերցված՝ մարդու եւ կենդանիների առողջության համար վտանգավոր ապրանքների՝ Միության մաքսային տարածք ներմուծումը եւ տեղափոխումը (փոխադրումը) չթույլատրելու նպատակով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

1.3. Հսկողության վերցված ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների ու անձանց նկատմամբ հսկողության (վերահսկողության) իրականացման կարգն իրականացվում է «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:



1.4. Սույն հիմնադրույթի պահանջները ենթակա են պարտադիր կատարման Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություն) գործադիր իշխանության մարմինների, անդամ պետությունների վարչական տարածքների գործադիր իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ցանկացած կազմակերպարավական ձեռնարկատերերի (այսուհետ՝ կազմակերպություններ եւ անձինք) կողմից, որոնց գործունեությունը կապված է հսկողության վերցված ապրանքների արտադրության, վերամշակման, պահպանման, օգտահանման (ուտիլիզացման), ոչնչացման, տրանսպորտի եւ առաքումների բոլոր տեսակներով տեղափոխման (փոխադրման) եւ իրացման հետ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

## **II. Եզրույթներ եւ սահմանումներ**

2.1. Սույն համաձայնագրում օգտագործվում են հետեւյալ եզրույթները եւ սահմանումները՝

2.1.1. «անասնաբուժական կանոններ եւ նորմեր (այսուհետ՝ անասնաբուժական կանոններ)»՝ անասնաբուժական (անասնաբուժասանիտարական) միասնական պահանջներ սահմանող նորմատիվ փաստաթղթեր, ինչպես նաեւ կենդանաբանական եւ հիգիենիկ նորմատիվներ, որոնք չպահպանելը ստեղծում է կենդանիների, այդ թվում՝ մարդկանց եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների առաջացման ու տարածման վտանգ,

2.1.2. «Միասնական անասնաբուժական պահանջներ»՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ ներկայացվող պահանջներ՝ ուղղված Կողմերի

տարածք կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների հարուցիչների եւ անասնաբուժասանիտարական առումով վտանգավոր, կենդանական ծագում ունեցող ապրանքների (արտադրանքի) ներմուծումն ու տարածումը չթույլատրելուն,

2.1.3. «անասնաբուժական սերտիֆիկատ»՝ անդամ պետության լիազորված մարմնի կողմից հսկողության վերցված՝ տեղափոխման (փոխադրման) ենթակա ապրանքների համար տրվող փաստաթուղթ, որը հավաստում է դրանց անվտանգությունը՝ անասնաբուժասանիտարական առումով, եւ այդ ապրանքների արտադրության վայրերի վարչական տարածքների բարեկեցությունը՝ կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների առումով,

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

2.1.4. «սահմանային անասնաբուժական հսկիչ կետ (այսուհետ՝ ՍԱՀԿ)»՝ լիազորված մարմնի կառուցվածքային ստորաբաժանում, որը Միության մաքսային սահմանի անցակետերում եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ վայրերում իրականացնում է սահմանային անասնաբուժական հսկողություն,

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

2.1.5. «երկիր, որը ներմուծում է (ներմուծող երկիր)»՝ հսկողության վերցված ապրանքներ ստացող երկիր,

2.1.6. «երկիր, որն արտահանում է (արտահանող երկիր)»՝ երկիր, որտեղից հսկողության վերցված ապրանքներն ուղարկվում են ներմուծող երկիր,

2.1.7. «ապրանքների տարանցում»՝ Միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքների տեղափոխում (փոխադրում), որոնց ուղարկման եւ նշանակման կետերը գտնվում են Միության մաքսային տարածքից դուրս,

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

2.1.8. «հսկողության վերցված ապրանքների ներմուծման (արտահանման) կամ տարանցման թույլտվություն»՝ անդամ պետության օրենսդրության համաձայն անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձի կողմից տրվող փաստաթուղթ, որով սահմանվում են հսկողության վերցված ապրանքների օգտագործման կարգն ու պայմանները՝ ելնելով հսկողության վերցված ապրանքների ներմուծման եւ տարանցման ժամանակ արտահանող երկրների անասնահամաճարակային վիճակից,

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

2.1.9. «անասնահամաճարակային վիճակ»՝ կոնկրետ նշված պահին որոշակի տարածքում առկա անասնաբուժասանիտարական իրադրություն՝ կենդանիների հիվանդությունների առկայությամբ բնորոշվող, դրանց տարածմամբ ու հիվանդացության մակարդակով,

2.1.10. «կարանտինային միջոցառումներ»՝ հատուկ եւ կազմակերպչատնտեսական միջոցների համալիր՝ ուղղված կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու եւ կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների աղբյուրների տեղակայության որոշմանն ու վերացմանը,

2.1.11. «անասնաբուժական օգտագործման դեղամիջոցներ (այսուհետ՝ դեղամիջոցներ)»՝ կենդանիների հիվանդությունների կանխարգելման, ավստորոշման եւ բուժման համար կիրառվող նյութեր, որոնք ստացվել են արյունից, արյան պլազմայից, ինչպես նաեւ կենդանիների օրգաններից, բույսերից եւ հանքերից՝ սինթետիկ մեթոդներով կամ կենսաբանական տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչպես նաեւ բուսական, կենդանական կամ սինթետիկ ծագման, դեղաբանական ակտիվություն ունեցող նյութեր,

2.1.12. «կերեր եւ կերային հավելումներ»՝ բուսական, կենդանական, հանքային, քիմիական եւ մանրէաբանական ծագման արտադրանք՝ ներառյալ բոլոր տեսակի կենդանիների կերակրման համար կամ որպէս կերերի արտադրման բաղադրիչներ օգտագործվող դրանց խառնուրդները:

2.1.13. «արտահանող երկրի իրավասու մարմին»՝ արտահանող երկրի պետական մարմին, որի իրավասությանն են վերապահված անասնաբուժական հսկողության (վերահսկողության) եւ (կամ) կենդանիների բարեկեցությունն ու առողջության պահպանումն ապահովելու, ինչպէս նաեւ միջազգային անասնաբուժական սերտիֆիկացման հարցերը:

***(2.1.13 կերն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշմամբ)***

2.2. Սույն հիմնադրույթում հատուկ չսահմանված եզրույթները կիրառվում են այլ միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ Միության շրջանակներում կնքված պայմանագրերով սահմանված իմաստներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

### **III. Ընդհանուր դրույթներ**

3.1. ՍԱՀԿ պաշտոնատար անձինք, լիազորություններն իրականացնելիս, փոխգործակցում են գործադիր իշխանության այլ մարմինների՝ անցակետերում հսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձանց, անցակետերի վարչակազմերի (Միության մաքսային սահմանի անցակետերում հսկողության մարմինների փոխգործակցության տեխնոլոգիական սխեմայի շրջանակներում), նավատերերի, գործակալ հանդիսացող ընկերությունների եւ ծառայությունների, այլ հաստատությունների եւ կազմակերպությունների, ինչպէս նաեւ սահմանակից պետությունների անցակետերի անասնաբուժական մասնագետների հետ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

3.2. Պետական անասնաբուժական տեսուչները, իրենց իրավասության սահմաններում, իրավունք ունեն անարգել այցելելու հսկողության վերցված ապրանքների արտադրության, պահպանման եւ վերամշակման օբյեկտներ:

3.3. Ծառայողական պարտականությունները կատարելիս՝ ՍԱՀԿ պաշտոնատար անձինք իրենց մոտ պետք է ունենան ծառայողական վկայական եւ կրեն անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված նմուշի համազգեստ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

3.4. Միության մաքսային սահմանով հսկողության վերցված ապրանքների տեղափոխումը (փոխադրումը) թույլատրվում է այդ նպատակների համար նախատեսված անցակետերում կամ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված այլ վայրերում, որոնք, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, սարքավորվում եւ հագեցվում են անասնաբուժական հսկողության միջոցներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

3.5. Ռազմածովային բազաներում, ռազմական օդանավակայաններում եւ այլ վայրերում գտնվող՝ Միության մաքսային սահմանի ռազմական տրանսպորտային միջոցների անցակետերում անդամ պետության Պաշտպանության նախարարության կողմից ստեղծվում են անասնաբուժական հսկողության կետեր:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

3.6. ՍԱՀԿ պաշտոնատար անձինք, հսկողության վերցված ապրանքներ ներմուծելիս, Միության մաքսային սահմանի անցակետերում իրականացնում են անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն)՝ նշանակման անդամ պետությունից անկախ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

3.7. Հսկողության վերցված ապրանքները ներմուծման, տարանցման, ինչպես նաև Միության ներսում մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք տեղափոխման դեպքում տրանսպորտային փոխադրման ամբողջ ընթացքում պետք է ուղեկցվեն անդամ պետության լիազորված մարմինների պաշտոնատար անձանց եւ արտահանող երկրների իրավասու մարմինների կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Հսկողության վերցված ապրանքները կարող են տեղափոխվել մեկ անդամ պետության տարածքի սահմաններում տվյալ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

3.8. Հսկողության վերցված ապրանքները Միության մաքսային տարածք ներմուծելու դեպքում անասնաբուժական սերտիֆիկատները պետք է ձեւակերպված լինեն ռուսերենով, ինչպես նաև արտահանող երկրի լեզվով եւ (կամ) անգլերենով: Այդ անասնաբուժական սերտիֆիկատների ձեւաթղթերը պատրաստվում են այնպիսի եղանակով, որ դրանց կեղծման հնարավորությունը հասցվի նվազագույնի (հատուկ թղթի, ջրանշանների օգտագործում, տպագրական համարի առկայություն եւ պաշտպանիչ այլ միջոցներ):

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 724 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 84, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Անասնաբուժական սերտիֆիկատները, որոնք ձեւակերպված են թղթային ձեւաթղթերով, պետք է ստորագրվեն արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի կողմից եւ պետք է ունենան այդ մարմնի կնիքը: Անասնաբուժական սերտիֆիկատի յուրաքանչյուր էջ պետք է ունենա անասնաբուժական սերտիֆիկատի եզակի համար եւ երկու թիվ, որոնցից առաջինը նշանակում է էջի հերթական համարը, երկրորդը՝ էջերի ընդհանուր թիվը, այս թվերի միջեւ դրվում է «-ից» մասնիկը: Անասնաբուժական սերտիֆիկատի տեքստում չի թույլատրվում կատարել ուղղումներ՝ բացառությամբ վրան գիծ քաշելու դեպքերի, որոնք նախատեսված են անասնաբուժական սերտիֆիկատի ձեւաթղթով, կամ կատարվում են այլ համաձայնեցված դեպքերում: Այդպիսի փոփոխությունները պետք է վավերացվեն արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ այդ իրավասու մարմնի կնիքով:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշմամբ)***

Արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի կորստի կամ վնասվելու դեպքում դրա փոխարեն կարող է ձեւակերպվել նոր անասնաբուժական սերտիֆիկատ:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշմամբ)***

Եթե արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի կողմից անասնաբուժական սերտիֆիկատը ձեւակերպելու ժամանակ թույլ է տրվել տեխնիկական սխալ, կամ պարզվել է, որ անասնաբուժական սերտիֆիկատում

նշված նախնական տեղեկությունը ճիշտ չէ, ապա թույլատրվում է փոփոխել դրանում պարունակվող տեղեկություններից հետեւյալը՝ բեռնառաքողի անվանումը եւ հասցեն, բեռնաստացողի անվանումը եւ հասցեն, տրանսպորտը (վագոնի, ավտոմեքենայի համարը, ինքնաթիռի թռիչքի համարը, նավի անվանումը), տարանցիկ փոխադրման երկիրը (երկրները), Միության մաքսային սահմանի հատման կետը:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Այդպիսի փոփոխությունները թույլատրվում են, եթե դրանք կատարվել են արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ առանց խախտելու սերտիֆիկացման կանոնները, եւ եթե դրանց ուղղումը չի փոխում բեռի բնութագրերը, ինչպես նաեւ ներմուծող երկրի կողմից սահմանված պահանջներին համապատասխան՝ ըստ նշանակության օգտագործելու համար դրա պիտանիությունը: Կատարված փոփոխությունները պետք է վավերացվեն արտահանող երկրի իրավասու մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ այդ իրավասու մարմնի կնիքով:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշմամբ)***

Անասնաբուժական սերտիֆիկատի փոխարինումն իրականացվում է արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից, որը տրամադրել է այն: Նոր սերտիֆիկատի մեջ նշում է կատարվում այն մասին, որ այն փոխարինում է ավելի վաղ տրված անասնաբուժական սերտիֆիկատին, ինչպես նաեւ նշվում է կորած (վնասված) անասնաբուժական սերտիֆիկատի համարը եւ տրման ամսաթիվը: Նորով փոխարինված անասնաբուժական սերտիֆիկատը պետք է չեղյալ համարվի եւ, հնարավորության դեպքում, վերադարձվի այն տրամադրած մարմին:



***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշմամբ)***

3.9. Կողմերի լիազորված մարմիններն իրականացնում են անդամ պետությունների տարածք ներմուծվող՝ հսկողության վերցված ապրանքների օգտագործման (պահպանում, վերամշակում, կենդանիների կերի մեջ օգտագործում, վերադարձ, ուտիլիզացում, ոչնչացում եւ այլն) պայմանների սահմանումը եւ փորձանմուշներ (նմուշներ) վերցնելը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Միության մաքսային տարածք հսկողության վերցված ապրանք ներմուծելու դեպքում, որն ուղեկցվում է այնպիսի անասնաբուժական սերտիֆիկատով, որը տարբերվում է երրորդ երկրներից Միության մաքսային տարածք ներմուծվող հսկողության վերցված ապրանքների համար կիրառվող՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 607 որոշմամբ հաստատված Միասնական անասնաբուժական սերտիֆիկատների ձեւաչափերից, համաձայնեցված է անդամ պետության լիազոր մարմնի եւ երրորդ երկրի կողմից եւ որում առկա են հսկողության վերցված ապրանքը տարբեր անդամ պետությունների տարածքներ ներմուծելու համար տարբերվող պահանջներ կամ պայմաններ, ներմուծող երկիրն ապահովում է ներմուծվող ապրանքի շրջանառության նկատմամբ վերահսկողությունն այնպես, որ բացառվի դրա տեղափոխումն այն անդամ պետության տարածք, որտեղ դրա ներմուծումն արգելված է:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

3.10. Միասնական անասնաբուժական պահանջներին համապատասխանության անասնաբուժական սերտիֆիկատների ձեւակերպման համար անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) իրականացնելիս՝ ընդունվում են լաբորատոր փորձարկումների (հետազոտությունների) արձանագրություններ, որոնք անցկացվել են անդամ պետության հավատարմագրման ազգային համակարգերում հավատարմագրված լաբորատորիաներում եւ ներառվել Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների ու փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

3.11. Անասնաբուժական սերտիֆիկատների, այլ անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի եւ անասնաբուժական հսկողության բոլոր տեսակների անցկացման ծախսերի ֆինանսավորումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

3.12. Գործունեության սահմանված ոլորտում միջազգային փոխադրումներ իրականացնելիս, ինչպես նաեւ Միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքներ տեղափոխելիս (փոխադրելիս)՝ Միասնական անասնաբուժական պահանջների խախտում կատարելու մեջ մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում այն անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, որի տարածքում հայտնաբերվել է խախտումը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Հայտնաբերված խախտումների վերաբերյալ կազմվում է ակտ՝ համաձայն թիվ 1 հավելվածի ձևի:

3.13. Միության մաքսային տարածքում անասնաբուժության մեջ կիրառման համար դեղամիջոցների եւ կերային հավելումների ներմուծումը, փոխադրումն ու օգտագործումն իրականացվում են դրանց՝ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից գրանցման պայմանով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Անդամ պետությունները փոխադարձաբար ճանաչում են անասնաբուժության մեջ կիրառվող դեղամիջոցների եւ կերային հավելումների գրանցման արդյունքները:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Դեղամիջոցների, ինչպես նաեւ քիմիական եւ մանրէաբանական սինթետիկ կերային հավելումների ներմուծումը, փոխադրումն իրականացվում են առանց անասնաբուժական սերտիֆիկատի՝ պատրաստող ձեռնարկության կողմից տրվող՝ դրանց որակն ու անվտանգությունը հաստատող փաստաթղթի ուղեկցությամբ:

3.14. Ներմուծելիս, արտահանելիս եւ տարանցելիս՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ կիրառվում են հսկողության հետեւյալ տեսակները՝ փաստաթղթային, ֆիզիկական, լաբորատոր:

3.14.1. Փաստաթղթային հսկողության դեպքում ստուգվում են՝

- հսկողության վերցված ապրանքների անվտանգությունը հաստատող փաստաթղթերը,
- հսկողության վերցված ապրանքների ներմուծման (արտահանման) կամ տարանցման թույլտվությունների առկայությունը,

- տրված փաստաթղթերի բովանդակության՝ Միասնական անասնաբուժական պահանջներին համապատասխանությունը:

3.14.2. Ֆիզիկական հսկողությունն իր մեջ ներառում է՝

- հսկողության վերցված ապրանքների զննում եւ կենդանիների տեսազննում,

- ներկայացված փաստաթղթերում նշված տվյալներին՝ հսկողության վերցված ապրանքների համապատասխանության ստուգում՝ ուղեկցող փաստաթղթերում չնշված հսկողության վերցված ապրանքների առկայությունը եւ անհամատեղելի ապրանքների համատեղ տեղափոխումը բացառելու նպատակով,

- տրանսպորտային միջոցի՝ հսկողության վերցված ապրանքների փոխադրման համար անհրաժեշտ սահմանված անասնաբուժասանիտարական պահանջներին համապատասխանության հսկողություն,

- տեղափոխման (փոխադրման) պայմանների եւ ռեժիմի հսկողություն,

- սահմանված պահանջներին փաթեթվածքի եւ դրոշմավորման համապատասխանության հսկողություն:

Միության տարածքի սահմաններում կենդանիների ներմուծման, արտահանման, տարանցման եւ տեղափոխման (փոխադրման) ժամանակ ջրելատեղի եւ կերակրման կետերում դրանց յուրաքանչյուր խմբաքանակ ենթակա է տեսազննման:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Միության մաքսային սահմանի անցակետում թույլատրվում է տեղափոխվող, հսկողության վերցված ապրանքների հասանելի մասի զննում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Չննության արդյունքներով կազմվում է համապատասխան ակտ՝ համաձայն թիվ 2 հավելվածի ձևի:

3.14.3. Լաբորատոր հսկողությունն իրականացվում է հետազոտությունների անցկացման միջոցով այդ նպատակներով հավատարմագրված լաբորատորիաներում՝ տեղափոխվող հսկողության վերցված ապրանքների զննման ժամանակ զգայորոշման (օրգանոլեպտիկ) տեսանելի փոփոխությունների բացահայտման եւ կենդանիների վարակիչ հիվանդությունների բացառման դեպքերում:

Լաբորատոր հետազոտությունների համար փորձանմուշների (նմուշների) վերցնումն իրականացվում է «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթին համապատասխան:

3.15. ՍԱՀԿ պաշտոնատար անձի կողմից նշված տեսակների հսկողության իրականացման արդյունքներով հսկողության վերցված ապրանքների նկատմամբ ընդունվում է հետեւյալ որոշումներից որեւէ մեկը՝

- բացթողման մասին,
- տեղաշարժի կասեցման մասին,
- ներմուծումն արգելելու մասին,
- վերադարձի մասին:

Հսկողության վերցված ապրանքի նկատմամբ ընդունված որոշումը ՍԱՀԿ պաշտոնատար անձի կողմից ձեւակերպվում է անասնաբուժական եւ ապրանքաուղեկից փաստաթղթերի վրա համաձայն թիվ 3 հավելվածի ձևի՝ համապատասխան դրոշմակնիքներ դնելու միջոցով՝ Միության մաքսային տարածքի անցակետերում հսկիչ մարմինների փոխգործակցության տեխնոլոգիական սխեմային համապատասխան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

3.16. Հսկողության վերցված ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք թույլատրվում է «Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա օբյեկտների համատեղ ստուգումներ անցկացնելու եւ ապրանքներից (արտադրանքից) փորձանմուշներ (նմուշներ) վերցնելու միասնական կարգի մասին» հիմնադրույթով նախատեսված կարգով Միության մաքսային տարածք ներմուծվող հսկողության վերցված ապրանքների արտադրությունը, վերամշակումն ու (կամ) պահպանումն իրականացնող կազմակերպությունների եւ անձանց ռեեստրում (այսուհետ՝ Միասնական ռեեստր) ներառված արտահանող ձեռնարկություններից:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

3.17. Երրորդ երկրների սահմանակից տարածք գյուղատնտեսական կենդանիների չթույլատրված անցման դեպքերում լիազորված մարմինները ձեռնարկում են կենդանիներին վերադարձնելու միջոցներ կամ այլ միջոցներ՝ պահպանելով Միասնական անասնաբուժական պահանջները:

3.18. Բեռնումից առաջ (բեռնաթափումից հետո), կախված հսկողության վերցված ապրանքի տեսակից եւ տարածքի անասնահամաճարակային վիճակից, տրանսպորտը (երկաթուղային վագոն, սառնավագոնային սեկցիա, կոնտեյներ եւ այլն) ուղարկվում է անասնաբուժասանիտարական մշակման՝ տրամադրելով փաստաթուղթ՝ համաձայն թիվ 4 հավելվածի ձեւի:

3.19. Անդամ պետությունների՝ պետական անասնաբուժական վերահսկողություն իրականացնող լիազորված մարմնի պաշտոնատար անձանց

գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում կատարվել են գործողությունները (անգործությունը):

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

3.20. Լիազորված մարմինների պաշտոնատար անձանց որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով:

**IV. Միության մաքսային տարածքի սահմաններում հսկողության վերցված ապրանքներ տեղափոխելիս (փոխադրելիս) անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

4.1. Միության սահմաններում մի անդամ պետության տարածքից մյուս անդամ պետության տարածք տեղափոխելու (փոխադրելու) դեպքում հսկողության վերցված ապրանքները տեղափոխման (փոխադրման) ամբողջ ընթացքում պետք է ուղեկցվեն անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնատար անձանց կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Հսկողության վերցված ապրանքները մեկ անդամ պետության տարածքի սահմաններում կարող են տեղափոխվել այդ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

4.2. Միության մաքսային տարածքի սահմաններում տրանսպորտի բոլոր տեսակներով հսկողության վերցված ապրանքների տեղափոխման (փոխադրման) ընթացքում անասնաբուժական հսկողությունն իրականացվում է անդամ պետության լիազորված մարմինների կողմից՝ դրանց արտադրման եւ բեռնման ժամանակ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Հսկողության վերցված ապրանքների բեռնումն առանց անասնաբուժական հսկողության իրականացման չի թույլատրվում:

4.3. Կենդանիների նկատմամբ անասնաբուժական հսկողությունն իրականացվում է դրանց բեռնման ժամանակ եւ նշանակման վայրում կենդանիներին ուղարկող տնտեսություններում եւ ստացող տնտեսություններում կարանտինային միջոցառումների պարտադիր անցկացմամբ:

4.4. Անասնաբուժական սերտիֆիկատների ձեւակերպումն իրականացվում է հսկողության վերցված ապրանքների զննման (տեսազննման) արդյունքներով բեռնման եւ տրանսպորտային միջոցի անասնաբուժասանիտարական վիճակի գնահատման ժամանակ՝ հսկողության վերցված ապրանքի ծագման տարածքի անասնահամաճարակային բարեկեցության եւ Միասնական անասնաբուժական պահանջներին դրա համապատասխանության պայմանով:

Միության մաքսային տարածքի սահմաններում հսկողության վերցված ապրանքների տեղափոխման (փոխադրման) ժամանակ լիազորված մարմինների թույլտվությունը չի պահանջվում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

4.5. Անդամ պետություններից մեկի լիազորված մարմնի կողմից տրված՝ ապրանքների անվտանգությունը հաստատող անասնաբուժական



սերտիֆիկատների վերաձեւակերպում եւ այդ նպատակով Միության մաքսային տարածքում արտադրված (աճեցված) հսկողության վերցված ապրանքների կրկնակի լաբորատոր հետազոտություններ (փորձարկումներ) չեն իրականացվում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

4.6. Միության մաքսային տարածքում արտադրված, հսկողության վերցված ապրանքի խմբաքանակի՝ նշանակման վայր ժամանելիս ավելի փոքր խմբաքանակների մասնատման դեպքում անդամ պետության լիազորված մարմինը նոր ստացողների համար բեռնման վայրում ձեւակերպում է լիազորված մարմնի կողմից տրամադրված անասնաբուժական սերտիֆիկատների պատճեններ, որոնցում (թերթի դարձերեսում) ներառվում են հետեւյալ տվյալները՝ անասնաբուժասանիտարական պահանջներին հսկողության վերցված ապրանքների եւ նոր տրանսպորտային միջոցների համապատասխանությունը, տրանսպորտային միջոցի համարը, դրա մեջ հսկողության վերցված, փոխաբեռնված ապրանքների քանակությունը, բեռն ստացողի անվանումն ու գտնվելու վայրը, փոխաբեռնման ամսաթիվը: Այդ տեղեկությունները վավերացվում են լիազորված մարմնի պաշտոնատար անձի ստորագրությամբ եւ կնիքով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Անասնաբուժական սերտիֆիկատի բնօրինակը պահվում է խմբաքանակի մասնատումն անցկացրած կազմակերպությունում:

Միեւնույն ստացողին ուղարկվող խմբաքանակի մասնատման դեպքում անասնաբուժական սերտիֆիկատի բնօրինակն ուղարկվում է առաջին կամ վերջին տրանսպորտային միջոցով:

Այդպիսի գործողությունների մասին տեղեկությունները ներառվում են Միության ինտեգրված տեղեկատվական համակարգում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

**V. Միության մաքսային տարածքից հսկողության վերցված ապրանքներ արտահանելիս անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

5.1. Միության մաքսային տարածքից հսկողության վերցված ապրանքների արտահանման թույլտվության տրամադրումը եւ անասնաբուժական սերտիֆիկատների ձեւակերպումն իրականացվում է լիազորված մարմնի կողմից՝ համապատասխան անդամ պետության օրենսդրության համաձայն:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

5.2. Արտահանողը պարտավոր է հետեւել ներմուծող երկրի անասնաբուժական օրենսդրության պահանջներին:

**VI. Միության մաքսային տարածք հսկողության վերցված ապրանքներ  
ներմուծելիս անասնաբուժական հսկողության  
(վերահսկողության) իրականացման կարգ**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

6.1. Հսկողության վերցված ապրանքների ներմուծումը Միության մաքսային տարածք իրականացվում է այն անդամ պետության կողմից տրված ներմուծման թույլտվության առկայության դեպքում, որի տարածք ներմուծվում է հսկողության վերցված ապրանքը: Նշված թույլտվության գործողության ժամկետը կազմում է մեկ օրացուցային տարի՝ ներմուծման թույլտվության մեջ սահմանված ծավալներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների  
խմբագրությամբ)***

6.2. Թույլտվությունների տրամադրումն իրականացվում է՝ հաշվի առնելով հսկողության վերցված ապրանքների արտադրման (պահպանման) վայրում անասնահամաճարակային իրավիճակը, ինչպես նաև Միասնական ռեեստրում ձեռնարկության կամ անձի առկայության պայմանով:

6.3. Հսկողության վերցված ապրանքների յուրաքանչյուր խմբաքանակ ներմուծվում է Միության մաքսային տարածք սույն հիմնադրույթի 6.1 ենթակետում նշված թույլտվության եւ (կամ) հսկողության վերցված ապրանքն արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից տրամադրված անասնաբուժական սերտիֆիկատի առկայության դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների  
խմբագրությամբ)***

6.4. Արտահանող երկրի անասնաբուժական սերտիֆիկատով ուղեկցվող հսկողության վերցված ապրանքների խմբաքանակի մի քանի ստացողների հասցեներով ուղարկվող խմբաքանակների մասնատման դեպքում ապրանքի փոխաբեռնման երկրի լիազորված կամ իրավասու մարմնի կողմից ձեակերպվում են արտահանող պետության անասնաբուժական սերտիֆիկատի պատճենները, որոնցում (թերթի դարձերեսին) ներառվում են հետեյալ տվյալները՝ անասնաբուժասանիտարական պահանջներին բեռի եւ նոր տրանսպորտային միջոցի համապատասխանությունը, տրանսպորտային միջոցի համարը, դրա մեջ հսկողության վերցված, փոխաբեռնված ապրանքի քանակությունը, ապրանքն ստացողի անվանումն ու հասցեն, փոխաբեռնման ամսաթիվը: Այդ տեղեկությունները վավերացվում են անասնաբուժական սերտիֆիկատների պատճենները ձեակերպած լիազորված կամ իրավասու մարմնի կնիքով եւ ստորագրությամբ:

Նշված պատճենը կցվում է մյուս ապրանքաուղեկից փաստաթղթերին:

Անասնաբուժական սերտիֆիկատի բնօրինակը պահվում է խմբաքանակի մասնատումն անցկացրած կազմակերպությունում:

6.5. Փաստաթղթային հսկողության ավարտից հետո անցկացվում է հսկողության վերցված ապրանքների զննում: Անցակետով տեղափոխվող հսկողության վերցված ապրանքների զննումն իրականացվում է զննման ենթակա մսի կամ ձկան՝ հսկողության վերցված ապրանքի (արտադրանքի) տասը խմբաքանակից ոչ ավելի, քան մեկ խմբաքանակը, եւ հսկողության վերցված այլ ապրանքների քսան խմբաքանակից մեկ խմբաքանակը՝ ըստ առանձին վերցված երկրի, իսկ կենդանիների ներմուծման դեպքում իրականացվում է յուրաքանչյուր խմբաքանակի տեսազննում: Ընդ որում, կենդանիների նույնականացման համարները (դաջվածքներ, չիպեր, ականջապիտակներ, դրոշմներ եւ այլն) համեմատվում են անասնաբուժական սերտիֆիկատում նշվածների հետ:

Հսկողության վերցված ապրանքի զննումն իրականացնելու գործընթացում անասնաբուժասանիտարական պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում հետագայում անցկացվում է պատրաստող ձեռնարկության հսկողության վերցված ապրանքներով բեռնված հինգ անընդմեջ տրանսպորտային միավորների զննում:

6.7. Տեղափոխվող (փոխադրվող) հսկողության վերցված ապրանքների զննման ընթացքում տեսանելի փոփոխությունների հայտնաբերման դեպքում սույն հիմնադրույթի 3.14.3 ենթակետին համապատասխան, իրականացվում է լաբորատոր հսկողություն:

6.8. Սույն հիմնադրույթի 3.15 ենթակետի համաձայն՝ անասնաբուժական հսկողության արդյունքներով ընդունվում է համապատասխան որոշում, եւ ուղեկցող փաստաթղթերի վրա դրվում են դրոշմակնիքներ՝ համաձայն թիվ 3 հավելվածի ձեւի՝ «Ներմուծումը թույլատրված է», «Ներկայացնել անասնաբուժական վերահսկողության», «Ներմուծումն արգելված է» կամ «Ապրանքի վերադարձ», որից հետո ՍԱՀԿ պաշտոնատար անձը վավերացնում է դրանք կնիքով եւ ստորագրությամբ՝ նշելով իր ազգանունը եւ անվան սկզբնատառերը:

Ապրանքի վերադարձի մասին որոշում ընդունելու դեպքում ձեւակերպվում են փաստաթղթեր՝ համաձայն թիվ 5 եւ թիվ 6 հավելվածների ձեւերի:

6.9. Բոլոր անհրաժեշտ տվյալները գրանցվում են անցակետով հսկողության վերցված ապրանքների տեղափոխման գրանցամատյանում՝ համաձայն թիվ 7 հավելվածի ձեւի, եւ ներառվում են էլեկտրոնային հաշվառման համակարգում (դրա ներդրմանը զուգընթաց):

6.10. Անցակետերում հսկողության ավարտից հետո հսկողության վերցված ապրանքներն ուղարկվում են նշանակման (առաքման) վայրեր, որտեղ անցկացվում է անասնաբուժական հսկողություն՝ հսկողության վերցված ապրանքի ամբողջական զննմամբ: Անասնաբուժական հսկողության ավարտից

հետո արտահանող երկրի անասնաբուժական սերտիֆիկատը վերաձեւակերպվում է Միության անասնաբուժական սերտիֆիկատի, եւ ուղեկցող փաստաթղթերի վրա դրվում են դրոշմակնիքներ՝ համաձայն թիվ 3 հավելվածի ձեւի՝ «Բացթողումը թույլատրված է» կամ «Բացթողումն արգելված է»:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

6.11. Միության մաքսային տարածք հսկողության վերցված ապրանքներ ներմուծելիս՝ ներմուծողը պարտավոր է հետեւել Միության իրավունքի մաս կազմող ակտերով սահմանված պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

6.12. Ծովային անցակետերում հսկողության վերցված ապրանքների ձեւակերպման առանձնահատկությունները:

6.12.1. Հսկողության վերցված ապրանքների նավամբարային խմբաքանակի ստացման դեպքում:

ՍԱՀԿ պաշտոնատար անձը անասնաբուժական սերտիֆիկատը ձեւակերպում է մեկ ստացողի հասցեին ստացված հսկողության վերցված ապրանքների նավամբարային ամբողջ խմբաքանակի համար:

Ջրային տրանսպորտային միջոցից բեռնաթափման ընթացքում իրականացվում է հսկողության վերցված ապրանքի զննում, հսկվում է բեռնման ներկայացված տրանսպորտի (ավտոտրանսպորտ, վագոններ եւ այլն) անասնաբուժասանիտարական վիճակը:

Ապրանքի նավամբարային խմբաքանակի բեռնաթափումը թույլատրվում է ՍԱՀԿ պաշտոնատար անձի հսկողության ներքո նավամատույցի, էստակադի, բեռնման-բեռնաթափման գույքի ախտահանումից հետո:

6.12.2. Հսկողության վերցված ապրանքների՝ կոնտեյներներով ստացման դեպքում:

ՍԱՀԿ պաշտոնատար անձը պարտավոր է ջրային տրանսպորտային միջոցի նավապետից ստանալ հետևյալ փաստաթղթերը՝

- օվկիանոսային կոնոսամենտի պատճենը,
- ֆիդերային կոնոսամենտը (անասնաբուժական սերտիֆիկատի համարի, ապրանքն ստացողի, ապրանքն ուղարկողի, ապրանքի անվանման, դրա քանակի եւ քաշի նշմամբ),
- ընդհանուր հայտարարագիրը:

6.12.3. Ծովային տրանսպորտով Միության մաքսային տարածք հսկողության վերցված ապրանքի ներմուծման դեպքում մսի (տավարի միս, խոզի միս, ոչխարի միս, ձիու միս, թռչնամիս) եւ ձկան նկատմամբ անասնաբուժական հսկողության ընթացակարգն իրականացվում է միայն համաձայն թիվ 8 հավելվածի ձեռով համապատասխան բեռի անասնաբուժական սերտիֆիկատի տրամադրման մասին նախնական այն ծանուցումը ստանալուց հետո, որն ուղարկվել է անդամ պետությունների լիազորված մարմիններին արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից էլեկտրոնային փոստի, համապատասխան վեբ-ձեւի լրացման կամ այլ միջոցով, որը համաձայնեցվել է արտահանող երկրի իրավասու մարմնի եւ անդամ պետության լիազորված մարմնի կողմից:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 85, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

**VII. Միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքներ  
տարանցելիս անասնաբուժական հսկողության  
(վերահսկողության) իրականացման կարգ**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

7.1. Կենդանիների եւ կենդանական ծագման հումքի տարանցումը Միության մաքսային սահմանով իրականացվում է այն անդամ պետությունների կողմից տրված տարանցման թույլտվությամբ, որի անցակետով նախատեսվում է Միության մաքսային սահմանի հատումը ներմուծման ժամանակ: Թույլտվության մեջ նշվում է երթուղին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների  
խմբագրությամբ)***

Հսկողության վերցված այլ տեսակի ապրանքների տարանցումն իրականացվում է առանց անդամ պետությունների լիազորված մարմինների թույլտվության:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի  
նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Անդամ պետության լիազորված մարմնի կողմից Միության մաքսային տարածքով հսկողության վերցված ապրանքների տարանցման թույլտվության ստացումը մտնում է հսկողության վերցված ապրանքները տիրապետողի պարտականությունների մեջ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների  
խմբագրությամբ)***



7.2. Անցակետերում հսկողության վերցված ապրանքների անասնաբուժական հսկողությունն իրականացվում է ապրանքատրանսպորտային բեռնագրի եւ (կամ) անասնաբուժական սերտիֆիկատը ներկայացնելուց հետո:

7.3. Փաստաթղթային հսկողությունն ավարտելուց հետո իրականացվում է կենդանիների անասնաբուժական տեսազննում, ընդ որում՝ կենդանիների նույնականացման համարները (դաջվածքներ, չիպեր, ականջապիտակներ, դրոշմներ եւ այլն) համեմատվում են անասնաբուժական սերտիֆիկատում նշված համարների հետ, ստուգվում են փոխադրման պայմանները, կենդանիների վիճակը եւ դրանց հետագա տեղափոխման հնարավորությունը:

Միության մաքսային տարածքով հսկողության վերցված այլ ապրանքների տարանցումն իրականացվում է առանց զննման:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Հսկողության վերցված ապրանքների (բացառությամբ կենդանիների) զննումը տարանցման ժամանակ անցկացվում է անցակետում միայն հսկողության պետական մարմինների որոշմամբ կամ հայտագրվածին՝ հսկողության վերցված ապրանքի անհամապատասխանության վերաբերյալ տեղեկության առկայության դեպքում:

7.4. Հսկողության արդյունքներով ՍԱՀԿ պաշտոնատար անձն ընդունում է որոշում եւ, Միության մաքսային տարածք ներմուծման ժամանակ ապրանքաուղեկից փաստաթղթերի եւ անասնաբուժական սերտիֆիկատի վրա, 3-րդ հավելվածի ձեւի համաձայն, դնում է դրոշմակնիք՝ «Տարանցումը թույլատրված է» կամ «Տարանցումն արգելված է», իսկ Միության մաքսային տարածքից արտահանման կետում՝ «Տարանցումն ավարտված է» դրոշմակնիք, որից հետո այն վավերացնում է կնիքով եւ ստորագրությամբ՝ նշելով իր ազգանունը եւ անվան սկզբնատառերը:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

7.5. Բոլոր անհրաժեշտ տվյալները գրանցվում են տարանցիկ փոխադրումների գրանցամատյանում՝ համաձայն թիվ 9 հավելվածի ձևի, եւ ներառվում են էլեկտրոնային հաշվառման համակարգում (դրա ներդրմանը զուգընթաց):

7.6. Հսկողության վերցված ապրանքները տիրապետողը, որն ստացել է տվյալ ապրանքների Միության մաքսային տարածքով տարանցման թույլտվություն, պարտավոր է հետեւել սույն բաժնի 7.1 - 7.3 կետերում նշված պահանջներին:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 724 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

7.7. Երրորդ պետություններով (անդամ պետությունների սահմաններից դուրս) տարանցման թույլտվության ստացումը հսկողության վերցված ապրանքը տիրապետողի կողմից իրականացվում է նախապես:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

**VIII. Պետական սեփականություն դարձրած՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ**

8.1. Պետական սեփականություն դարձրած՝ հսկողության վերցված բոլոր ապրանքները պարտադիր կարգով ենթակա են անասնաբուժական հսկողության:

8.2. Սույն հիմնադրույթի 8.1 ենթակետում նշված հսկողության վերցված ապրանքների հետագա օգտագործման հնարավորության մասին որոշումն ընդունվում է անդամ պետության օրենսդրության համաձայն՝ անասնաբուժության ոլորտում լիազորված անձի կողմից՝ հսկողության վերցված ապրանքների արգելապահումը եւ (կամ) առգրավումն իրականացրած անդամ պետության պետական մարմնի գրավոր դիմումով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

**IX. Միասնական անասնաբուժական պահանջներին անհամապատասխանության հայտնաբերման պատճառով տեղաշարժը ժամանակավորապես դադարեցված՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ**

9.1. Հսկողության վերցված ապրանքի տեղաշարժը կասեցրած անդամ պետության լիազորված մարմնի պաշտոնատար անձը, ապրանքի հետագա տեղաշարժի (վերադարձի) վերաբերյալ որոշում չկայացնելու դեպքում, պարտավոր է 24 ժամվա ընթացքում դրա մասին տեղեկացնել անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձին՝ նշելով հսկողության վերցված ապրանքը տիրապետողին, նշանակման վայրը, արտահանող երկիրը, անասնաբուժական

սերտիֆիկատի (կամ ապրանքի անվտանգությունը հաստատող այլ փաստաթղթի) համարը, տրանսպորտային միջոցի տեսակը եւ դրա գրանցման համարը, չվերթը, հսկողության վերցված ապրանքի տեղաշարժի կասեցման պատճառները՝ համաձայն թիվ 11 հավելվածի, էլեկտրոնային ձեւով՝ անդամ պետության լիազորված մարմնի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Ընդ որում, համաձայն թիվ 1 հավելվածի ձեւի, ձեւակերպվում է հսկողության վերցված ապրանքների փոխադրման ժամանակ անասնաբուժասանիտարական պահանջների խախտման մասին ակտը, որը հանձնվում է ապրանքը տիրապետողին (բեռնառաքողին), անդամ պետության պետական հսկողության այլ մարմինների: Տեղաշարժը կասեցված, հսկողության վերցված ապրանքների վերաբերյալ տեղեկությունը, համաձայն թիվ 10 հավելվածի ձեւի, մուտքագրվում է գրանցամատյանում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Տեղաշարժը կասեցված, հսկողության վերցված ապրանքների հետագա տեղափոխման մասին որոշումն ընդունվում է անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձի կողմից՝ 72 ժամվա ընթացքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

9.2. Անդամ պետության ազգային օրենսդրությանը համապատասխան՝ անասնաբուժության ոլորտում լիազորված պաշտոնատար անձի՝ տեղաշարժը կասեցված, հսկողության վերցված ապրանքների հետագա տեղափոխման

(փոխադրման) մասին որոշումն ստանալուց հետո, նման ապրանքների նկատմամբ բոլոր գործողությունները պետք է կատարվեն անդամ պետության լիազորված մարմնի պաշտոնատար անձանց ներկայությամբ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

9.3. Հսկողության վերցված այն ապրանքը, որը տիրապետողը չի կարող հաստատել դրա ծագումը՝ անասնաբուժասանիտարական առումով անվտանգությունը հավաստող փաստաթղթերով, ենթակա է ուտիլիզացման (վերացման)՝ առանց նման ապրանքը տիրապետողի հաշվին փորձաքննություն անցկացնելու կամ վերադարձվում է բեռն ուղարկողին (արտահանողին):

9.4. Ներմուծումն արգելված, հսկողության վերցված ապրանքները ենթակա են արտահանման՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Արտահանումն իրականացվում է հսկողության վերցված ապրանքները տիրապետողի կողմից՝ իր հաշվին եւ հետեւելով Միության իրավունքի մաս կազմող ակտերով սահմանված պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

9.5. Եթե անհնար է Միասնական անասնաբուժական պահանջներին չհամապատասխանող, հսկողության վերցված ապրանքների՝ սահմանված ժամկետում Միության մաքսային տարածքի սահմաններից արտահանումն այն անցակետով, որով իրականացվել է հսկողության վերցված ապրանքի տեղափոխումը Միության մաքսային տարածք, ապա այդպիսի ապրանքները, անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ուտիլիզացվում կամ ոչնչացվում են:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

**Մ. Ֆիզիկական անձանց ձեռքի ծանրոցում եւ ուղեբեռում, ինչպես նաեւ փոստային առաքանիներով Միության մաքսային տարածք հսկողության վերցված ապրանքների ներմուծման ժամանակ անասնաբուժական հսկողության (վերահսկողության) իրականացման կարգ**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

10.1. Միության մաքսային տարածքը կենդանիների վարակիչ, այդ թվում՝ մարդու եւ կենդանիների համար ընդհանուր, հիվանդությունների հարուցիչների ներմուծումից պաշտպանելու եւ անասնաբուժասանիտարական առումով վտանգավոր արտադրանքի շրջանառությունը թույլ չտալու նպատակով անդամ պետությունների լիազորված մարմինները Միության մաքսային սահմանի անցակետերում՝ ներառյալ միջազգային փոստային փոխանակման հաստատությունները (վայրերը), կազմակերպում են երրորդ երկրներից առանց ապրանքն ուղարկող երկրի թույլտվության եւ անասնաբուժական սերտիֆիկատի ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման համար ձեռքի ծանրոցում, ուղեբեռում եւ փոստային առաքումներում հսկողության վերցված ապրանքների ներմուծումը թույլ չտալու աշխատանքը, բացառությամբ մեկ ֆիզիկական անձի հաշվարկով մինչեւ 5 կիլոգրամը ներառյալ՝ գործարանային փաթեթավորմամբ կենդանական ծագման պատրաստի արտադրանքի ներմուծումը՝ նշված ապրանքն արտադրող երկրի եւ արտահանման երկրի անասնահամաճարակային տեսանկյունից բարեկեցության պայմանով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

10.2. Հսկողության վերցված այնպիսի ապրանքների ուտիլիզացումն (ոչնչացումը), որոնց վերադարձը ուղարկող երկիր անհնար է, իրականացվում է անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

## **XI. Եզրափակիչ եւ անցումային դրույթներ**

11.1. Սույն հիմնադրույթում փոփոխություններ եւ լրացումներ կատարվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշման հիման վրա:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

11.2. Անդամ պետությունների լիազորված մարմինների տեխնիկական պատրաստվածությանը համապատասխան՝ հսկողության վերցված ապրանքների անասնաբուժական սերտիֆիկատների ձեւակերպումը (վերաձեւակերպումը) եւ տրամադրումն իրականացվում են միասնական էլեկտրոնային համակարգի կիրառմամբ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

11.3. Մինչեւ Միասնական ռեեստրի ձեւավորումը՝ հսկողության վերցված ապրանքների ներմուծում թույլատրող փաստաթղթեր տալու եւ Միության մաքսային սահմանին անասնաբուժական հսկողություն իրականացնելու հարցերում անդամ պետությունների լիազորված մարմինները պետք է առաջնորդվեն անդամ պետությունների լիազորված մարմինների պաշտոնական կայքերում տեղադրված՝ օտարերկրյա այն պետությունների ձեռնարկությունների ցանկերով, որոնցից թույլատրվում է հսկողության վերցված ապրանքների ներմուծումը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Եթե հետեւյալ ապրանքների՝ կենդանիներ, գենետիկական նյութ, մեղվաբուծական մթերքներ, կենդանական ծագման հումք (մորթեր, բուրդ, մուշտակամորթ հումք, փետուր եւ այլն), կենդանական ծագման սննդային հավելումներ, բուսական ծագման կեր, կոմպոզիտային ապրանքներ, դոնդողանյութ եւ այլն, արտադրությունը, վերամշակումը եւ (կամ) պահպանումն իրականացնում են այնպիսի կազմակերպություններ ու անձինք, որոնք ընդգրկված չեն նշված ցանկերում, Միության մաքսային տարածք ներմուծումն իրականացվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրված թույլտվությամբ՝ հաշվի առնելով անասնահամաճարակային վիճակը:

***(11.3 կերն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշմամբ, Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 22-ի թիվ 724 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի որոշման խմբագրությամբ)***



**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմին

\_\_\_\_\_

« \_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_ թ.

Հասցե \_\_\_\_\_

հեռախոս \_\_\_\_\_

Էլ.փոստի հասցե \_\_\_\_\_

**ԱԿՏ ԹԻՎ**

**պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների  
փոխադրման ժամանակ Միասնական անասնաբուժասանիտարական  
պահանջների խախտման մասին**

Սույն ակտը կազմված է

\_\_\_\_\_

(պաշտոնը, Ա.Ա.Հ.)

անձի ներկայությամբ

---

---

բեռն ստացողի (բեռնառաքողի) ներկայացուցչի

---

---

գործող \_\_\_\_\_ թվականի թիվ \_\_\_\_\_ լիազորագրի հիման վրա  
առ այն, որ \_\_\_\_\_

ժամը \_\_\_\_\_ ըստ «\_\_» \_\_\_\_\_ թ.

\_\_\_\_\_ -ին տրված թիվ \_\_\_\_\_ ապրանքատրանսպորտային փաստաթղթով  
ժամանել է \_\_\_\_\_ ապրանքը  
բեռի անվանումը

\_\_\_\_\_ քանակությամբ \_\_\_\_\_ տեղով (գլխաքանակով) \_\_\_\_\_ քաշով

Անասնաբուժական ուղեկցող փաստաթուղթ թիվ \_\_\_\_\_

«\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ.

տրված է \_\_\_\_\_  
(արտահանող երկիրը, կազմակերպությունը, պաշտոնը, Ա.Ա.<.)

Ուղարկման վայր (երկիր) \_\_\_\_\_

Ուղարկող \_\_\_\_\_

\_\_\_\_\_ հասցեով ուղարկվող

(բեռի պահպանման կամ վերամշակման, կարանտինացման եւ այլնի համար  
նախատեսված տնտեսավարող սուբյեկտի անվանումը, հասցեն)

Պարզվեց՝

---

---

---

---

---

---

Անասնաբուժության ոլորտում Եվրասիական տնտեսական միության իրավունքի  
մաս կազմող ակտերի հիման վրա ընդունված որոշումը

Լիազորված մարմնի ստորաբաժանման ներկայացուցիչ \_\_\_\_\_

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ներկա գտնվող պաշտոնատար անձինք \_\_\_\_\_

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչը (ապրանքը տիրապետողը)

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ակտը կազմվում է երեք օրինակից:

Ստորագրվում է անասնաբույժի եւ ակտի կազմման համար հիմք  
հանդիսացած հանգամանքների հավաստմանը մասնակցող անձանց (երկուսից ոչ  
պակաս) կողմից:

Կ.Տ.

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմին

\_\_\_\_\_

Հասցե \_\_\_\_\_

Հեռախոս \_\_\_\_\_

Էլ.փոստի հասցե \_\_\_\_\_

**Անասնաբուժասանիտարական զննման ակտ**

**թիվ**

«\_\_\_» \_\_\_\_\_ 20 \_\_\_ թ.

Սույն ակտը կազմված է

\_\_\_\_\_

(պաշտոնը, Ա.Ա.Հ.)

ներկայությամբ

\_\_\_\_\_

(նշել անձի Ա.Ա.Հ.-ն եւ պաշտոնը)

Ապրանքը տիրապետողի կամ ապրանքը տիրապետողի ներկայացուցչի, որը հանդես է գալիս լիազորագրի հիման վրա՝ \_\_\_\_\_  
\_\_\_\_\_ -ին տրված թիվ \_\_\_\_\_

առ այն, որ                                  ժամը                                  ըոպ.                                  «    »                                  թ.

Անցկացման վայր \_\_\_\_\_

Անցկացվել է ապրանքի զննում (տեսագննում)

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

ապրանքը ժամանել է ըստ \_\_\_\_\_ին տրված  
թիվ \_\_\_\_\_

անասնաբուժական եւ ապրանքատրանսպորտային փաստաթղթերի \_\_\_\_\_

\_\_\_\_\_ քանակությամբ \_\_\_\_\_ տեղով (գլխաքանակով) \_\_\_\_\_ քաշով

Տրանսպորտի տեսակը

---

Ծագման (ուղարկման) երկիր \_\_\_\_\_

Ուղարկող \_\_\_\_\_

\_\_\_\_\_ հասցեով ուղարկվող

(բեռի պահպանման կամ վերամշակման, կարանտինացման եւ այլնի համար նախատեսված տնտեսավարող սուբյեկտի անվանումը, հասցեն)

Պարզվեց հետեւյալը՝

Ապրանքի համապատասխանությունը ապրանքաուղեկից փաստաթղթերին

\_\_\_\_\_ (համապատասխանում է/չի համապատասխանում)

Տրանսպորտային միջոցի (կոնտեյների) ներսի ջերմաստիճան

\_\_\_\_\_ (համապատասխանում է/չի համապատասխանում)

Ապրանքի ջերմաստիճան

(կենդանիների ջերմաչափում) \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (համապատասխանում է/չի համապատասխանում)

Զգայորոշման ցուցանիշներ \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (համապատասխանում է/չի համապատասխանում)

Արտադրության ամսաթիվը \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (համապատասխանում է/չի համապատասխանում)

Իրացման

(պահպանման) ժամկետ \_\_\_\_\_

Փաթեթավորումը

\_\_\_\_\_ (համապատասխանում է/չի համապատասխանում)

Դրոշմավորումը \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (համապատասխանում է/չի համապատասխանում)

Տրանսպորտային միջոցի (կոնտեյների) անասնաբուժասանիտարական վիճակը

---

(համապատասխանում է/չի համապատասխանում)

Այլ տեղեկություններ (կապարակնիքի համարը, կենդանիների մոտ հիվանդության կլինիկական նշանների բացակայություն, կենդանիների դիերի առկայություն, կողմնակի ներդրվածքներ եւ այլն)

---

Լիազորված մարմնի ստորաբաժանման ներկայացուցիչ \_\_\_\_\_

---

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

---

Ներկա գտնվող պաշտոնատար անձինք \_\_\_\_\_

---

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Տնտեսավարող սուբյեկտի ներկայացուցիչ

(ապրանքը տիրապետողը)

---

(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Ակտը կազմվում է երեք օրինակից

Կ.Տ./դրոշմակնիք

**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ**

**ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ**

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)**

1.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Բացթողումը թույլատրված է Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

2.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Բացթողումը արգելված է Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	



3.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Ներմուծումը թույլատրված է Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

4.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Ներմուծումը արգելված է Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

5.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Տարանցումը թույլատրված է Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

6.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Տարանցումը արգելված է Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

7.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն <b>Բեռի վերադարձ</b>		
Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

8.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Ներկայացնել անասնաբուժական վերահսկողության		
Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

9.

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Բեռնաթափում ժամանակավոր պահպանման պահեստներում (ԺՊՊ) (Մաքսային պահեստներ/ՄՊ)		
Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

BY	ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆ	01 001
Անասնաբուժական վերահսկողություն Տարանցումն ավարտված է		
Պետական անասնաբուժական տեսուչ _____		
ամսաթիվ	ստորագրություն	

## ԿԻՐԱՌՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Դրոշմակնիքների չափսերը՝ 60 մմ x 30 մմ:

Անասնաբուժական վերահսկողության դրոշմակնիքների պատրաստման ժամանակ օգտագործվող պայմանական նշաններ՝

Վերին աջ անկյունում նշվում է՝ տարածաշրջանի ծածկագիրը եւ սահմանային անասնաբուժական կետի եռանիշ ծածկագիրը, որը տեղակայվում է տարածաշրջանի ծածկագրի ներքեում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշման խմբագրությամբ)***

Ձախ վերին անկյունում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների պայմանական նշաններից մեկը՝ AM, BY, KZ, KG, RU:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 1. «Բացթողումը թույլատրված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա ամբողջական մաքսային ձեւակերպման վայրերում Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) համապատասխանության դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 2. «Բացթողումն արգելված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա ամբողջական մաքսային ձեւակերպման վայրերում Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) անհամապատասխանության դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 3. «Ներմուծումը թույլատրված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանի անցակետերում ներմուծման թույլտվության առկայության եւ Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) համապատասխանության դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 4. «Ներմուծումն արգելված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերում երկրի լիազորված մարմնի ներմուծման թույլտվության բացակայության կամ Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) անհամապատասխանության դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 5. «Տարանցումը թույլատրված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով կենդանիների եւ կենդանական ծագման հումքի տարանցման թույլտվության առկայության, Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) համապատասխանության դեպքում եւ կենդանիների տեսազննման արդյունքներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 6. «Տարանցումն արգելված է»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Մաքսային միության մաքսային սահմանի անցակետերում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով կենդանիների եւ կենդանական ծագման հումքի տարանցման թույլտվության բացակայության, Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական պահանջներին ապրանքի (արտադրանքի) անհամապատասխանության դեպքում կամ կենդանիների տեսազննման արդյունքներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 7. «Բեռի վերադարձ»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Եվրասիական տնտեսական միության անասնաբուժասանիտարական անվտանգության պահանջներին ներմուծվող բեռի անհամապատասխանության դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 8. «Ներկայացնել անասնաբուժական վերահսկողությանը»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերում՝ նշանակման վայրում տրանսպորտային միջոցից ապրանքի բեռնաթափման ժամանակ ամբողջական զննում անցկացնելու վերաբերյալ անցակետերում որոշում ընդունելու դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Դրոշմակնիք 9. «Բեռնաթափում ժամանակավոր պահպանման պահեստներում (ԺՊՊ) (Մաքսային պահեստներ/ՄՊ)»՝ դրվում է ուղեկցող փաստաթղթերի վրա Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի անցակետերում, երբ ապրանքի ձեւակերպման ժամանակ առաջանում են կասկածներ անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի իսկության վերաբերյալ կամ կասկածանքներ ներմուծվող (Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղափոխվող) ապրանքների որակի եւ անվտանգության հարցում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան այլ դրոշմակնիքների կիրառումը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

Դրոշմակնիքի վերին տողում նշվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետության՝ սահմանին եւ փոխադրամիջոցում անասնաբուժական հսկողություն (վերահսկողություն) իրականացնող լիազորված մարմինը:

***(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշմամբ), Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)***

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)**

Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմին

---

Ե.գ. կայարան, բնակավայր, շրջան, օդանավակայան, նավահանգիստ

**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԹԻՎ**

«\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ.

---

նշել տրանսպորտային միջոցը, կոնտեյները՝

ազատված \_\_\_\_\_ բեռնաթափումից հետո

---

բեռի տեսակը

ուղարկվում է անասնաբուժասանիտարական մշակման՝ ըստ \_\_\_\_\_  
կատեգորիայի, ախտահանման-վլացման կայան (ախտահանման-վլացման կետ,  
սանիտարական տարածք) (նշել պահանջվողը):

---

Ե.գ. կայարան, օդանավակայան, նավահանգիստ, նշանակման այլ կետեր

Լիազորված պաշտոնատար անձ

---

Ստորագրություն,

Ա. Ա. Հ.

Կ.Տ.

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)**

**Բեռի**

**վերադարձի մասին հայտարարագիր/Non-manipulation declaration<\*>**

Ա. Բեռի նկարագիր/Consignment details

1. Ապրանքի տեսակ/Consignment type

---

2. Ծագման երկիր/Country of origin

---

3. Տրանսպորտային միջոց/Means of transport

---

(վագոնի, ավտոմեքենայի, կոնտեյների համարը, ինքնաթիռի չվերթը, նավի անվանումը/  
the number of railway carriage, truck, container, flight-number, name of the ship)

4. Կապարակնիքի համարը/Seal No \_\_\_\_\_

5. Տեղերի թիվը/Quantity of goods \_\_\_\_\_ Քաշ/Weight \_\_\_\_\_

6. Դրոշմավորում/Labelling \_\_\_\_\_

7. Անասնաբուժական սերտիֆիկատի համար/Veterinary Certificate No \_\_\_\_\_

---



Տրման ամսաթիվ/date of issue \_\_\_\_\_

8. Սերտիֆիկատը տրված է իրավասու մարմնի կողմից / Issued by Competent authority \_\_\_\_\_

9. ԵՄ վերջին երկիր, որտեղից ուղարկված է ապրանքը/Member state in the EU from which consignment last dispatched

\_\_\_\_\_

10. Բեռի համապատասխանությունը ներկայացված փաստաթղթերին/Consignment corresponds to documents presented

\_\_\_\_\_

(այո/ոչ) (yes/no)

11. Տրանսպորտային միջոցի եւ տրանսպորտային փոխադրման ռեժիմի համապատասխանություն/Means of transport and regime of transportation meets the relevant requirements

\_\_\_\_\_

(այո/ոչ) (yes/no)

Բ. Հայտարարություն/Statement

Վերոնշյալ ապրանքը թույլատրված չէ ընդունման \_\_\_\_\_-ում/The consignment mentioned above has been refused acceptance in

ներմուծման ժամանակ Եվրասիական տնտեսական միության հետեւյալ անասնաբուժական պահանջները չկատարելու պատճառով /because it does not meet the following Eurasian economic union <\*> veterinary import requirements:

\_\_\_\_\_

Ես՝ պետական անասնաբույժս, հաստատում եմ, որ վերադարձվող ապրանքը, որն ընդունվել է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք թիվ \_\_\_\_\_ կապարակնիքի տակ,

/The state veterinary inspector, confirm that the returned consignment which entered the customs territory of the Customs union with the seal

No \_\_\_\_\_

չի ենթարկվել որեւէ գործողության, որը փոփոխել է դրա վիճակը՝ ներառյալ տրանսպորտային փոխադրումն ու պահպանումը/has not undergone any handling altering its status including transport and storage.

Տրանսպորտային միջոց, որով ապրանքը վերադարձվում է, կապարակնքված է թիվ \_\_\_\_\_ կապարակնիքով

/The means of transport which contains the returned consignment is resealed with the seal No \_\_\_\_\_

Հայտարարագիրը հաստատող անձի կարգավիճակը/Status of person confirming the declaration

Ա.Ա.Հ. տպատառերով/Name in capital letters \_\_\_\_\_  
Ստորագրությունը/Signature

Պաշտոն/Position \_\_\_\_\_

Իրավասու մարմին/Competent authority \_\_\_\_\_

Ամսաթիվ/Date \_\_\_\_\_

-----  
<\*> Նշված հայտարարագիրը ձեւակերպվում է միայն Եվրոպական միության պետությունների համար:

<\*> Նշել Մաքսային միության մաքսակետը/Indicate the customs entry point in the Customs union

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի  
հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի  
թիվ 93 որոշումների խմբագրությամբ)**

Եվրասիական տնտեսական միության վարչական միավոր

---

Վերադարձի մասին ակտը ձեակերպած լիազորված մարմին

---

«\_\_» \_\_\_\_\_ 20\_\_ թ.

Հասցե \_\_\_\_\_

Հեռախոս \_\_\_\_\_

Էլ.փոստի հասցե \_\_\_\_\_

**ԱԿՏ ԹԻՎ**

**ԲԵՌԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ <\*>**

Իմ՝ անասնաբուժական

տեսուչի կողմից \_\_\_\_\_

(պաշտոնը, Ա.Ա.Հ.)

---

---

բեռն ստացողի ներկայացուցչի, այլ անձանց ներկայությամբ

(ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը, կազմակերպության անվանումը)

Ընդունված է վերադարձի մասին որոշում

(ապրանքի անվանումը, տեղերի քանակը, քաշը)

Ստացված \_\_\_\_\_-ից

(Եվրասիական տնտեսական միության երկրի, տարածաշրջանի անվանումը) (ստացողի անունը եւ հասցեն, հեռախոսահամարը)

Տրանսպորտի տեսակ \_\_\_\_\_  
(տրանսպորտային միջոցի համարը եւ անվանումը)

Ուղեկցող փաստաթղթերով \_\_\_\_\_

(անասնաբուժական սերտիֆիկատը, որակի եւ անվտանգության հավաստագիրը)

Ներմուծման/արտահանման թույլտվությունը, համարը եւ ամսաթիվը

(անհրաժեշտության դեպքում)

Ուղարկող \_\_\_\_\_

Ստացող \_\_\_\_\_

Վերադարձնելու պատճառները

---

---

---

---

---

Կ.Տ.

Ստորագրություններ՝

1. Լիազորված պաշտոնատար անձ

---

2. Բեռն ստացողի ներկայացուցիչ

---

3. Այլ պատասխանատու անձինք

---

Ակտը կազմված է \_\_\_\_\_ օրինակից:

Թիվ \_\_\_\_\_ վերադարձի մասին ակտի 1-ին օրինակը

ստացել է \_\_\_\_\_  
(պաշտոնը, ազգանունը, անունը, հայրանունը)

Թիվ \_\_\_\_\_ վերադարձի մասին ակտի 2-րդ օրինակը

ստացել է \_\_\_\_\_

Թիվ \_\_\_\_\_ վերադարձի մասին ակտի 3-րդ օրինակը

ստացել է \_\_\_\_\_

-----

<\*> Վերադարձի մասին տվյալները ներառվում են բեռի վերադարձն իրականացրած լիազորված մարմնի տեղեկատվական համակարգում:

անցակետով պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա՝  
արտահանման եւ ներմուծման ապրանքների տեղափոխման գրանցամատյան

Համարը՝ ը/կ	Ձեռակերպման ամսաթիվ	Ներմուծող երկիր, կազմակերպության անվանում, հասցե, ստացողի հեռախոսահամար	Արտահանող երկիրը, արտադրողը եւ դրա հասցեն	Ապրանքի անվանումը	Քանակը		Տրանսպորտային միջոցի տեսակ եւ համար
					տեղ	Քաշ/գլխ.	
1	2	3	4	5	6	7	8

Ապրանքատրանսպորտային բեռնագրի համար	Անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի տրամադրման համար եւ ամսաթիվ	Իրավասու մարմնի՝ ներմուծման եւ արտահանման թույլտվության համար	Բժշկի ստորագրություն
	10	11	13

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 85, 2014 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 95, 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշումների խմբագրությամբ)**

**Ծովային տրանսպորտով**

**Եվրասիական տնտեսական միության տարածք մատակարարվող հսկողության վերցված ապրանքների մասին նախնական ծանուցում**

Համարը՝ ը/կ	Անասնաբուժական սերտիֆիկատի համարը	Անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի ձեւակերպման ամսաթիվը	Արտադրանքն արտադրողի անվանումը եւ համարը	Ստացող ընկերություն Եվրասիական տնտեսական միությունում	Տրանսպորտային միջոցը	Կապարակնիքի համարը	Արտադրանքի տեսակը	Ձուտ քաշը (տոննա)	Բեռնառաքման նավահանգիստը	Նշանակման նավահանգիստը

անցակետով տարանցիկ փոխադրումների ժամանակ պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա  
ապրանքների (արտադրանքի) տեղափոխման գրանցամատյան

Համարը՝ ը/կ	Ձեռակերպման ամսաթիվը	Ստացող կազմակերպության անվանումը, հասցեն, հեռախոսահամարը	Ապրանքի անվանումը	Քանակը		Արտահանող երկիրը, արտադրողը եւ դրա հասցեն	Ներմուծող երկիրը	Տրանսպորտային միջոցի տեսակը եւ համարը
				տեղ	Քաշ/գլխ.			
1	2	3	4	5	6	7	8	9



Ապրանքատրանսպորտային բեռնագրի համարը	Անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի տրամադրման համարը եւ ամսաթիվը	Իրավասու մարմնի՝ տարանցման թույլտվության համարը (անհրաժեշտության դեպքում)	Տեսազննման արդյունքները (կենդանիների համար)	Բժշկի ստորագրությունը
10	11	12	13	14

**Անցակետում**

**արգելապահված պետական անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների (արտադրանքի) եւ դրանց վերաբերյալ կայացված որոշումների գրանցամատյան**

Համարը՝ ը/կ	Ապրանքի արգելապահ- ման ամսաթիվը եւ ժամանակը	Ընկերության անվանումը, դրա հասցեն	Հսկողության վերցված ապրանքի տեսակը եւ քանակը՝ (կենդանիներ, ապրանքներ, կերեր եւ այլն)	Արտահանող, ներմուծող երկիրը	Արգելապահման պատճառը	Կիրառված միջոցները՝ պատասխանատու պահպանություն, կարանտինացում, ուտիլիզացում, վերադարձ (հիմքը, ում կողմից է որոշումը կայացված)	Հաղորդագրու-թյունը՝ լիազորված մարմնի ստորաբաժանում (ամսաթիվ, ժամանակ, ով է ընդունել)	Հաղորդագրությունը փոխանցած Պետական անասնաբուժական տեսուչի ստորագրությունը
1	2	3	4	5	6	7	8	9

**Օպերատիվ տեղեկություններ ապրանքների վերաբերյալ, որոնց տեղաշարժը դադարեցվել է**

**Փոփոխող փաստաթղթերի ցանկ**

**(ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշմամբ,**

**Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 23-ի թիվ 93 որոշման խմբագրությամբ)**

Անցակետը կամ այլ վայր	Արգելապահման ամսաթիվը	Տրանսպորտային միջոցը	Արտահանող երկիրը	Ապրանքի քանակը	Ստացողը Եվրասիական տնտեսական միությունում	Արգելապահման պատճառը	Անասանբուժական սերտիֆիկատի (քիմիական կամ միկրոկենսաբանական սինթետիկ արդյունքում ստացված կերային հավելումների եւ դեղամիջոցների համար նախատեսված որակի հավաստագրի) համարը

Հաստատված է

Մաքսային միության հանձնաժողովի

2010 թվականի հունիսի 18-ի

թիվ 317 որոշմամբ

### **ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹ**

**ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ)  
ԵՆԹԱԿԱ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՒ  
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ (ԱՐՏԱԴՐԱՆՔԻ) ՓՈՐՁԱՆՄՈՒՇՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ  
ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

***Ուժը կորցրել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի  
հոկտեմբերի 18-ի թիվ 834 որոշում:***

Հաստատված են

Մաքսային միության հանձնաժողովի

2010 թվականի հունիսի 18-ի

թիվ 317 որոշմամբ

**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ) ԵՆԹԱԿԱ  
ԱՊՐԱՆՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ  
(ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ) ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**Փոփոխող փաստաթղթերի ցանկը**

*(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի  
թիվ 342, 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 455, 2011 թվականի մարտի 2-ի  
թիվ 569, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623, 2011 թվականի հուլիսի 15-ի  
թիվ 726, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830, 2011 թվականի  
դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշումների, Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254,  
2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 274, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի  
թիվ 307, 2013 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 192, 2013 թվականի  
հոկտեմբերի 29-ի թիվ 244, 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 294,  
2014 թվականի փետրվարի 11-ի թիվ 18, 2014 թվականի դեկտեմբերի 24-ի  
թիվ 244, 2015 թվականի հուլիսի 14-ի թիվ 83, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160, 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 14, 2016 թվականի հունիսի 7-ի  
թիվ 63, 2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 34, 2017 թվականի մայիսի 30-ի  
թիվ 60, 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 165 որոշումների  
խմբագրությամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2016 թվականի հունիսի 7-ի թիվ 67 որոշմամբ կատարված  
փոփոխություններով)*

Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա եւ Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (այսուհետ՝ հսկության վերցված ապրանքներ) միասնական ցանկում ընդգրկված ապրանքներին ներկայացվող սույն պահանջները մշակվել են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում կենդանիների, այդ թվում՝ մարդու եւ կենդանիների համար ընդհանուր վարակիչ հիվանդությունների հարուցիչների եւ անասնաբուժասանիտարական տեսանկյունից վտանգավոր՝ կենդանական ծագման ապրանքների առաջացումը, ներմուծումն ու տարածումը չթույլատրելու նպատակով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Սույն փաստաթղթի նպատակներից ելնելով՝ անդամ պետություն տակ ենթադրվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

**Սույն պահանջներում գործածվող եզրույթները**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

«Ռեգիոնալիզացիա»՝ երկրի կամ դրա վարչական տարածքի (հանրապետություն, մարզ, երկրամաս, հող, կայսրություն, նահանգ, գավառ, շրջան եւ այլն) ապահով կամ անապահով լինելը որոշելը՝ անդամ պետության՝ վտանգավոր եւ կարանտինային հիվանդությունների ցանկում ընդգրկված կենդանիների վարակիչ հիվանդությունների, իսկ երրորդ երկրների հսկողության օբյեկտներում՝ սույն պահանջներում նշված հիվանդությունների մասով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Ռեգիոնալիզացիան անցկացվում է Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպության առաջարկություններին համապատասխան (այսուհետ՝ ՄԱԲ (Միջազգային անասնահամաճարակային բյուրո)):

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

«Ձեռնարկություն»՝ հսկողության վերցված օբյեկտ (շենք, կառույց, նավ եւ այլն), որտեղ իրականացվում է կենդանիների սպանդ, ինչպես նաեւ հսկողության վերցված ապրանքների՝ բացառությամբ կենդանիների, արտադրություն, վերամշակում, պահպանում:

«Արհեստական սերմնավորման ձեռնարկություն»՝ գենետիկ նյութի արտադրության, պահպանման, վերամշակման գործունեություն իրականացնող ձեռնարկություն:

«Մթերատու կենդանիներ»՝ սննդի մեջ օգտագործման համար նախատեսված արտադրանք ստանալու համար օգտագործվող կենդանիներ:

«Տնտեսություն»՝ կենդանիներ պահելու համար օգտագործվող շենք (շինություն, կառույց), կենդանաբանական այգի, ֆերմա, կրկես կամ հողամաս:

«Լիազորված մարմիններ»՝ անասնաբուժության բնագավառում գործունեություն իրականացնող՝ անդամ պետության պետական մարմիններ եւ հաստատություններ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

«Սանիտարական սպանդ (stamping out)»՝ լիազորված մարմնի հսկողության ներքո անասնաբուժության բնագավառում անցկացվող համալիր միջոցառումներ, որոնք ներառում են հոտի հիվանդ եւ վարակված կենդանիներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաեւ այլ հոտերի կենդանիների սանիտարական

սպանդ, որոնք կարող էին ուղղակի կամ անուղղակի շփում ունենալ, որն էլ կարող էր հանգեցնել հարուցչի փոխանցմանը: Հիվանդության մեջ կասկածվող բոլոր կենդանիները, անկախ այն բանից, դրանք պատվաստված են, թե ոչ, պետք է ենթարկվեն սանիտարական սպանդի, իսկ դրանց մսեղիքներն օգտահանվեն այրելու, թաղելու կամ այլ եղանակով, որը կերաշխավորի վարակի՝ կենդանիների մսեղիքի կամ սպանդային մթերքի միջոցով չտարածվելը:

***(մասն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշմամբ)***

«Սանիտարական սպանդը (stamping out)»-ը ներառում է մաքրում եւ ախտահանում՝ ՄԱԲ-ի կանոնների ընթացակարգերի համաձայն:

***(մասն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշմամբ)***

### **Ընդհանուր դրույթներ**

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող՝ հսկողության վերցված ապրանքների նկատմամբ մինչեւ Ղազախստանի Հանրապետության՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը միանալը կիրառվում են թիվ 1 հավելվածի համաձայն՝ ցանկի I բաժնով նախատեսված կարգավորման միջոցները, իսկ Ղազախստանի Հանրապետության՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանը միանալուց հետո՝ նշված ցանկի II բաժնով նախատեսված միջոցները:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 294, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

2015 թվականի հուլիսի 1-ից սկսած թիվ 1 հավելվածի II բաժնով նախատեսված միջոցները կիրառվում են հսկողության վերցված ապրանքների



համար Ղազախստանի Հանրապետության տարածքում սպառման համար՝ Ղազախստանի Հանրապետության տարածք ներմուծելու դեպքում:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հուլիսի 14-ի թիվ 83 որոշմամբ)***

Հսկողության վերցված ապրանքների տեղափոխումը մեկ անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք (այսուհետ՝ տեղափոխում անդամ պետությունների միջև) թույլատրվում է մեկ անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք տեղափոխվող ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների եւ անձանց ռեեստրում (այսուհետ՝ Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստր) ներառված՝ հսկողության վերցված ապրանքների արտադրություն, վերամշակում եւ (կամ) պահպանում իրականացնող կազմակերպություններին ու անձանց:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

2 գլխից ոչ ավելի քանակով՝ անձնական օգտագործման համար անդամ պետությունների միջև կենդանիներ տեղափոխող անձինք, ինչպես նաեւ կենդանիների համար դեղամիջոցների արտադրություն եւ (կամ) պահպանում իրականացնող ձեռնարկությունները ենթակա չեն Եվրասիական տնտեսական միության ձեռնարկությունների ռեեստրում ներառմանը:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 14 որոշմամբ. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 165 որոշման խմբագրությամբ)***

Վերը նշված՝ հսկողության վերցված ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծումը եւ անդամ պետությունների միջեւ տեղափոխումն իրականացվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանին եւ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական հսկողություն իրականացնելու միասնական կարգի մասին հիմնադրույթին համապատասխան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք՝ հսկողության վերցված ապրանքների ներմուծումն իրականացվում է այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից տրված ներմուծման թույլտվության առկայության դեպքում, որի տարածք ներմուծվում է հսկողության վերցված ապրանքը, եթե սույն պահանջներով այլ բան նախատեսված չէ: Չի պահանջվում ստանալ անդամ պետությունների լիազորված մարմինների թույլտվությունները Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային տարածքում՝ հսկողության վերցված ապրանքների տեղափոխման դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք՝ հսկողության վերցված ապրանքների ներմուծումը երրորդ երկրներից իրականացվում է ուղարկող երկրի իրավասու մարմնի կողմից տրված անասնաբուժական սերտիֆիկատի առկայության դեպքում, եթե սույն պահանջներով այլ բան նախատեսված չէ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Անդամ պետությունների լիազորված մարմինները կարող են երկկողմանի կարգով երրորդ երկրների իրավասու մարմինների հետ համաձայնեցնել Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային տարածք ներմուծվող՝ հսկողության վերցված ապրանքների անասնաբուժական սերտիֆիկատների ձեւանմուշները:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Հսկողության վերցված ապրանքները մեկ անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք են փոխադրվում (եթե սույն պահանջներով այլ բան նախատեսված չէ) ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատված միասնական ձեւերի՝ անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից տրվող անասնաբուժական սերտիֆիկատի ուղեկցությամբ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող կենդանիները պետք է նույնականացվեն անհատական կամ խմբային եղանակով: Թույլատրվում է չնույնականացված կենդանիների ներմուծումը՝ տնային պայմաններում, հավաքածուներում, կենդանաբանական այգիներում, կրկեսներում պահելու համար՝ որպես փորձարարական կենդանիներ օգտագործելու նպատակով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Երրորդ երկրներից ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող մթերատու կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների

բաղադրիչներ պարունակող կերեր՝ բացառությամբ այն բաղադրիչների, որոնց օգտագործումը թույլատրվում է ՄԱԲ-ի Ցամաքային կենդանիների առողջության կանոններով (այսուհետ՝ ՄԱԲ-ի կանոններով):

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Երրորդ երկրներից ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող մթերատու կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի եւ թիրեոստատիկ պատրաստուկների ազդեցությանը՝ բացառությամբ կանխարգելիչ եւ բուժիչ միջոցառումների:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Կենդանիները երրորդ երկրներից ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում, կախված կենդանիների հիվանդությունների մասով անասնահամաճարակային իրավիճակից այն երկրի վարչական տարածքում (տնտեսությունում), որտեղից իրականացվում է ներմուծումը (տեղափոխումը), ներմուծվող (տեղափոխվող) կենդանիները կարող են պատվաստվել կամ չպատվաստվել սույն պահանջներում նշված կենդանիների հիվանդությունների դեմ: Կենդանիների պատվաստման անհրաժեշտությունը որոշվում է այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից, որի տարածք իրականացվում է կենդանիների ներմուծում, տեղափոխում, եթե սույն պահանջներով այլ բան նախատեսված չէ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Երրորդ երկրներից ներմուծվող կամ անդամ պետությունների միջեւ տեղափոխվող կենդանիները կարանտինացվում են 21 օրից ոչ պակաս ուղարկողի երկրում եւ ստացողի երկրում, եթե ըստ կենդանիների կոնկրետ

տեսակի՝ անասնաբուժական պահանջներով այլ բան նախատեսված չէ: Կարանտինացման անհրաժեշտությունը, տեղողությունը եւ պայմանները սահմանվում են այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից, որի տարածք ծրագրվում է իրականացվել կենդանիների ներմուծումը:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Երրորդ երկրների տարածքում կենդանիների կարանտինացման ժամանակ իրականացվող ախտորոշիչ հետազոտություններն անցկացվում են ՄԱԲ-ի կողմից առաջարկվող մեթոդներով եւ եղանակներով, եթե այլ բան սահմանված չէ այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից, որի տարածք ծրագրվում է իրականացվել կենդանիների ներմուծումը: Եթե կարանտինացման ժամանակահատվածում ախտորոշիչ հետազոտությունների արդյունքներով կենդանիների մոտ ի հայտ գան դրական (շճաբանական, ալերգիկ եւ այլ) ռեակցիաներ, ապա անդամ պետության լիազորված մարմինն իրավունք ունի հրաժարվելու կարանտինացվող կենդանիների ամբողջ խմբաքանակի ներմուծումից կամ կարանտինացվող այն կենդանիների ներմուծումից, որոնց մոտ հայտնաբերվել են այդ ռեակցիաները:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Սույն պահանջներով նախատեսված հիվանդություններից պաշտոնապես զերծ երրորդ երկրներից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք կենդանիների ներմուծման դեպքում այդ կենդանիների ախտորոշիչ հետազոտությունները տվյալ հիվանդությունների մասով կարող են չանցկացվել ուղարկողի երկրում: Այդ մասին որոշումն ընդունվում է այն անդամ պետության լիազորված մարմնի կողմից, որի տարածք իրականացվում է կենդանիների ներմուծումը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Անդամ պետությունների միջև կենդանիներ տեղափոխելիս դրանց կարանտինացման դեպքում ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով: Եթե ուղարկողի երկրի տարածքում հետազոտությունների ընթացքում ստացվել են ախտորոշիչ հետազոտությունների դրական կամ կասկածելի արդյունքներ, ապա այդ մասին անհապաղ տեղեկացվում է ստացողի երկրի լիազորված մարմինը: Եթե ստացման երկրի տարածքում հետազոտությունների ընթացքում ստացվել են ախտորոշիչ հետազոտությունների դրական կամ կասկածելի արդյունքներ, ապա այդ մասին անհապաղ տեղեկացվում է ուղարկողի երկրի իրավասու մարմինը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Կենդանիները կարող են ենթարկվել էկտո-, էնդոմակաբույծների դեմ մշակման, ինչի մասին անասնաբուժական սերտիֆիկատում կատարվում է համապատասխան գրառում:

Երրորդ երկրներից ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջև տեղափոխվող՝ հսկողության վերցված ապրանքներին ներկայացվող պահանջների մասով, որոնք սահմանված չեն սույն պահանջներով, կիրառվում են այն անդամ պետության ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջները, որի տարածք ներմուծվում եւ (կամ) տեղափոխվում է հսկողության վերցված ապրանքը: Եվրասիական տնտեսական միության տարածք կարող են ներմուծվել եւ Եվրասիական տնտեսական միության տարածքով կարող են տեղափոխվել կենդանիների համար այնպիսի դեղամիջոցներ, ախտորոշման համակարգեր, մակաբույծների դեմ կենդանիների մշակման միջոցներ եւ կենդանիների համար կերային հավելումներ, որոնք ընդգրկված են կենդանիների համար գրանցված

դեղամիջոցների, ախտորոշման համակարգերի, մակաբույծների դեմ կենդանիների մշակման միջոցների եւ կենդանիների համար կերային հավելումների ռեեստրում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Հսկողության վերցված ապրանքները երրորդ երկրներից ներմուծելու եւ մեկ անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք տեղափոխելու դեպքում դրանց փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցները պետք է մշակվեն եւ նախապատրաստվեն ուղարկողի երկրում ընդունված կանոններին համապատասխան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

## Գլուխ 1

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

տոհմային եւ արտադրանք ստանալու համար նախատեսված խոշոր եղջերավոր

անասուններ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք

ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխման դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի***

***դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի***

***թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ տոհմային

Եւ արտադրանք ստանալու համար նախատեսված խոշոր եղջերավոր անասուններ, որոնք պատվաստված չեն բրուցեյլոզի, դաբաղի դեմ եւ ծագումով կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից են՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիա՝ երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան նշված հիվանդության աննշան կամ վերահսկվող ռիսկով՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների կոնտագիոզ պլեյրոպնեյմոնիա, վեզիկուլյար ստոմատիտ, բլուտանգ, ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- վարակիչ հանգուցային մաշկաբորբ (դերմատիտից)՝ վերջին 3 տարվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- էնզոոտիկ լեյկոզ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- բրուցեյլոզ, տուբերկուլյոզ եւ պարատուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.



- լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի կանոններով առաջարկվող նյութերի:

Կարանտինի ժամանակ անցկացվում են կենդանիների ախտորոշիչ հետազոտություններ բրուցելյոզի, տուբերկուլյոզի, պարատուբերկուլյոզի, էնզոոտիկ լեյկոզի, տրիխոմոնոզի (T.fetus), կամպիլոբակտերիոզի (Campylobacter fetus venerealis)՝ ցուլերի համար, խլամիդիոզի, լեպտոսպիրոզի մասով (եթե կանխարգելիչ նպատակով չեն եղել պատվաստված կամ մշակված դեհիդրոստրեպտոմիցինով կամ համարժեք ազդեցության՝ արտահանող երկրում գրանցված նյութով), ինչպես նաև դրանց ամենօրյա արտաքին զննումը:

Հիվանդությունների նշաններով կենդանիները պետք է ենթարկվեն կլինիկական հետազոտության՝ ներառյալ ամենօրյա ջերմաչափումը:

ՄԱԲ-ի ցանկում ընդգրկված մյուս հիվանդությունների մասով հետազոտություն կարող է պահանջվել անդամ պետության լիազորված մարմնի կողմից միայն այն դեպքում, երբ պահանջը ներկայացնող անդամ պետության տարածքում անցկացվում են այդ հիվանդությունների կանխարգելմանը եւ (կամ) վերացմանն ուղղված ծրագրեր:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Տոհմային կենդանիների մասով լրացուցիչ անցկացվում են խոշոր եղջերավոր անասունների ինֆեկցիոն ռինոտրախետի տի եւ վիրուսային դիարեայի հետազոտություններ (եթե կենդանիները նախապես պատվաստված չեն եղել):

## Գլուխ 2

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

արտադրող ցուլերի սերմնահեղուկ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ կենդանիներից արհեստական սերմնավորման ձեռնարկություններում ստացված՝ արտադրող ցուլերի սերմնահեղուկը:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Սերմնահեղուկը ծագումով պետք է լինի կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներում տեղակայված ձեռնարկություններից՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)*

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ, բլուտանգ, կոնտագիոզ պլեյրոպնեմոնիա՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- բրուցեյլոզ, տուբերկուլյոզ, պարատուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ինֆեկցիոն ռինոտրախետ, վիրուսային դիարեա, տրիխոմոնոզ (Trichomonas fetus), կամպիլոբակտերիոզ (Campylobacter fetus venerealis), էնզոոտիկ լեյկոզ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830, 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշումների խմբագրությամբ)***

- լեպտոսպիրոզ՝ 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Արտադրող ցուլերը չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի կանոններով առաջարկվող նյութերի:

Արտադրող ցուլերը պետք է պահվեն սերմնահեղուկի վերցման կենտրոններում եւ (կամ) արհեստական սերմնավորման ձեռնարկություններում 30 օրից ոչ պակաս՝ նախքան սերմնահեղուկ վերցնելը, եւ այդ ժամանակվա ընթացքում չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշման խմբագրությամբ)***

Արտադրող ցուլերը չպետք է պահվեն մանր եղջերավոր անասունների հետ միասին արհեստական սերմնավորման ձեռնարկությունում:

Սերմնահեղուկի վերցման կենտրոնում պահելու ժամանակ նախքան սերմնահեղուկ վերցնելը արտադրող ցուլերին հետազոտում են (ՄԱԲ-ի կողմից առաջարկվող մեթոդների եւ ժամկետների կիրառմամբ) տուբերկուլյոզի, պարատուբերկուլյոզի, բրուցեյլոզի, լեպտոսպիրոզի (եթե կանխարգելիչ նպատակով չեն եղել պատվաստված կամ մշակված դեհիդրոստրեպտոմիցինով

կամ համարժեք ազդեցության՝ արտահանող երկրում գրանցված նյութով), էնզոոտիկ լեյկոզի, բլուտանգի, ինֆեկցիոն ռինոտրախետի, վիրուսային դիարեայի, տրիխոմոնոզի (T.fetus), կամպիլոբակտերիոզի (Campylobacter fetus venerealis)՝ ցուլերի համար, խլամիդիոզի մասով:

ՄԱԲ-ի ցանկում ընդգրկված մյուս հիվանդությունների մասով հետազոտություն կարող է պահանջվել անդամ պետության լիազորված մարմնի կողմից, միայն այն դեպքում, երբ պահանջը ներկայացնող անդամ պետության տարածքում անցկացվում են այդ հիվանդությունները կանխարգելմանը եւ (կամ) վերացմանն ուղղված ծրագրեր:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Յոթերորդ մասը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշում:

Սերմնահեղուկը պետք է հավաքվի, մշակվի, պահվի եւ փոխադրվի ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան:

***(ութերորդ մաս՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 893 որոշման խմբագրությամբ)***

### Գլուխ 3

#### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

խոշոր եղջերավոր անասունների սաղմեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ տոհմային կենդանիներից ստացված սաղմերը:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Արտադրող ցուլերը պետք է պահվեն սերմնահեղուկի վերցման կենտրոններում եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոններում, իսկ սաղմերի դոնոր կովերը՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններում, արհեստական սերմնավորման կենտրոններում՝ 30 օրվա ընթացքում ,եւ գտնվեն երկրում 6 ամսից ոչ պակաս ժամանակահատվածում՝ նախքան սերմնահեղուկի կամ սաղմերի ստացման պահը:

*(Երկրորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)*

Սաղմերի դոնոր կովերի սերմնավորման համար սերմնահեղուկը պետք է համապատասխանի սույն պահանջների 2-րդ գլխի պահանջներին:

***(Երրորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Դոնոր կովերը պետք է գտնվեն տնտեսությունում վերջին 60 օրվա ընթացքում՝ նախքան սաղմերի վերցման գործողությունը, եւ շփում չունենան վերջին 12 ամսվա ընթացքում երկիր ներմուծված այլ կենդանիների հետ:

Սաղմերը ծագումով պետք է լինեն կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ երկրից կամ վարչական տարածքից՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- բլուտանգ՝ սաղմերի վերցման գործողությունների մեկնարկին նախորդող վերջին 24 ամսվա ընթացքում.

- խոշոր եղջերավոր անասունների վեզիկուլյար ստոմատիտ, կոնտագիոզ պլեյրոպնեւմոնիա, ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում.

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում:

Խոշոր եղջերավոր անասունների սաղմերի ստացման տնտեսությունները պետք է զերծ լինեն հետեւյալ վարակիչ հիվանդություններից՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- բրուցելյոզ, տուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- էնզոոտիկ լեպտոսպիրոզ՝ վերջին 12 ամսվա ընթացքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- ինֆեկցիոն ռինոտրախեիտ, տրիխոմոնոզ (Trichomonas fetus), կամպիլոբակտերիոզ (Campylobacter fetus venerealis), խլամիդիոզ՝ վերջին 12 ամսվա ընթացքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում:

խոշոր եղջերավոր անասունների սաղմերի ստացման տնտեսություններում չեն արձանագրվել դեպքեր՝

- պարատուբերկուլյոզի՝ վերջին 3 տարվա ընթացքում.

- լեպտոսպիրոզի՝ վերջին 3 ամսվա ընթացքում.

- խոշոր եղջերավոր անասունների վիրուսային դիարեայի՝ վերջին 6 ամսվա ընթացքում:

***(յոթերորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Սաղմերի դոնոր կովերը պետք է տարեկան առնվազն 1 անգամ ենթարկվեն թեստավորման լաբորատորիայում (սահմանված կարգով հավատարմագրված կամ սերտիֆիկացված) արտահանող երկրի կողմից հաստատված մեթոդներին համապատասխանող՝ ախտորոշիչ թեստերի կիրառմամբ հետեյալ հիվանդությունների մասով՝ խոշոր եղջերավոր անասունների տուբերկուլյոզ, պարատուբերկուլյոզ, բրուցելյոզ, լեպտոսպիրոզ, էնզոոտիկ լեյկոզ, բլուտանգ, վիրուսային դիարեա, ինֆեկցիոն ռինոտրախեիտ, տրիխոմոնոզ, կամպիլոբակտերիոզ եւ խլամիդիոզ: Ախտորոշիչ թեստերի արդյունքները պետք է լինեն բացասական:

***(ութերորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Սաղմերի դոնոր կովերը պետք է 30 օրվանից ոչ պակաս գտնվեն անասնաբույժի հսկողության տակ՝ դրանցից սաղմերն ստանալուց հետո:

***(իններորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Սույն պահանջներում նշված՝ կենդանիների կոնտագիոզ հիվանդություն հայտնաբերելու դեպքում սաղմերի ներմուծումը Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք եւ (կամ) դրանց տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության տարածքի սահմաններում պետք է արգելվեն:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Սաղմերը պետք է վերցվեն, պահվեն եւ փոխադրվեն՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան:

#### Գլուխ 4

##### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

սպանդային խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ եւ այծեր՝  
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ  
(կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ սպանդային խոշոր եղջերավոր անասուններ, ոչխարներ եւ այծեր, որոնք



պատվաստված չեն ոչխարների ու այծերի բրուցելյոզի, լեպտոսպիրոզի եւ ծաղիկի դեմ, որոնք ծագումով կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից են՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիա՝ խոշոր եղջերավոր անասունների համար ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին եւ արտահանող երկրի, գոտու կամ կոմպարտմենտի՝ խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայի մասով ռիսկի դասակարգմանը համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 274 որոշման խմբագրությամբ)***

- ոչխարների սկրեպի՝ ոչխարների եւ այծերի համար ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 274 որոշման խմբագրությամբ)***

- մեդի-վիսնա, արտրիտ էնցեֆալիտ՝ ուղարկման օրը կլինիկական նշաններ չեն եղել, վերջին 36 ամսվա ընթացքում ծագման հոտերում ոչխարների ու այծերի հիվանդությունները՝ ոչ կլինիկապես, ոչ շիճուկաբանորեն չեն ախտորոշվել, տվյալ հիվանդությունների մասով անապահով հոտերից նշված ժամանակահատվածում ոչխարներ եւ այծեր ներս չեն բերվել.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եւ մանր եղջերավոր անասունների կոնտագիոզ պլեւրոպնեւմոնիա, խոշոր եղջերավոր անասունների վեզիկուլյար ստոմատիտ, բլուտանգ, ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում.

- մանր եղջերավոր անասունների ժանտախտ, նոդուլյար մաշկաբորբ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- տուբերկուլյոզ, բրուցելյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- ոչխարների եւ այծերի ծաղիկ՝ վերջին 6 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- էնզոոտիկ լեյկոզ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում արձանագրված դեպքերի բացակայության դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- պարատուբերկուլյոզ՝ վերջին 36 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում արձանագրված դեպքերի բացակայության դեպքում.

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի կանոններով առաջարկվող նյութերի:

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների, ինչպես նաեւ այլ դեղամիջոցների ազդեցությանը, որոնք ներմուծվել են կենդանիներին սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ավելի ուշ:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8 -ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով կամ Եվրասիական տնտեսական միության տարածքով տեղափոխվող կենդանիներն առնվազն 21 օր պետք է պահվեն կարանտինի մեջ, որի ընթացքում անցկացվում են կենդանիների ջերմաչափում եւ կենդանիների՝ բրուցելյոզի ու տուբերկուլյոզի մասով ախտորոշիչ հետազոտություններ:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) Եվրասիական տնտեսական միության տարածքով տեղափոխել այն կենդանիներին, որոնց ախտորոշիչ հետազոտություններով արձանագրվել են բացասական արդյունքներ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Միս ստանալու համար՝ կենդանիները պետք է սպանդի ենթարկվեն նշանակման կետում ընդունվելուց հետո 72 ժամից ոչ ուշ:

## Գլուխ 5

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

տոհմային եւ արտադրանք ստանալու համար նախատեսված ոչխարներ եւ այծեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ տոհմային ոչխարներ եւ այծեր, որոնք պատվաստված չեն բրուցելյոզի դեմ եւ ծագումով կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից են՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

- ոչխարների սկրեպի՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 274 որոշման խմբագրությամբ)*

- մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում այդպիսի երկրի տարածքում, երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ, բլուտանգ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- ոչխարների եւ այծերի ծաղիկ՝ վերջին 6 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- տուբերկուլյոզ, բրուցելյոզ, ինֆեկցիոն ագալակտիա՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- լիստերիոզ, ինֆեկցիոն մաստիտ, կամպիլոբակտերիոզ, ոչխարների էպիդիդիմիտ (*Brucella ovis*)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- լեպտոսպիրոզ, ինֆեկցիոն պլեյրոպնեմոնիա՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- մեդի վիսնա, արտրիտ-էնցեֆալիտ՝ ուղարկման օրը կլինիկական նշաններ չեն եղել, վերջին 36 ամսվա ընթացքում ծագման հոտերում հիվանդությունները ոչ կլինիկապես, ոչ շիճուկաբանորեն չեն ախտորոշվել, տվյալ հիվանդությունների մասով անապահով հոտերից նշված ժամանակահատվածում ոչխարներ եւ այծեր ներս չեն բերվել.

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

- պարատուբերկուլյոզ՝ վերջին 36 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում արձանագրված դեպքերի բացակայության դեպքում.

***(պարբերությունը ներմուծվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի կանոններով առաջարկվող նյութերի:

Կարանտինի ժամանակ անցկացվում են կենդանիների կլինիկական զննում՝ ըստ ցուցումների ջերմաչափմամբ, ինչպես նաեւ ախտորոշիչ հետազոտություններ բրուցելյոզի, ոչխարների էպիդիդիմիտի, տուբերկուլյոզի, բլուտանգի, պարատուբերկուլյոզի, խլամիդիոզի, մեդի-վիսնայի, ադենոմատոզի, արտրիտ-էնցեֆալիտի, լիստերիոզի լեպտոսպիրոզի մասով (եթե կանխարգելիչ նպատակով չեն եղել պատվաստված կամ մշակված դեհիդրոստրեպտոմիցինով կամ համարժեք ազդեցության՝ արտահանող երկրում գրանցված նյութով):

***(մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

ՄԱԲ-ին ծանուցման ենթակա այլ հիվանդությունների մասով հետազոտություն կարող է պահանջվել անդամ պետության լիազորված մարմնի

կողմից միայն այն դեպքում, երբ պահանջը ներկայացնող անդամ պետության տարածքում անցկացվում են այդ հիվանդությունների կանխարգելմանը եւ (կամ) վերացմանն ուղղված ծրագրեր:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի եւ թիրեոստատիկ պատրաստուկների ազդեցությանը՝ բացառությամբ կանխարգելիչ եւ բուժիչ միջոցառումների:

***(մասն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

## Գլուխ 6

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

արտադրող խոյերի, նոխազների սերմնահեղուկ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել արտադրող խոյերի, նոխազների սերմնահեղուկը, որն ստացվել է առողջ կենդանիներից

արհեստական սերմնավորման այն կենտրոններում, որոնցում բրուցելյոզի դեմ կենդանիների պատվաստում չի իրականացվել:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Սերմնահեղուկը ծագումով պետք է լինի կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներում տեղակայված արհեստական սերմնավորման կենտրոններից՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- մեդի-վիսնա, ադենոմատոզ, այծերի արտրիտ-էնցեֆալիտ, սահմանային հիվանդություն, մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ, բլուտանգ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- տուբերկուլյոզ, պարատուբերկուլյոզ, ոչխարների ծաղիկ, ինֆեկցիոն ագալակտիա, բրուցելյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.



- ոչխարների էնզոոտիկ վիժում (ոչխարների խլամիդիոզ)՝ վերջին 24 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- ինֆեկցիոն մաստիտ, ոչխարների էպիդիդիմիտ (*Brucella ovis*)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- լեպտոսպիրոզ, ինֆեկցիոն պլեյրոպնեմոնիա՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Արտադրող խոյերը, նոխազները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի կանոններով առաջարկվող նյութերի:

Արտադրող խոյերը, նոխազները պետք է պահվեն արհեստական սերմնավորման կենտրոնում 30 օրվա ընթացքում՝ նախքան սերմնահեղուկ վերցնելը, եւ այդ ժամանակվա ընթացքում չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

***(Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Արտադրող խոյերը, նոխազները չպետք է պահվեն խոշոր եղջերավոր անասունների հետ միասին արհեստական սերմնավորման կենտրոնում:

***(Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

ՄԱԲ-ի կողմից առաջարկվող ժամկետներում՝ նախքան արտադրող խոյերի, նոխազների սերմնահեղուկը վերցնելը, նրանց հետազոտում են տուբերկուլյոզի, բրուցելյոզի, ոչխարների էպիդիդիմիտի, լիստերիոզի, պարատուբերկուլյոզի, խլամիդիոզի, մեդի-վիսնայի, ադենոմատոզի, այծերի արտրիտ-էնցեֆալիտի եւ բլուտանգի, ինֆեկցիոն ագալակտիայի, լեպտոսպիրոզի, սահմանային հիվանդության մասով, եւ այլ ինֆեկցիոն հիվանդությունների մասով՝ այն անդամ պետության լիազորված մարմնի պահանջով, որի տարածք իրականացվում է ներմուծումը (տեղափոխումը):

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին եւ թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է վերցվի, պահվի եւ փոխադրվի՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան:

## Գլուխ 7

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

տոհմային եւ արտադրանք ստանալու համար նախատեսված խոզեր՝  
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ  
(կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք  
ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ տոհմային  
եւ արտադրանք ստանալու համար նախատեսված խոզեր, որոնք ծագումով  
կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից են՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի  
թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման, 2012 թվականի  
դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160  
որոշումների խմբագրությամբ)*

- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի  
տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային  
համապատասխան.

դարաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական  
տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոզերի վեզիկուլյար հիվանդություն՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի  
տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- խոզերի բրուցելյոզ, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշ, խոզերի տեքստվիրուսային էնցեֆալոմիելիտ (Տեշենի հիվանդություն կամ խոզերի էնտերովիրուսային էնցեֆալոմիելիտ), տուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- տրիխինելյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում արձանագրված դեպքերի բացակայության դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Կարանտինի ժամանակ իրականացվում է կենդանիների կլինիկական զննում ջերմաչափմամբ՝ ըստ ցուցումների, ինչպես նաև ախտորոշիչ հետազոտություններ խոզերի դասական ժանտախտի, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշի, խոզերի բրուցելյոզի, Աուեսկի հիվանդության (կեղծ կատաղություն), խլամիդիոզի, վիրուսային տրանսմիսիվ գաստրոէնտերիտի, տուբերկուլյոզի, խոզերի վեզիկուլյար հիվանդության եւ

լեպտոսպիրոզի (եթե կանխարգելման նպատակով չեն եղել պատվաստված կամ մշակված դեհիդրոստրեպտոմիցինով կամ արտահանող երկրում գրանցված՝ համարժեք ազդեցության նյութով):

***(Մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ )***

ՄԱԲ-ին ծանուցման ենթակա այլ հիվանդությունների մասով հետազոտություն կարող է պահանջվել անդամ պետության լիազորված մարմնի կողմից միայն այն դեպքում, երբ պահանջը ներկայացնող անդամ պետության տարածքում անցկացվում են այդ հիվանդությունների կանխարգելման եւ (կամ) վերացմանն ուղղված ծրագրեր:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի եւ թիրեոստատիկ պատրաստուկների ազդեցությանը՝ բացառությամբ կանխարգելիչ եւ բուժիչ միջոցառումների:

***(մասն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

Կենդանիները չպետք է ստանան որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի կանոններով առաջարկվող նյութերի:

***(մասն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

## Գլուխ 8

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

արու խոզերի սերմնահեղուկ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել արու խոզերի սերմնահեղուկը, որն ստացվել է առողջ կենդանիներից սերմնահեղուկի վերցման կենտրոններում եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոններում, որոնցում խոզերի բրուցելյոզի եւ լեպտոսպիրոզի դեմ կենդանիների պատվաստում չի իրականացվել:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Սերմնահեղուկը ծագումով պետք է լինի կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներում տեղակայված ձեռնարկություններից՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)*

- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- խոզերի վեզիկուլյար հիվանդություն՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- տուբերկուլյոզ, բրուցելյոզ, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշ, խոզերի էնտերովիրուսային էնցեֆալոմիելիտ (Տեշենի հիվանդություն, խոզերի տեքստովիրուսային էնցեֆալոմիելիտ)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Արու խոզերը, որոնցից ստանում են սերմնահեղուկը, պետք է պահվեն սերմնահեղուկի վերցման կենտրոններում եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոններում առնվազն 3 ամիս՝ նախքան սերմնահեղուկ վերցնելը, եւ այդ

ժամանակվա ընթացքում չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Սերմնահեղուկի վերցման կենտրոնում եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոնում պահելու ժամանակ՝ նախքան սերմնահեղուկ վերցնելը, արու խոզերին հետազոտում են (ՄԱԲ-ի կանոններով առաջարկվող մեթոդների եւ ժամկետների կիրառմամբ) լեպտոսպիրոզի (եթե կանխարգելիչ նպատակով չեն եղել մշակված դեհիդրոստրեպտոմիցինով կամ համարժեք ազդեցության՝ արտահանող երկրում գրանցված այլ նյութով), խոզերի դասական ժանտախտի, խոզերի տուբերկուլյոզի, բրուցելյոզի, Աուեսկի հիվանդության (կեղծ կատաղության), խլամիդիոզի, խոզերի վեզիկուլյար հիվանդության, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշի, վիրուսային տրանսմիսիվ գաստրոէնտերիտի մասով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

ՄԱԲ-ին ծանուցման ենթակա այլ հիվանդությունների մասով հետազոտություն կարող է պահանջվել անդամ պետության լիազորված մարմնի կողմից միայն այն դեպքում, երբ պահանջը ներկայացնող անդամ պետության տարածքում անցկացվում են այդ հիվանդությունների կանխարգելմանը եւ (կամ) վերացմանն ուղղված ծրագրեր:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Արու խոզերի սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին եւ թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է վերցվի, պահվի եւ փոխադրվի՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան:



## Գլուխ 9

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

սպանդային խոզեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես առողջ սպանդային խոզեր կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ վերջին 12 ամսվա ընթացքում անասնահամաճարակային եւ էնտոմոլոգիական մշտադիտարկման տվյալները հաստատվելու դեպքում.

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)*

- դաբաղ, խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան .

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղությունից)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- տուբերկուլյոզ, բրուցելյոզ, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշ, խոզերի էնտերովիրուսային էնցեֆալոմիելիտ (Տեշենի հիվանդություն, խոզերի տեքսովիրուսային էնցեֆալոմիելիտ)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

***պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.***

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- խոզերի վեզիկուլյար հիվանդություն՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ վերջին 9 ամսվա ընթացքում, որտեղ անցկացվել է սանիտարական սպանդ (stamping out) երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ վերջին 12 ամսվա ընթացքում կլինիկական առողջացումից կամ վերջին ախտահարված կենդանու անկումից հետո, եթե սանիտարական սպանդը (stamping out) չի անցկացվել վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան. (պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշմամբ)

- տրիխինելյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում արձանագրված դեպքերի բացակայության դեպքում:

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

Կենդանիները Եվրասիական տնտեսական միության տարածքում պետք է միս ստանալու համար սպանդի ենթարկվեն նշանակման կետ հասնելուց հետո 72 ժամից ոչ ուշ:

***(Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների, ինչպես նաեւ այլ դեղամիջոցների ազդեցությանը, որոնք ներմուծվել են կենդանիներին սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ավելի ուշ:

***(մասն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշմամբ. Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

## Գլուխ 10

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

տոհմային, արտադրանք ստանալու համար նախատեսված եւ սպորտային ձիեր (բացառությամբ մրցումներին մասնակցելու համար սպորտային ձիերի)՝  
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ  
(կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել միայն առողջ ձիեր:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160  
որոշումների խմբագրությամբ)*

Ձիերը պետք է պատվաստված չլինեն ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների (վենետուելյան, ճապոնական, արեւելյան, արեւմտյան, ձիերի՝ Արեւմտյան Նեղոսի էնցեֆալոմիելիտի), ձիերի աֆրիկյան ժանտախտի դեմ եւ ծագումով պետք է լինեն կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից՝

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)*

- ձիերի վենետուելյան եւ ճապոնական էնցեֆալոմիելիտներ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեզիդենտիվազիային համապատասխան.

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)*

- ձիերի արեւելյան եւ արեւմտյան էնցեֆալոմիելիտներ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- ձիերի՝ Արեւմտյան Նեղոսի էնցեֆալոմիելիտ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- ձիերի աֆրիկյան ժանտախտ, վեգիկուլյար ստոմատիտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- խլնախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- ձիերի գրիպ՝ վերջին 21 օրվա ընթացքում տնտեսության տարածքում կլինիկական դեպքերի բացակայության դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- զուգավորման հիվանդություն (Trypanosoma equiperdum), սուրրայից (Trypanosoma evansi)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- ձիերի ինֆեկցիոն մետրիտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ինֆեկցիոն անեմիա՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- վիրուսային արտերիիտ՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

- նուտալիոզ (*Nuttallia equi*), պիրոպլազմոզ (*Babesia caballi*)՝ վերջին 30 օրվա ընթացքում հնարավոր փոխանցողներից զերծ տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- ձիերի ծաղիկ, քոս, լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշում.***

- ձիերի ռինոպենեմոնիա (ձիերի հերպեսվիրուսային վարակի 1-ին տեսակ՝ վիժման կամ պարալիտիկ ձեւով)՝ վերջին 21 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Կարանտինի ժամանակ անցկացվում է կենդանիների կլինիկական զննում՝ ամենօրյա ջերմաչափմամբ, ինչպես նաեւ խլնախտի, զուգավորման հիվանդության, սուրբայի (*Trypanosoma evansi*), պիրոպլազմոզի (*Babesia caballi*), նուտալիոզի (*Nuttallia equi*), ռինոպենեմոնիայի, անապլազմոզի, ինֆեկցիոն մետրիտի, ինֆեկցիոն անեմիայի, վիրուսային արտերիիտի, վեզիկուլյար ստոմատիտի, լեպտոսպիրոզի եւ այն անդամ պետության լիազորված մարմնի պահանջով՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների ախտորոշիչ հետազոտություններ, որի տարածք իրականացվում է ներմուծումը (տեղափոխումը):

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569, 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623, 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Կենդանիները պետք է պատվաստվեն ձիերի գրիպի դեմ ՄԱԲ-ի՝ ախտորոշիչ թեստերի եւ ցամաքային կենդանիների համար նախատեսված պատվաստանյութերի ձեռնարկում նշված ստանդարտներին համապատասխանող պատվաստանյութով՝ ուղարկելուց առաջ 21-րդ եւ 90-րդ օրերի միջեւ ընկած ժամանակահատվածում առաջնային կամ կրկնակի:

***(չորրորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

## Գլուխ 11

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

մրցումներին մասնակցելու համար սպորտային ձիեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավորապես ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Մրցումներին մասնակցելու համար ձիերի ժամանակավոր ներմուծումը Եվրասիական տնտեսական միության տարածք իրականացվում է 90 օրը չգերազանցող ժամկետով:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Այդ ձիերը նշված ժամկետում արտահանելու անհնարինության դեպքում դրանց նկատմամբ կիրառվում են Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ անասնաբուժության բնագավառում ակտերով սահմանված պահանջները:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ ձիեր, որոնք պատվաստված չեն ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բուլոր տիպերի, ձիերի աֆրիկյան ժանտախտի դեմ եւ ծագումով կենդանիների հետեյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից են՝



**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- ձիերի ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բուլոր տիպերը՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում պահվել են հսկողության տակ.

- ձիերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ վերջին 40 օրվա ընթացքում պահվել են այդ երկրի տարածքում կամ այդ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)**

- խլնախտ՝ վերջին 3 տարվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- զուգավորման հիվանդություն (*Trypanosoma equiperdum*)՝ վերջին 6 ամսվա ընթացքում երկրի տարածքում.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)**

- ձիերի գրիպ՝ վերջին 21 օրվա ընթացքում տնտեսության տարածքում կլինիկական դեպքերի բացակայության դեպքում.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)**

- ձիերի ռինոպենմոնիա (ձիերի հերպեսվիրուսային վարակի 1-ին տեսակ՝ վիժման կամ պարալիտիկ ձեւով)՝ վերջին 21 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- վիրուսային արտերիիտ՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի կանոնների պահանջներին համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

- ինֆեկցիոն անեմիա՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ձիերի ինֆեկցիոն մետրիտ՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

***պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշում.***

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Ուղարկման օրը ձիերը պետք է զուգավորման հիվանդության կլինիկական նշաններ չունենան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելիս եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելիս ձիերը պետք է հետազոտվեն խլնախտի, զուգավորման հիվանդության (Trypanosoma equiperdum) եւ ինֆեկցիոն անեմիայի մասով, ինչպես նաեւ պատվաստվեն ձիերի գրիպի դեմ ՄԱԲ-ի՝ ախտորոշիչ թեստերի եւ ցամաքային կենդանիների համար նախատեսված պատվաստանյութերի ձեռնարկում նշված ստանդարտներին համապատասխանող պատվաստանյութով՝ ուղարկելուց առաջ 21-րդ եւ 90-րդ օրերի միջեւ ընկած ժամանակահատվածում առաջնային կամ կրկնակի:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Տարբեր երկրներից ներմուծված ձիերը՝ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում պահվում են մեկուսացված՝ բացառությամբ սպորտային մրցումներին անմիջական մասնակցության:

Սպորտային միջոցառումների ավարտից հետո ձիերը ենթակա են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից պարտադիր արտահանման առանց լրացուցիչ հետազոտությունների եւ մշակման՝ այն ծագման երկրի անասնաբուժական սերտիֆիկատի համաձայն, որտեղից դրանք ներմուծվել են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Թույլատրվում է սպորտային ձիերի ներմուծումը առանց կարանտինացման միջազգային անձնագրի ուղեկցության, որը, սույն գլխի նպատակներից ելնելով, հավասարեցվում է անասնաբուժական սերտիֆիկատին՝ պայմանով, որ դրանում առկա է իրավասու մարմնի կողմից արված՝ ուղարկելուց առաջ 5 օրվա ընթացքում կատարված կլինիկական զննման վերաբերյալ նշում: Սպորտային ձիերը երրորդ երկրներից ներմուծման դեպքում նշանակման երկրում չի պահանջվում միջազգային անձնագրի վերաձեւակերպում անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի:

**(մասը՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշման խմբագրությամբ)**

## Գլուխ 12

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

տոհմային հովատակների սերմնահեղուկ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել սերմնահեղուկի վերցման կենտրոններում եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոններում առողջ կենդանիներից ստացված՝ հովատակների սերմնահեղուկը:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Տնտեսությունները, որտեղ պահվում են արտադրող հովատակները, սերմնահեղուկի վերցման կենտրոնները եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոնները պետք է տեղակայված լինեն կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներում՝

- ձիերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- զուգավորման հիվանդություն (Trypanosoma equiperdum), վեզիկուլյար ստոմատիտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խլնախտ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ձիերի գրիպ՝ վերջին 21 օրվա ընթացքում տնտեսության տարածքում կլինիկական դեպքերի բացակայության դեպքում.

- ձիերի ինֆեկցիոն մետրիտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- վիրուսային արտերիտ՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

- լեպտոսպիրոզ, սուրբա (Trypanosoma evansi)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ինֆեկցիոն անեմիա՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում:

***(Երկրորդ մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Արտադրող հովատակները պետք է պահվեն տնտեսություններում, սերմնահեղուկի վերցման կենտրոններում եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոններում մեկուսացված, 60 օրից ոչ պակաս՝ նախքան սերմնահեղուկը վերցնելը եւ այդ ժամանակահատվածում չպետք է օգտագործվեն բնական սերմնավորման համար:

***(Երրորդ մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Արտադրող հովատակները չպետք է պատվաստված լինեն ռինոպենեմոնիայի, ձիերի աֆրիկյան ժանտախտի եւ ինֆեկցիոն մետրիտի դեմ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

ՄԱԲ-ի կողմից առաջարկված ժամկետներում սերմնահեղուկ վերցնելուց առաջ հովատակներին հետազոտում են զուգավորման հիվանդության, սուրբայի,

ռինոպնեմոնիայի, ինֆեկցիոն մետրիտի, ինֆեկցիոն անեմիայի, վիրուսային արտերիտի, վեզիկուլյար ստոմատիտի, բրուցելյոզի, տուբերկուլյոզի եւ լեպտոսպիրոզի մասով:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

Սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին եւ թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է վերցվի, պահվի եւ փոխադրվի՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան:

### Գլուխ 13

#### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

սպանդային ձիեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես առողջ սպանդային ձիեր՝ կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից՝

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- խլնախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- ձիերի ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտների բոլոր տիպերը՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

**պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշում.**

- ձիերի աֆրիկյան ժանտախտ, վեզիկուլյար ստոմատիտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)**

- զուգավորման հիվանդություն (Trypanosoma equiperdum), սուրրա (Trypanosoma evansi)՝ վերջին 6 ամսվա ընթացքում վարչական տարածքում կամ տնտեսության տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)**

- ինֆեկցիոն անեմիա՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Կարանտինի ժամանակ անցկացվում են կլինիկական զննում՝ ամենօրյա ջերմաչափմամբ, եւ խլնախտի, զուգավորման հիվանդության, ինֆեկցիոն անեմիայի ախտորոշիչ հետազոտություններ:

Եվրասիական տնտեսական միության տարածքում կենդանիները ենթակա են սպանդի՝ միս ստանալու համար՝ նշանակման կետ հասնելուց հետո 72 ժամից ոչ ուշ:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Սպանդից առաջ ձիերը պետք է հետազոտվեն խլնախտի մասով. սպանդի են ուղարկվում միայն բացասական հակազդած կենդանիները:

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող կենդանիները չպետք է ենթարկվեն բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների, ինչպես նաեւ այլ դեղամիջոցների ազդեցությանը, որոնք ներմուծվել են կենդանիներին սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ավելի ուշ:

**(մասն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշմամբ. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)**



## Գլուխ 14

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

հավի, հնդկահավի, բադի, սագի, ջայլամի մեկ օրական ճտեր եւ այդ տեսակների թռչունների ինկուբացիոն ձվեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես առողջ մեկ օրական՝ հավի, հնդկահավի, բադի, սագի, ջայլամի ճտեր եւ այդ տեսակների թռչունների ինկուբացիոն ձվեր, որոնք ծագումով կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից են՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

- թռչնի գրիպ, որը, ՄԱԲ-ի կանոններին համապատասխան, ենթակա է պարտադիր հայտարարագրման՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդը (stamping out) անցկացնելու եւ ռեգիոնալիզացիային համապատասխան անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)*

- Նյութասլի հիվանդություն՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ ռեգիոնալիզացիային համապատասխան անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Հավի մեկ օրական ճտերը եւ ինկուբացիոն ձվերը մատակարարվում են ձեռնարկություններից կամ ինկուբատորներից, որոնք ունեն սալմոնելայի նկատմամբ հսկողության եւ վերահսկողության ծրագրեր եւ, որոնք ունեն թռչնի տիֆից (*Salmonella gallinarum*) ու պուլորոզից (*Salmonella pulorum*) զերծ կարգավիճակ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Հավաբուծական եւ հնդկահավաբուծական տնտեսությունները պետք է տեղակայված լինեն այն տարածքներում, որոնք վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում զերծ են հավերի ինֆեկցիոն բրոնխիտից, ինֆեկցիոն լարինգոտրախետիտից, Համբորո հիվանդությունից:

***(մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Ջայլամաբուծական տնտեսությունները պետք է տեղակայված լինեն այն տարածքներում, որոնք վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում զերծ են թռչնի ծաղիկից, թռչնի տուբերկուլյոզից, պաստերելյոզից, պարամիկսովիրուսային վարակներից, ինֆեկցիոն հիդրոպերիկարդիտից:

***(մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Մայրական հոտը պետք է ապահով լինի վերոհիշյալ հիվանդությունների մասով:

Բացի այդ՝ հավերի եւ հնդկահավերի մայրական հոտը պետք է ենթարկվի շճաբանական հետազոտության պուլորոզային հակաձնով՝ բացասական արդյունքով:

Հավի մեկ օրական ճտերը պետք է պատվաստվեն Մարեկի հիվանդության դեմ:

Ինկուբացիոն ձվերը պետք է ստացված լինեն վերոնշյալ անասնաբուժական պահանջներին համապատասխանող թռչուններից:

Ինկուբացիոն ձվերը պետք է լինեն ավստահանված:

***(յոթերորդ մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Ինկուբացիոն ձվերը եւ հավի ճտերը պետք է մատակարարվեն մեկանգամյա օգտագործման տարայով:

## Գլուխ 15

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

մորթատու գազաններ, ճագարներ, շներ եւ կատուներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես առողջ մորթատու գազաններ, ճագարներ, շներ եւ կատուներ՝ կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից՝

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)*

- սիբիրախտ՝ կենդանիների բոլոր տեսակների համար վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- կատաղություն, տուբերկուլյոզ՝ աղվեսների, բեւեռաղվեսների, շների եւ կատուների համար վերջին 6 ամսվա ընթացքում վարչական տարածքում կամ տնտեսության տարածքում.

ջրաքիսների եւ ժանտաքիսների համար՝

- ջրաքիսների էնցեֆալոպաթիա, ալեուտյան հիվանդություն՝ վերջին 36 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- տուլյարեմիա՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.
- կատաղություն, տուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ տնտեսության տարածքում.

ճագարների համար՝

- վիրուսային հեմոռագիկ հիվանդություն, տուլյարեմիա, պաստերելյոզ (*Pasteurella multocida*, *Mannheimia gaemolitica*)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.
- միքսոմատոզ, ծաղիկ (որն առաջանում է կովերի ծաղիկի վիրուսից եւ ծաղիկի դեմ պատվաստանյութի վիրուսից)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(մասը՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Կարանտինի ժամանակ անցկացվում են հետեւյալ կենդանիների ամբողջ գլխաքանակի կլինիկական զննում եւ ախտորոշիչ հետազոտություններ՝

- ջրաքիսները՝ ալեուտյան հիվանդության մասով.
- կատուները՝ դերմատոֆիտոզների մասով:

Ուղարկելուց 20 օրից ոչ ուշ կենդանիները պատվաստվում են, եթե վերջին 12 ամսվա ընթացքում չեն պատվաստվել՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- բոլոր մսակերները՝ կատաղության դեմ: Չի թույլատրվում կատաղության դեմ չպատվաստված մորթատու գազանների, շների եւ կատուների ներմուծումը, տեղափոխումը.

***(պարբերությունն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ)***

- աղվեսները, բեւեռաղվեսները՝ մսակերների ժանտախտի դեմ.
- ջրաքիսները եւ ժանտաքիսները՝ մսակերների ժանտախտի, վիրուսային էնտերիտի, պաստերելյոզի դեմ.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- ճահճակուղբերը՝ պաստերելյոզի դեմ.
- շները՝ մսակերների ժանտախտի, հեպատիտի, վիրուսային էնտերիտի, պարվո- եւ ադենովիրուսային վարակների, լեպտոսպիրոզի դեմ.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- կատուները՝ պանլեյկոպենիայի դեմ.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- ճագարները՝ միքսոմատոզի, պաստերելյոզի եւ վիրուսային հեմոռագիկ հիվանդության դեմ, ինչպես նաեւ այն անդամ պետության լիազորված մարմնի պահանջով այլ ինֆեկցիոն հիվանդությունների դեմ, որի տարածք իրականացվում է ներմուծում (տեղափոխում):

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Թույլատրվում է շների եւ կատուների ներմուծումը, որոնք փոխադրվում են անձնական օգտագործման համար 2 գլխից ոչ ավելի քանակով, առանց ներմուծման թույլտվության եւ կարանտինացման, միջազգային անձնագրի ուղեկցությամբ, որը տվյալ դեպքում հավասարեցվում է անասնաբուժական սերտիֆիկատին՝ դրանում ուղարկելուց առաջ 5 օրվա ընթացքում կլինիկական գնման անցկացման մասին լիազորված մարմնի նշման պայմանով: Երրորդ երկրներից ներմուծման դեպքում նշանակման երկրում չի պահանջվում միջազգային անձնագրի վերաձեւակերպում անասնաբուժական ուղեկցող փաստաթղթի:

Թույլատրվում է անձնական օգտագործման համար 2 գլխից ոչ ավելի քանակով, առանց կարանտինացման, կենդանու անասնաբուժական անձնագրի ուղեկցությամբ՝ համաձայն թիվ 2 եւ թիվ 3 հավելվածների՝ շների եւ կատուների տեղափոխումը Եվրասիական տնտեսական միության տարածքում: Անձնագրում պետք է առկա լինեն նշումներ, որոնք վկայում են այն մասին, որ կենդանին պատվաստվել է սույն պահանջներին համապատասխան, ընդ որում՝ կատաղության դեմ ցանկացած հաջորդ պատվաստում կատարվել է նախորդ պատվաստման ազդեցության ժամանակահատվածում: Տեղափոխումից առաջ 5 օրվա ընթացքում պետք է անցկացվի կենդանու կլինիկական զննում եւ անձնագրում կատարվի համապատասխան նշում անասնաբույժի կողմից, ինչն էլ իրավունք է տալիս տեղափոխել կենդանուն 120 օրվա ընթացքում՝ պայմանով, որ այդ ժամանակահատվածում չի լրանում կատաղության դեմ պատվաստման (վերապատվաստման) ազդեցության ժամկետը:

***(մասն ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 294, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

## Գլուխ 16

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

վայրի կենդանիներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)*

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 192 որոշման խմբագրությամբ)*

Սույն գլխում վայրի կենդանի ասելով՝ հասկանում ենք կենդանիներ, որոնք հանվել են բնական միջավայրից առաջին անգամ՝ անկախ դրանց բնակության վայրից (ազատ բնակատեղի, արգելոցներ, արգելավայրեր, ազգային պարկեր եւ այլն):

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես առողջ վայրի կենդանիներ (կաթնասուններ, թռչուններ, ձկներ, երկկենցաղներ, սողուններ), որոնք ծագումով կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից կամ ջրատարածքներից են՝

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)*

կենդանիների բոլոր տեսակների համար (բացի թռչուններից)՝

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.



- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- բլուտանգ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- կատաղություն՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- վիրուսային հեմոռագիկ տենդ՝ վերջին 6 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

խոշոր երկկճղակավորների համար (զուբերի, գոմեշների, այծքաղների, բիզոնների, եղջերուների եւ այլն)՝

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիա եւ ոչխարների սկրեպի՝ երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան կամ նշված հիվանդության աննշան կամ վերահսկելի ռիսկով՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբ (պալարախտ)՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- եղջերուների անասնահամաճարակային հեմոռագիկ հիվանդություն, Ակաբանե հիվանդություն, վեզիկուլյար ստոմատիտ, կոնտագիոզ պլեյրոպնեյմոնիա՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- բրուցելյոզ, տուբերկուլյոզ, պարատուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- էնզոոտիկ լեյկոզ, վիրուսային դիարեա՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

մանր երկկճղակավորների համար (այծերի, արխարների, եղնիկների, տուրերի, մուֆլոնների, այծեղջյուրների, այծյամների եւ այլն)՝

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- եղջերուների էպիզոոտիկ հեմոռագիկ հիվանդություն՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան .

- Քյու-տենդ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- մեդի-վիսնա, ադենոմատոզ, արտրիտ-էնցեֆալիտ, սահմանային հիվանդություն՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- պարատուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ոչխարների սկրեպի՝ վերջին 7 տարվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- տուբերկուլյոզ, բրուցելյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ոչխարների եւ այծերի ծաղիկ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

միասնբակավորների համար (զեբրերի, կուլանների, Պրժեալսկու ձիերի, կիանգների եւ այլն)՝

- ձիերի ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտի բոլոր տեսակները՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- վիրուսային արտերիիտ՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի կանոնների առաջարկություններին համապատասխան.

- խլնախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- զուգավորման հիվանդություն (Trypanosoma equiperdum), սուրբա (Trypanosoma evansi), պիրոպլազմոզ (Babesia caballi), նուտալիոզ (Nuttallia equi)՝ վերջին 12 ամսվա ընթացքում վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- ձիերի ինֆեկցիոն մետրիտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

վայրի խոզերի տարբեր տեսակների համար՝

- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոզերի վեզիկուլյար հիվանդություն, վեզիկուլյար ստոմատիտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն)՝ վերջին 12 ամսվա ընթացքում վարչական տարածքում կամ տնտեսության տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոզերի էնտերովիրուսային էնցեֆալոմիելիտ (Տեշենի հիվանդություն, խոզերի տեքստովիրուսային էնցեֆալոմիելիտ)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

մսակերների տարբեր տեսակների համար՝

- մսակերների ժանտախտ, վիրուսային էնտերիտ, տոքսոպլազմոզ, ինֆեկցիոն հեպատիտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- տույարեմիա՝ վերջին 24 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

թռչունների տարբեր տեսակների համար՝

- Դերժի հիվանդություն, բադերի ժանտախտ, բադի ճտերի վիրուսային հեպատիտ (ջրլող թռչունների համար)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ՄԱԲ-ի կանոններին համապատասխան՝ պարտադիր հայտարարագրման ենթակա թռչնի գրիպ՝ վերջին 6 ամսվա ընթացքում վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- օրնիտոզ (պսիտակոզ), ինֆեկցիոն բրոնխիտ, ծաղիկ, ռեովիրուսային վարակ եւ հնդկահավերի ռինոտրախետիտ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- Նյուքասլի հիվանդություն՝ վերջին 12 ամսվա ընթացքում վարչական տարածքում կամ տնտեսության տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

կրծողների տարբեր տեսակների համար՝

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամսվա ընթացքում երկրի տարածքում.

- տույարեմիա՝ վերջին 24 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն)՝ ՄԱԲ-ի կանոններին առաջարկություններին համապատասխան.

- միքսոմատոզ, ճագարների վիրուսային հեմոռագիկ հիվանդություն, լիմֆոցիտար խորիոմենինգիտ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- տորքոսալազմոզ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

մաշկոտանիների եւ կետանմանների տարբեր տեսակների համար՝

- փոկերի ժանտախտ (մորբիլիվիրուսային վարակից), վեզիկուլյար էկզանտեմա՝ վերջին 36 ամսվա ընթացքում դրանց բնակության (ծագման) վայրերում.

փղերի, ընձուղտների, օկապիների, գետաձիերի, ռնգեղջյուրների, գետակինճերի, կիսասատամնավորների եւ խողովակասատամնավորների, միջատակերների, պարկավորների, չղջիկների, ջրարջակերպերի, կզաքիսազգիների, վիվերազգիների եւ էկզոտիկ կենդանիների այլ տեսակների համար՝

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- վենեսուելյան էնցեֆալոմիելիտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբ (պալարախտ)՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- ձիերի աֆրիկյան ժանտախտ, Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն), ջրաքիսների տրանսմիսիվ էնցեֆալոմիելիտ, լիմֆոցիտար խորիոմենինգիտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ ռեգիոնալիզացիային համապատասխան.

- տուլյարեմիա՝ վերջին 24 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

պրիմատների տարբեր տեսակների համար՝

- Ռիֆտ հովտի տենդ, տուլյարեմիա՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում,

- հեմոռագիկ տենդ (Լասսա, Էբոլա, Մարբուրգ, Դենգե, դեղին տենդ, Արեւմտյան Նեղոսի տենդ), կապիկների ծաղիկ՝ տնտեսության տարածքում կամ վարչական տարածքում, որտեղից արտահանվում են պրիմատները, արձանագրված դեպքերի բացակայության դեպքում:

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ուղարկելու կամ անդամ պետությունների միջեւ տեղափոխելու համար ընտրված վայրի կենդանիները արտահանող երկրի տարածքում նույնականացվում են՝ չիպավորման, օղակավորման կամ դաջման միջոցով եւ պահվում են կարանտինային բազաներում ոչ պակաս, քան 30 օր: Կարանտինի ժամանակ անցկացվում է ամբողջ գլխաքանակի կլինիկական զննում՝ պարտադիր ջերմաչափմամբ: Այդ ընթացքում անցկացվում են հետեւյալ ախտորոշիչ հետազոտությունները՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

- խոշոր երկկճղակավորներ՝ բրուցելյոզի, տուբերկուլյոզի, պարատուբերկուլյոզի, էնզոոտիկ լեյկոզի, բլուտանգի մասով.

- մանր երկկճղակավորներ՝ բրուցելյոզի, պարատուբերկուլյոզի, բլուտանգի մասով.

- միասնբակավորներ՝ խլնախտի, զուգավորման հիվանդության, սուրբայի, պիրոպլազմոզի, նուտալիոզի, ռինոպնեւմոնիայի, ինֆեկցիոն մետրիտի, ինֆեկցիոն անեմիայի, վիրուսային արտերիիտի մասով.

- ջրաքիսներ՝ ալեուտյան հիվանդության մասով.

- թռչուններ՝ օրնիտոզի (պսիտակոզի), թռչունների գրիպի մասով.

- պրիմատներ՝ հեմոռագիկ տենդի (Լասսայի, Էբոլայի, Մարբուրգի,

Դենգեի, դեղին տենդի, Արեւմտյան Նեղոսի տենդի), ՄԻԱՎ վարակի, ավշային խորիոմենինգիտի, հեպատիտի A, B, C տեսակների, կապիկների ծաղիկի, B հերպեսի հարուցիչների հակամարմինների առկայության մասով, էնտերոբակտերիաների խմբի (էշերիխիաների, սալմոնելաների, շիգելաների, կամպիլոբակտերիաների, լեպտոսպիրի, ռիկետսիոզի, բորելիոզի) հարուցիչների առկայության, տուբերկուլյոզի մասով:

Ուղարկելուց ոչ ուշ, քան 20 օր առաջ, կենդանիներին պատվաստում են, եթե վերջին 12 ամսվա ընթացքում նրանք չեն պատվաստվել՝

- բոլոր մսակերներին՝ կատաղության դեմ.
- շներին, աղվեսներին, բետառաղվեսներին, գայլերին, շնագայլերին՝ մսակերների ժանտախտի, վիրուսային էնտերիտի, հեպատիտի, լեպտոսպիրոզի դեմ.
- ջրաքիսներին, ժանտաքիսներին՝ վիրուսային էնտերիտի դեմ.
- ճահճակուղբերին՝ պաստերելյոզի դեմ.
- կատվազգիներին՝ պանլեյկոպենիայի, վիրուսային ռինոտրախետի եւ կալիցիվիրոզի դեմ.
- կրծողներին (ճագարներին)՝ միքսոմատոզի եւ ճագարների վիրուսային հեմոռագիկ հիվանդության դեմ.
- թռչուններին (հավազգիների խմբի)՝ Նյուքասլի հիվանդության դեմ:

Այն անդամ պետության լիազորված մարմինը, որի տարածք իրականացվում է կենդանիների ներմուծում (տեղափոխում), կարող է պահանջել նաեւ հետազոտությունների եւ պատվաստումների իրականացում այլ հիվանդությունների դեմ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***



## Գլուխ 17

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

մթերատվության, տոհմային եւ այլ նպատակներով օգտագործման համար նախատեսված կենդանի ձկներ, անողնաշարավորներ եւ պոլիկիլոթերմ ջրային այլ կենդանիներ, դրանց բեղմնավորված ձկնկիթ, սերմնահեղուկ, թրթուրներ՝ Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխման դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)*

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել մթերատվության, տոհմային եւ այլ նպատակներով օգտագործման համար նախատեսված կենդանի ձկներ, անողնաշարավորներ եւ պոլիկիլոթերմ ջրային այլ կենդանիներ, դրանց բեղմնավորված ձկնկիթ, սերմնահեղուկ, թրթուրներ, որոնց հայթայթվել են բնական ջրամբարներից կամ ծագումով ակվակուլտուրայի այն տնտեսություններից են, որոնք ճանաչվել են որպես վերջին 24 ամսվա ընթացքում պոլիկիլոթերմ ջրային կենդանիների եւ դրանց նմատմամբ զգայունակ տեսակների հատուկ հիվանդությունների ցանկում բերված պոլիկիլոթերմ ջրային կենդանիների եւ զգայունակ տեսակների հիվանդություններից զերծ:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)*

Պոլկիլոթերմ ջրային կենդանիների եւ դրանց նկատմամբ զգայունակ տեսակների  
հատուկ հիվանդությունների ցանկ

Պոլկիլոթերմ ջրային կենդանիների կարգաբանական խումբը	Հիվանդությունների անվանումները եւ դրանց միջազգային ինդեքսը	Հիվանդությունների նկատմամբ զգայունակ տեսակների ցանկ
Ձկներ	Ծածանի գարնանային վիրեմիա (SVC)	Սովորական ծածան ( <i>Cyprinus carpio carpio</i> ), ծածան կոի ( <i>Cyprinus carpio koi</i> ), սովորական գետածածան ( <i>Carassius carassius</i> ), սուլեզոյն գետածածան ( <i>Carassius auratus</i> ), սպիտակ լայնաճակատ ( <i>Hypophthalmichthys molitrix</i> ), խայտաբղետ լայնաճակատ ( <i>Aristichthys nobilis</i> ), սպիտակ ամուր ( <i>Ctenopharyngodon idella</i> ), յազ ( <i>Leuciscus idus</i> ), լին ( <i>Tinca tinca</i> ), սովորական լոքո ( <i>Silurus glanis</i> )
	Ծածան կոիի հերպեսվիրուսային հիվանդություն (KHVD)	Սովորական սազան ( <i>Cyprinus carpio carpio</i> ), ծածան կոի ( <i>Cyprinus carpio koi</i> ), ծածանի դեկորատիվ տեսակներ եւ դրանց խառնածիններ
	Սաղմոնազգիների վիրուսային հեմոռագիկ սեպտիցեմիա (VHS)	Ծովատառեխազգիներ ( <i>Clupea spp.</i> ), սիգազգիներ ( <i>Coregonus sp.</i> ), սովորական գայլաձուկ ( <i>Esox lucius</i> ), պիկշա ( <i>Gadus aeglefinus</i> ), ձողաձուկ ( <i>Gadus morhua</i> ), խաղաղովկիանոսյան սաղմոնազգի ձկներ <i>Oncorhynchus</i> , ծիածանախայտ իշխան ( <i>O. mykiss</i> ), կարմրախայտ ( <i>Salmo trutta trutta</i> ), տյուրբո ( <i>Scophthalmus maximus</i> ), սովորական ձամբոկ ( <i>Thymallus thymallus</i> )
	Հեմոպոետիկ հյուսվածքի ինֆեկցիոն նեկրոզ (IHN)	Խաղաղովկիանոսյան սաղմոնազգի ձկներ <i>Oncorhynchus</i> , կետա ( <i>O. keta</i> ), կիժույ ( <i>O. kisutch</i> ), սիմա ( <i>O. masou</i> ), ծիածանախայտ իշխան ( <i>O. mykiss</i> ), ներկա (սաղմոն կարմիր) ( <i>O. nerka</i> ), չավիչա ( <i>O. tshawytscha</i> ), սապատաձուկ ( <i>O. gorbuscha</i> ), ատլանտյան սաղմոն ( <i>Salmo salar</i> )
	Հեմոպոետիկ հյուսվածքի էպիզոոտիկ նեկրոզ (EHN)	Սովորական պերկես ( <i>Perca fluviatilis</i> ), ծիածանախայտ իշխան ( <i>O. mykiss</i> ), գամբուզիա սովորական ( <i>Gambusia affinis</i> )
	Սաղմոնների ինֆեկցիոն անեմիա (ISA)	Ծիածանախայտ իշխան ( <i>O. mykiss</i> ), կիժույ ( <i>O. kisutch</i> ), սաղմոն սովորական ( <i>Salmo salar</i> ), թխաթույր կարմրախայտ ( <i>Salmo trutta</i> )
	Սաղմոնազգիների ենթաստամոքսային գեղձի ինֆեկցիոն նեկրոզ (IPN)	Ծիածանախայտ իշխան ( <i>O. mykiss</i> ), թխաթույր կարմրախայտ ( <i>Salmo trutta</i> ), լերկաձկներ ( <i>Salvelinus</i> ), ներկա (սաղմոն կարմիր) ( <i>O. nerka</i> ), ատլանտյան սաղմոն ( <i>Salmo salar</i> ), դեղնապոչ լակեդրա ( <i>Seriola quinqueradiata</i> ), տյուրբո ( <i>Scophthalmus maximus</i> ), ձողաձուկ ( <i>Gadus morhua</i> )

	Սիբիրյան թառափի հերպեսվիրուսային հիվանդություն (SbSHVD)	Թառափազգիների ներկայացուցիչներ Acipenseridae
	Թառափազգի ձկների իրիդովիրուսային հիվանդություն (WSIV)	Թառափազգիների ներկայացուցիչներ Acipenseridae
	Ծովային կարմիր բրամի իրիդովիրուսային հիվանդություն (RSIVD)	Ծովային ակվակուլտուրայի օբյեկտներ՝ ծովային բրամներ ( <i>Pagrus major</i> , <i>Acanthopagrus latus</i> , <i>Eyynnis japonica</i> ), լակեդրաներ ( <i>Seriola quinqueradiata</i> , <i>S. dumerili</i> , <i>S. lalandi</i> ) և դրանց խառնածիններ, կորիա ( <i>Rachycentron canadum</i> ), գրուպերներ ( <i>Epinephelus</i> ), զոլավոր պերկեսի խառնածիններ ( <i>Morone saxatilis</i> ), գլխան սովորական ( <i>Mugil cephalus</i> )
	Էպիզոոտիկ խոցային համախտանիշ (EUS)	<i>Acanthopagrus</i> ցեղի ներկայացուցիչներ, արիազգիների ընտանիք ( <i>Ariidae</i> ), ծածանազգիների ընտանիք ( <i>Cyprinidae</i> ), պերկեսակերպերի կարգ ( <i>Perciformes</i> ), օձագլուխների ընտանիք ( <i>Channidae</i> ), երկարատամ ձկների ցեղ ( <i>Clarias</i> ), գլխանների ընտանիք ( <i>Mugilidae</i> ), ծովատառեխազգիների ընտանիք ( <i>Clupeidae</i> ), արգուսազգիների ընտանիք ( <i>Arius</i> sp) և այլն
Կակղամորթներ	Մակաբուծային հիվանդություն <i>Bonamia ostreae</i> -ից (բոնամիոզ) առաջացող (բոնամիոզ)	Տափակ ոստրեններ՝ ավստրալիական ( <i>Ostrea angasi</i> ), չիլիական ( <i>Ostrea chilensis</i> ), Օլիմպիայի ( <i>Ostrea conchaphila</i> ), եվրոպական ( <i>Ostrea edulis</i> ), արգենտինական ( <i>Ostrea puelchana</i> ), ասիական ոստրե ( <i>Ostrea denselammellosa</i> )
	Մակաբուծային հիվանդություն՝ <i>Marteilia refringens</i> -ից առաջացող (մարտելիոզ)	Տափակ ոստրեններ՝ ավստրալիական ( <i>Ostrea angasi</i> ), չիլիական ( <i>Ostrea chilensis</i> ), Օլիմպիայի ( <i>Ostrea conchaphila</i> ), եվրոպական ( <i>Ostrea edulis</i> ), արգենտինական ( <i>Ostrea puelchana</i> ), ուտելի միդիա ( <i>Mutilus edulis</i> ) և սեւծովյան միդիա ( <i>Mutilus galloprovincialis</i> )
Խեցգետնակերպեր	Խեցգետինների ժանտախտ՝ սնկային հիվանդություն՝ <i>Aphanomyces astaci</i> -ից առաջացող	Գետի խեցգետիններ՝ լայնաչանչ խեցգետին ( <i>Astacus astacus</i> ), ավստրալիական ( <i>Austropotamobius pallipes</i> ), ամերիկյան ( <i>Procombarus clarkii</i> ), հեռավորարեւելյան ( <i>Pacifastacus leniusculus</i> ), նեղչանչ խեցգետին ( <i>Astacus leptodactylus</i> )

Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային տարածք ներմուծվող և (կամ) անդամ պետությունների միջև տեղափոխվող մթերատվության, տոհմային և այլ նպատակներով օգտագործման համար

նախատեսված կենդանի ձկները, անողնաշարավորները եւ պոյկիլոթերմ ջրային այլ կենդանիներ 72 ժամվա ընթացքում՝ նախքան ուղարկելը, ենթարկվում են ակնադիտական զննման, որի արդյունքում չպետք է հայտնաբերվեն պոյկիլոթերմ ջրային կենդանիների, այլ կենդանիների կամ մարդու առողջության համար վտանգ ներկայացնող որեւէ վարակի կամ կոնտագիոզ հիվանդությունների նշաններ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել անասնաբույժի հսկողության ներքո՝ պետական անասնաբուժական ծառայությունում գրանցված կարանտինային ձեռնարկության (տեղամասի) պայմաններում 12 °C-ից բարձր ջերմաստիճանում առնվազն 30 օր տեսողությամբ կարանտին անցած՝ բնական ջրամբարներից որսած կենդանի ձկներ, անողնաշարավորներ եւ պոյկիլոթերմ ջրային այլ կենդանիներ: Կարանտինացման ժամանակահատվածում անցկացվում են կենդանի ձկների, անողնաշարավորների եւ պոյկիլոթերմ ջրային այլ կենդանիների ներկայացուցչական ընտրանքի ակնադիտական զննում, եւ դրանց կլինիկական հետազոտություններ հատուկ հիվանդությունների առկայության մասով՝ սույն գլխում նշված պոյկիլոթերմ ջրային կենդանիների եւ զգայունակ տեսակների հատուկ հիվանդությունների ցանկին համապատասխան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Կենդանի ձկների, անողնաշարավորների եւ այլ պոյկիլոթերմ ջրային կենդանիների, դրանց բեղմնավորված ձկնկիթի, սերմնահեղուկի, թրթուրների փոխադրման համար օգտագործվում են փաթեթվածքներ (բեռնարկղեր եւ այլն), որոնք ապահովում են դրանց առողջական վիճակը չփոփոխող պայմաններ (ներառյալ ջրի որակը): Կենդանի ձկները, անողնաշարավորները եւ պոյկիլոթերմ

ջրային մյուս կենդանիները, դրանց բեղմնավորված ձկնկիթը, սերմնահեղուկը, թրթուրները պետք է փաթեթավորված լինեն նոր բեռնարկղերով կամ այլ փաթեթներով, որոնք հիվանդությունների հարուցիչների ոչնչացման նպատակով մաքրվել եւ ախտահանվել են: Փաթեթվածքների (բեռնարկղերի եւ այլն) յուրաքանչյուր միավոր պետք է լինի համարակալված եւ պիտակավորված:

## **Գլուխ 18**

### **ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**մեղրաբեր մեղուներ, իշամեղուներ եւ առվույտի տերեւահատ մեղուների բոժոժներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ իշամեղվի եւ մեղվի ընտանիքներ, դրանց մայր մեղուներ եւ մեղվափաթեթներ, առվույտի տերեւահատ մեղուների թրթուրներ (բոժոժներ), որոնք ծագումով արտահանող երկրների եւ Եվրասիական տնտեսական միության՝ հետեւյալ հիվանդություններից զերծ ապահով տնտեսություններից (մեղվանոցներից, լաբորատորիաներից) եւ վարչական տարածքներից են՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

ակարապիդոզ, ամերիկյան փտախտ, եվրոպական փտախտ, վարրոատոզ (տիզասպանների նկատմամբ կայուն տիզերի ձեւերի առկայություն)՝ մեղրաբեր մեղուների համար վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում կամ տնտեսության տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

ցանկացած հիվանդության, այդ թվում նաեւ՝ մակաբուծական հիվանդությունների մասով կլինիկական հատկանիշների կամ կասկածների բացակայությունը՝ իշամեղուների եւ առվույտի տերեւահատ մեղուների բոժոժների համար:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող բոլոր օբյեկտներն անցել են ստուգում, որը երաշխավորում է *Aethina tumida* բզեզի, դրա ձվերի եւ թրթուրների, ինչպես նաեւ մեղրաբեր մեղուներին ախտահարող այլ վնասատուների, այդ թվում՝ *Tropilaelaps* spp., *Apocephalus borealis* սապատավոր ճանճերի բացակայությունը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Իշամեղուների եւ մեղուների ընտանիքների ընտրությունը կատարվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք կամ անդամ պետության տարածք ուղարկելուց 30 օր, իսկ մայր մեղուներինը՝ 1-3 օր առաջ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Առվույտի տերեւահատ մեղունների բոժոժների ապրանքախմբի ձեւավորումը կատարվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մատակարարի տնտեսության ապահովությունը:

Փոխադրման համար կիրառվում են առաջին անգամ օգտագործվող բեռնարկեր եւ փաթեթավորման նյութեր:

Փոխադրման ժամանակահատվածում օգտագործվող կերերը ծագումով պետք է լինեն մեղունների եւ իշամեղունների վարակիչ հիվանդությունների մասով ապահով տեղանքներից (վարչական տարածքներից) եւ շփում չունենան հիվանդ մեղունների, իշամեղունների հետ:

Մինչ փոխադրման համար իշամեղուններին, մեղրաբեր մեղուններին եւ մայր մեղուններին, առվույտի տերեւահատ մեղուններին փաթեթավորման նյութում տեղավորելը՝ այն ենթարկում են կանխարգելիչ ախտահանման եւ դեզակարիզացիայի:

## Գլուխ 19

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**հյուսիսային եղջերուներ՝ Եվրասիական տնտեսական միության  
մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների  
միջեւ փոխադրելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես

առողջ հյուսիսային եղջերուներ, որոնք պատվաստված չեն բրուցելլոզի դեմ եւ ծագումով կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից կամ տարածքներից են:

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- խոշոր եղջերավոր անասունների բշտիկային ստոմատիտից, հպավարակային պլեյրոպնեմոնիայից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- դաբաղից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)**



- Էնգոռտիկ լեյկոզից՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- բրուցելյոզից, տուբերկուլյոզից եւ պարատուբերկուլյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտից՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Թույլատրվում է ներմուծել կենդանիներ, որոնք չեն ստացել որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ով թույլատրվածների:

Կարանտինի ժամանակ անցկացվում են ախտորոշիչ հետազոտություններ բրուցելյոզի, տուբերկուլյոզի եւ այն անդամ պետության լիազոր մարմնի պահանջով, որի տարածք իրականացվում է ներմուծումը (տեղափոխումը)՝ ինֆեկցիոն այլ հիվանդությունների մասով:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

## Գլուխ 20

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ուղտեր եւ ուղտազգի այլ ներկայացուցիչներ (լամա, ալպակա, վիկունյա)՝  
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ  
(կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք  
ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես  
առողջ ուղտեր եւ ուղտազգի այլ ներկայացուցիչներ, որոնք ծագումով  
կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ՝ գոտիավորմանը  
համապատասխան՝ ապահով տնտեսություններից եւ տարածքներից են՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի  
թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

- ձիերի աֆրիկյան ժանտախտից, զոոնանտրոպոնոզային ժանտախտից,  
հանգուցային մաշկաբորբից՝ վերջին 36 ամսվա ընթացքում երկրի տարածքում.

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)*

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամսվա  
ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ  
վարչական տարածքում.

- ուղտերի ծաղիկից՝ վերջին 6 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- բլուտանգից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- դաբաղից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խլնախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- բրուցեյոզից, տուբերկուլյոզից, պարատուբերկուլյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտից՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Թույլատրվում է ներմուծել կենդանիներ, որոնք չեն ստացել որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ով թույլատրվածների:

Կարանտինի ժամանակ անցկացվում են բլուտանգի, խլնախտի, սուրուի, տուբերկուլյոզի, պարատուբերկուլյոզի, բրուցեյոզի, հպավարակային պլեյրոպնեմոնիայի մասով ախտորոշիչ հետազոտություններ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

## Գլուխ 21

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**պրիմատներ՝ Մաքսային միության մաքսային տարածք ներմուծելու  
եւ (կամ) Կողմերի միջեւ տեղափոխելու դեպքում**

Ուժը կորցրել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2013 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 192 որոշում:

## Գլուխ 22

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**միս եւ այլ սննդային մսային հումք՝ Եվրասիական տնտեսական միության  
մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ  
տեղափոխելու դեպքում**

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի  
թիվ 893 որոշման խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք  
ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել սպանդային, մսի  
վերամշակման ձեռնարկություններում՝ առողջ կենդանիների սպանդից եւ  
վերամշակումից ստացված միս եւ այլ սննդային մսային հումք:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի  
դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)*

Կենդանիները, որոնց միսը եւ մյուս սննդային մսային հումքը նախատեսված է Եվրասիական տնտեսական միության տարածք արտահանելու համար, ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ դրանց մսեղիքը, գլուխները եւ դրանց ներքին օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության: Միսը եւ մյուս սննդային մսային հումքը պետք է ճանաչվեն պիտանի՝ մարդու կողմից սննդի մեջ օգտագործման համար:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Մսեղիքը (կիսամսեղիքը, քառորդամասերը) պետք է ունենան պետական անասնաբուժական վերահսկողության հստակ դրոշմ՝ այն մսի կոմբինատի (մսի սառցասպանդանոցի) անվանման կամ համարի նշմամբ, որտեղ կատարվել է կենդանիների սպանդը: Մասնատված միսը փաթեթվածքի կամ պոլիբլոկի վրա պետք է ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Մականշված պիտակը պետք է սոսնձված լինի փաթեթվածքի վրա այնպես, որ փաթեթվածքն անհնարին լինի բացել առանց մականշված պիտակի ամբողջականությունը խախտելու կամ ամրացրած լինի փաթեթվածքին (զետեղված լինի փաթեթվածքի վրա) այնպես, որ այն հնարավոր չլինի կրկնակի օգտագործել: Այս դեպքում փաթեթվածքի կառուցվածքը պետք է լինի այնպիսին, որ բացելու դեպքում դրա սկզբնական տեսքը հնարավոր չլինի վերականգնել:

Միսը եւ մյուս սննդային մսային հումքը պետք է ծագեն առողջ կենդանիների սպանդի արդյունքում, որոնք մթերվել են կենդանիների հետեյալ հիվանդություններից պաշտոնապես զերծ՝ գոտիավորմանը համապատասխան տնտեսություններում կամ վարչական տարածքներում՝

Կենդանիների բոլոր տեսակների համար՝

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Խոշոր եղջերավոր անասունների համար՝

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիա՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին եւ արտահանող երկրի, գոտու կամ կոմպարտմենտի՝ խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայի մասով ռիսկի դասակարգմանը համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- հպավարակային պլեյրոպնեմոնիա՝ վերջին 24 ամսվա ընթացքում թոքեր ներմուծելու (տեղափոխելու) դեպքում.

- բրուցելյոզ, տուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- էնզոոտիկ լեյկոզ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսությունում:

Ոչխարների եւ այծերի համար.

- ոչխարների սկրեպի՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան.

- մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 6 ամսվա ընթացքում վերջին փստահարված կենդանու սպանդի օրվանից սկսած սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու դեպքում.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- բրուցելյոզ, տուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

Խոզերի համար՝

- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոզերի բշտիկային հիվանդություն՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ վերջին 9 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան այն երկրի տարածքում կամ վարչական տարածքում, որտեղ անցկացվել է սանիտարական սպանդ (stamping out).

- խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- Աուեսկի հիվանդություն՝ երկրի տարածքում ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան՝ գլուխների եւ ներքին օրգանների ներմուծման (տեղափոխման) դեպքում.

- խոզերի էնտերովիրուսային էնցեֆալոմիելիտ (խոզերի տեքսովիրուսային էնցեֆալոմիելիտ, Տեշենի հիվանդություն)՝ վերջին 6 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- տրիխինելլոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում՝ արձանագրված դեպքերի բացակայության դեպքում.

- խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում:

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել՝

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)**

- միս եւ տավարի ու ոչխարի մսից այլ սննդային մսային հումք՝ արտադրված այն կենդանիների սպանդի արդյունքում, որոնք չեն ստացել որոճող կենդանիների սպիտակուցներ պարունակող՝ կենդանական ծագման կերեր՝ բացառությամբ ՄԱԲ-ի Կանոնագրքով առաջարկվող նյութերի.

- խոզի միս՝ հետեւյալ պայմաններից մեկի պահպանմամբ՝

յուրաքանչյուր խոզի մսեղիք հետազոտված է տրիխինելյոզի մասով՝ բացասական արդյունքով

կամ խոզի միս, որը ենթարկվել է սառեցման՝ ինչպես նշված է ստորեւ բերված աղյուսակում՝

Ժամը (ժամերով)	Ջերմաստիճանը (°C)
106	-18
82	-21
63	-23,5
48	-26
35	-29
22	-32
8	-35
1/2	-37

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել այնպիսի մսեղիքից ստացված միս եւ այլ սննդային մսային հումք, որը՝

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)**



- հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության ժամանակ ունի դաբաղին, ժանտախտին, անաերոբ վարակներին, տուբերկուլյոզին, էնզոոտիկ լեյկոզին եւ վարակիչ մյուս հիվանդություններին, հելմինթներով (ցիստիցերկոզ, տրիխինելյոզ, սարկոսպորիդիոզ, օնխոցերկոզ, էխինոկոկ եւ այլն) ախտահարումներին, ինչպես նաեւ՝ տարբեր նյութերով թունավորումների դեպքում բնորոշ փոփոխություններ.

- պահպանման ժամանակահատվածում ենթարկվել է ապաստեցման.

- ունի փչացման նշաններ.

- ազդրի մկանների հաստաշերտում ջերմաստիճանը - 8 °C-ից բարձր է սառեցված մսի համար եւ +4°C-ից բարձր՝ պաղեցվածի համար.

- ներքին օրգանների մնացորդներով, հյուսվածքներում արյունազեղումներով, չհեռացրած թարախակույտերով, բոռերի թրթուրներով, մաքրված շճաթաղանթներով եւ հեռացրած ավշահանգույցներով, մեխանիկական խառնուրդներով է, ինչպես նաեւ ունի մսին ոչ բնորոշ գույն, հոտ, կողմնակի համ (ձկան, դեղամիջոցների, խոտերի եւ այլն).

- պարունակում է պահածոյացման միջոցներ.

- աղտոտված է՝ Եվրասիական տնտեսական միության տարածքում սահմանված պահանջներին համապատասխան՝ մարդու առողջության համար վտանգ ներկայացնող քանակությամբ սալմոնելաներով.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

- մշակված է ներկանյութերով:

Մսի եւ այլ սննդային մսային հումքի մանրէաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում

սահմանված անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

### Գլուխ 23

#### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Թռչնամիս՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել սպանդային ձեռնարկություններում առողջ թռչունների սպանդից ստացված եւ թռչնի վերամշակման ձեռնարկություններում վերամշակված թռչնամիս:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թռչունը, որի միսը նախատեսված է Եվրասիական տնտեսական միության տարածք արտահանելու համար, ենթակա է նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ դրանց մտեղիքը եւ օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի***

**դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Թռչնամիսը պետք է ճանաչվի պիտանի՝ մարդու կողմից սննդի մեջ օգտագործվելու համար, փաթեթվածքի կամ պոլիբլոկի վրա ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Պիտակը պետք է սուսնձված լինի փաթեթվածքի վրա այնպես, որ փաթեթվածքը հնարավոր չլինի բացել առանց պիտակի ամբողջականությունը խախտելու: Այն դեպքում, երբ փաթեթվածքի կառուցվածքը կանխում է դրա չարտոնված բացելը, պիտակը պետք է փաթեթվածքի վրա տեղադրված լինի այնպես, որ այն հնարավոր չլինի կրկնակի օգտագործել:

**(մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)**

Թռչնամիսը պետք է ստացվի առողջ թռչնի սպանդից, որը ծագումով գոտիավորմանը համապատասխան՝ հետեւյալ վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններից կամ վարչական տարածքից է՝

- թռչնի գրիպ, որը, ՄԱԲ-ի Կանոնագրքին համապատասխան, ենթակա է պարտադիր հայտարարագրման՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

- Նյուքասլի հիվանդություն՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում:

**(մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)**

Թռչունն ընդունվում է սպանդի համար այն տնտեսություններից, որտեղ,

ՄԱԲ-ի Կանոնագրքին համապատասխան, իրականացվում է սալմոնելայի մասով հսկողության ծրագիր:

**(մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)**

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել թռչնամիս, որը՝

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության ժամանակ ունի վարակիչ հիվանդություններին, հելմինթներով ախտահարումներին, ինչպես նաեւ՝ տարբեր նյութերով թունավորումների դեպքում, բնորոշ փոփոխություններ.

- փորոտիքից չազատված կամ կիսով չափ ազատված թռչնի միս է.

- զգայորոշման ցուցանիշներով լավորակ չէ.

- մկանի հաստաշերտում ջերմաստիճանը Ցելսիուսի սանդղակով - 12 -ից բարձր է սառեցված թռչնի համար (պահպանման ժամանակ ջերմաստիճանը պետք է լինի Ցելսիուսի սանդղակով -18°աստիճան).

- պարունակում է պահածոյացման միջոցներ.

- աղտոտված է՝ Եվրասիական տնտեսական միության տարածքում սահմանված պահանջներին համապատասխան՝ մարդու առողջության համար վտանգ ներկայացնող քանակությամբ սալմոնելաներով.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- մշակված է ներկանյութերով եւ բուրավետ նյութերով, իոնացնող

ճառագայթամաճ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով.

- ունի տվյալ տեսակի համար ոչ բնորոշ գունավորում (պիգմենտացիա).

(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)

- փչացման նշաններ ունեցող միս է.

- ստացվել է այն թռչնի սպանդից, որը ենթարկվել է բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների եւ այլ դեղամիջոցների ազդեցության, որոնք ներմուծվել են սպանդից առաջ դրանց կիրառման մասով ցուցումներով առաջարկված ժամկետներից ուշ:

Թռչնամսի մանրէաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

## Գլուխ 24

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ձիու միս՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել սպանդային ձեռնարկություններում կլինիկապես առողջ ձիերի սպանդից ստացված եւ մսի վերամշակման ձեռնարկություններում վերամշակված ձիու միսը:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Այն կենդանիները, որոնց միսը նախատեսված է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք արտահանելու համար, պետք է ենթարկվեն նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ մսեղիքը եւ ներքին օրգանները՝ պետական (պաշտոնական) անասնաբուժական ծառայության կողմից անցկացվող հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության: Կենդանիները սպանդից անմիջապես առաջ պետք է ենթարկվեն կլինիկական զննման եւ հետազոտվեն խլնախտի մասով՝ բացասական արդյունքով:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Ձիերի մսեղիքը պետք է ունենա պետական անասնաբուժական վերահսկողության դրոշմ՝ այն սպանդանոցի (մսի կոմբինատի) անվանման կամ համարի նշմամբ, որտեղ կատարվել է կենդանիների սպանդը: Մասնատված միսը փաթեթվածքի կամ պոլիբլոկի վրա պետք է ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Պիտակը պետք է սոսնձված լինի փաթեթվածքի վրա այնպես, որ փաթեթվածքը հնարավոր չլինի բացել առանց պիտակի ամբողջականությունը խախտելու: Այն դեպքում, երբ փաթեթվածքի կառուցվածքը կանխում է դրա չարտոնված բացելը, պիտակը պետք է փաթեթվածքի վրա տեղադրված լինի այնպես, որ այն հնարավոր չլինի կրկնակի օգտագործել:

***(Երրորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Ձիու միսը պետք է ծագումով լինի կենդանիների հետեւյալ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններում մթերված կենդանիներից՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- ձիերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում, եթե երկրում իրականացվում է վերահսկողության ծրագիր.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- ինֆեկցիոն անեմիայ՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- խլնախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում, եթե երկրում իրականացվում է վերահսկողության ծրագիր.

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)**

- էպիզոտիկ լիմֆանգոիտ՝ վերջին 2 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել միս, որը՝

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության ժամանակ ունի վարակիչ հիվանդություններին, հելմինթներով ախտահարումներին, ինչպես նաեւ՝ տարբեր նյութերով թունավորումների դեպքում բնորոշ փոփոխություններ.

- ներքին օրգանների մնացորդներով, հյուսվածքներում արյունազեղումներով, չհեռացրած թարախակույտերով, բոռերի թրթուրներով, մաքրված շճաթաղանթներով եւ հեռացրած ավշահանգույցներով, մեխանիկական խառնուրդներով է, ինչպես նաեւ ունի մսին ոչ բնորոշ հոտ եւ կողմնակի համ.

- ազդրի մկանների հաստաշերտում ջերմաստիճանը Յելսիուսի սանդղակով — 8°աստիճանից բարձր է սառեցված մսի համար եւ Յելսիուսի սանդղակով +4°աստիճանից բարձր՝ պաղեցրածի համար.

- սերմանված է սալմոնելաներով եւ մանրէական այլ վարակների հարուցիչներով.

- մշակված է ներկանյութերով, իոնացնող ճառագայթմամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով.



- ստացվել է այն կենդանիների սպանդից, որոնք ենթարկվել են բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների եւ այլ դեղորայքային միջոցների ազդեցությանը, որոնք ներմուծվել են սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ուշ:

Ձիու մսի մանրէաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

## Գլուխ 25

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

պահածոներ, երշիկեղեն եւ պատրաստի մսային այլ արտադրատեսակներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել մսից, ենթամթերքից եւ բոլոր տեսակի կենդանիների, թռչունների ճարպից պատրաստի

արտադրատեսակներ եւ այլ մսային արտադրատեսակներ, որոնք նախատեսված են մարդու կողմից սննդի մեջ օգտագործման համար եւ, որոնք պատրաստված են մսի վերամշակման ձեռնարկություններում (այսուհետ՝ պատրաստի մսամթերք):

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Մսային հումքը, որից արտադրված են մսային պատրաստի արտադրատեսակներ, պետք է ստացված լինի կլինիկապես առողջ կենդանիներից եւ անցնի անասնաբուժասանիտարական փորձաքննություն:

Երկրի՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի պահանջներին համապատասխան կարգավիճակ ունենալու դեպքում չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության տարածք բեռնել այն կենդանիների սպանդից ստացված պատրաստի մսամթերք, որոնք ենթարկվել են բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների եւ այլ դեղամիջոցների ազդեցությանը, որոնք ներմուծվել են սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ուշ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Պատրաստի մսամթերքը պետք է ճանաչվի պիտանի՝ մարդու կողմից սննդի մեջ օգտագործվելու համար: Արտադրանքը պետք է ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ) փաթեթվածքի կամ պոլիբլոկի վրա: Պիտակը պետք է սոսնձված լինի փաթեթվածքի վրա այնպես, որ փաթեթվածքը հնարավոր չլինի բացել առանց պիտակի ամբողջականությունը խախտելու: Այն դեպքում, երբ փաթեթվածքի կառուցվածքը կանխում է դրա չարտոնված բացելը, պիտակը պետք է փաթեթվածքի վրա տեղադրված լինի այնպես, որ հնարավոր չլինի դրա կրկնակի օգտագործումը:

***(չորրորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Պատրաստի մասմթերքի մանրէաբանական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել պատրաստի մասմթերք՝ հերմետիկ փակված փաթեթվածքում՝ չխախտված տարայով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

## Գլուխ 26

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ընտանի ճագարների միս՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել սպանդային

ձեռնարկություններում առողջ կենդանիների սպանդից ստացված եւ մսի վերամշակման ձեռնարկություններում վերամշակված տնային ճագարների միսը:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

Ճագարները ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ մսերիքը եւ օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության: Ճագարների միսը պետք է ճանաչվի պիտանի՝ մարդու կողմից սննդի մեջ օգտագործվելու համար, եւ փաթեթվածքի վրա ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Մականշված պիտակը պետք է փաթեթվածքի վրա սոսնձված լինի այնպես, որ անհնարին լինի փաթեթվածքը բացել առանց մականշված պիտակի ամբողջականությունը խախտելու:

Միսը պետք է ծագի առողջ ճագարների սպանդից՝ գոտիավորմանը համապատասխան՝ վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններից եւ (կամ) վարչական տարածքից՝

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)**

- միքսոմատոզից, տուլյարեմիայից, պաստերելյոզից, լիստերիոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսությունում.

- ճագարների հեմոռագիկ հիվանդությունից՝ վերջին 60 օրվա ընթացքում մինչեւ կենդանիներին սպանդանոց ուղարկելը՝ տնտեսության տարածքում:

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)**

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել ճագարի միս, որը՝

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության ժամանակ ունի վարակիչ հիվանդություններին, հեղինակներով ախտահարումներին, ինչպես նաև՝ տարբեր նյութերով թունավորումների դեպքում բնորոշ փոփոխություններ.

- զգայորոշման ցուցանիշներով լավորակ չէ.

- պարունակում է կոնսերվանտներ.

- սերմանված է սալմոնելաներով կամ մանրէական այլ վարակների հարուցիչներով.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- մշակված է ներկանյութերով եւ բուրավետ նյութերով, իոնացնող ճառագայթամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով.

- ունի մուգ գունավորում (պիգմենտացիա).

- պահպանման ժամանակ ենթարկվել է ապաստոեցման.

- մկանի հաստաշերտում ջերմաստիճանը Ցելսիուսի սանդղակով - 12 աստիճանից բարձր է ճագարի սառեցված մսի համար (պահպանման ժամանակ ջերմաստիճանը պետք է լինի Ցելսիուսի սանդղակով -18 աստիճան).

- այն ճագարների սպանդից ստացված միսը, որոնք ենթարկվել են այնպիսի բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութերի, թիրեոստատիկ պատրաստուկների, հակաբիոտիկների, թունաքիմիկատների եւ այլ դեղամիջոցների ազդեցությանը, որոնք ներմուծվել են սպանդից առաջ՝ դրանց կիրառման ցուցումներով առաջարկվող ժամկետներից ուշ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Մսի մանրէաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական եւ

ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշման խմբագրությամբ)***

## Գլուխ 27

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**խոշոր եւ մանր եղջերավոր անասուններից ստացված կաթ եւ կաթնամթերք՝  
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ  
(կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կենդանիների վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններից առողջ կենդանիներից ստացված կաթ եւ կաթնամթերք՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի  
թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

- դաբադից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը

համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- հպավարակային պլեյրոպնեյմոնիայից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- էնզոոտիկ լեյկոզից՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- խոշոր եղջերավոր անասունների բրուցելյոզից, տուբերկուլյոզից, պարատուբերկուլյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսությունում.

- ոչխարների եւ այծերի բրուցելյոզից, մանր եղջերավոր անասունների տուբերկուլյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսությունում.

- ոչխարների եւ այծերի ծաղիկից՝ վերջին 6 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում:

Կաթնամթերքի արտադրության համար օգտագործվող կաթն անցել է ջերմամշակում, որը բավարար է մարդու առողջության համար վտանգ ներկայացնող ախտածին մանրէների ոչնչացման համար: Մատակարարվող կաթնամթերքը պետք է ենթարկվի վերամշակման գործընթացի, ինչի արդյունքում պետք է երաշխավորվի կենսունակ ախտածին ֆլորայի բացակայությունը: Կաթնամթերքը ճանաչվում է պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար:

Կաթի եւ կաթնամթերքի մանրէաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել զգայորոշման փոփոխված ցուցանիշներ ունեցող կամ փաթեթվածքի ամբողջականության խախտմամբ կաթ եւ կաթնամթերք:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

## Գլուխ 28

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

վայրի կենդանիների միս՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել վայրի կենդանիների (փետրավոր որսի) միս՝ ներառյալ այնպիսի էկզոտիկ կենդանիների



միսը, ինչպիսիք կոկորդիլոսը, կենգուրուն, կրիան, ջայլամն են եւ այլն, որոնց որսը թույլատրված է, այդ թվում՝ փակ տարածքում կամ դրանց բնակվելու վայրում աճեցվածների միսը, որն ստացվել է մսի վերամշակման ձեռնարկություններում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Միսը պետք է ծագումով լինի առողջ կենդանիների (փետրավոր որսի) եւ էկզոտիկ կենդանիների սպանդի արդյունքում, որոնք բնակվել են (պահվել են) այնպիսի որսորդական հանդակներում կամ դրանց աճեցման ձեռնարկություններում եւ որոնք պաշտոնապես զերծ են կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից՝

Կենդանիների բոլոր տեսակների համար՝

- կատաղություն՝ վերջին 6 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.
- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում որսորդական հանդակի, տնտեսության տարածքներում կամ բնակվելու այլ վայրում.

խոշոր որոճող երկկճղակավորների համար՝

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.
- խոշոր եւ մանր եղջերավոր անասունների հպավարակային պլեյրոպնեմոնիա՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.
- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- հեմոռագիկ սեպտիցեմիա՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիա եւ ոչխարների սկրեպի՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի պահանջներին համապատասխան.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբ (պալարախտ)՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 4 տարվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- բրուցելյոզ, տուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակվելու այլ վայրում.

պարբերությունը հանվել է 2013 թվականի փետրվարի 1-ից: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 274 որոշում.

Մանր որոճող երկկճղակավորների համար՝

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- ոչխարների սկրեպի՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի պահանջներին համապատասխան.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 274 որոշման խմբագրությամբ)***

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ, մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- Ռիֆտ հովտի տենդ՝ վերջին 48 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- հպավարակային պլեյրոպնեմոնիա, բլուտանգ՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- յոթերորդ - ութերորդ պարբերությունները հանվել են: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- մեդի-վիսնա՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- տուբերկուլյոզ, բրուցելյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

- ոչխարների եւ այծերի ծաղիկ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

Մանր չորոճող երկկճղակավորների համար՝

- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- վեցերորդ - յոթերորդ պարբերությունները հանվել են: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

Միասնբակավորների համար՝

- դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- էպիզոտիկ լիմֆանգիտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- խլնախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- հինգերորդ-վեցերորդ պարբերությունները հանվել են: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

Ճագարների եւ նապաստակների համար՝

- միքսոմատոզ, տուլյարեմիա, պաստերելյոզ, լիստերիոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքներում կամ բնակվելու այլ վայրում.

- ճագարների վիրուսային հեմոռագիկ հիվանդություն՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսությունում.

Փետրավոր որսի (թռչնի) համար՝

- թռչունների գրիպի բոլոր շճատիպերը՝ վերջին 6 ամսվա ընթացքում երկրի տարածքում.

- Նյութասլի հիվանդություն՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) (եթե հիվանդությունն առաջացել է ընտանի թռչունների մոտ) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- ծաղիկ-դիֆտերիտ, օրնիտոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության (աճեցման ձեռնարկության), որսորդական հանդակի տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Վայրի կենդանիները (փետրավոր որսը) եւ էկզոտիկ կենդանիները, որոնց միսը նախատեսված է Եվրասիական տնտեսական միության տարածք արտահանելու համար, ենթակա են նախասպանդային անասնաբուժական

զննման, իսկ գլուխները, ներքին օրգանները եւ մսեղիքը (բուրո կենդանիների՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Միսը պետք է ճանաչվի պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար :

Մսեղիքը պետք է ունենա պետական անասնաբուժական վերահսկողության դրոշմ՝ այն սպանդանոցի (մսի կոմբինատի) անվանման կամ համարի նշմամբ, որտեղ կատարվել է վայրի կենդանիների վերամշակումը: Մասնատված միսը պետք է փաթեթվածքի կամ պոլիբլոկի վրա ունենա մականշվածք (անասնաբուժական դրոշմ): Պիտակը պետք է սոսնձված լինի փաթեթվածքի վրա այնպես, որ փաթեթվածքը հնարավոր չլինի բացել առանց պիտակի ամբողջականությունը խախտելու: Այն դեպքում, երբ փաթեթվածքի կառուցվածքը կանխում է դրա չարտոնված բացելը, պիտակը պետք է փաթեթվածքի վրա տեղադրված լինի այնպես, որ այն հնարավոր չլինի կրկնակի օգտագործել:

***(տրասներկուերորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Մսի եւ այլ մսային սննդային հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննությունն անցկացնելու արդյունքում չպետք է հայտնաբերվեն վարակիչ հիվանդություններին, ինչպես նաեւ հելմինթներով ախտահարումներին բնորոշ փոփոխություններ, չմաքրված շճաթաղանթներ, չհեռացրած ավշահանգույցներ:

Կենդանիների միսը (յուրաքանչյուր մսեղիք) պետք է հետազոտվի տրիխինելյոզի մասով՝ բացասական արդյունքով:

Միսը չպետք է ունենա հեմատոմաներ, չհեռացրած թարախակույտեր, բոռերի թրթուրներ, մեխանիկական աղտոտումներ, մսին ոչ բնորոշ ձկան, դեղաբույսերի, դեղամիջոցների եւ այլնի հոտ եւ կողմնակի համ:

Միսը պետք է պահպանվի եւ փոխադրվի ջերմաստիճանային ռեժիմի պահպանմամբ, ազդրի մկանների հաստաշերտում ջերմաստիճանը պետք է լինի - 8 °C-ից ոչ բարձր՝ սառեցված մսի համար (-18 °C-ի ջերմաստիճանում պահպանելու դեպքում) եւ +4°C-ից բարձր՝ պաղեցրած մսի համար. չենթարկվի ապասառեցման, չպարունակի պահածոյացման միջոցներ, չպետք է սերմանված լինի սալմոնեյաներով կամ մանրէական այլ ինֆեկցիաների հարուցիչներով, չմշակվի ներկանյութերով, իոնացնող ճառագայթմամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով:

Մսի մանրէաբանական, ֆիզիկաքիմիական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**ձկից, խեցգետնակերպերից, կակղամորթներից, արդյունագործության այլ օբյեկտներից եւ դրանց վերամշակման արդյունքից ստացվող սննդամթերք՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել ջրային կենսաբանական ռեսուրսներից ստացված արտադրանք (կենդանի, պաղեցրած, սառեցրած ձուկ, ձկնկիթ, խեցգետնակերպեր, կակղամորթներ, կաթնասուններ եւ ջրային այլ կենդանիներ ու արդյունագործության օբյեկտներ) (այսուհետ՝ ձկնային արտադրանք), որն աճեցվել կամ արդյունահանվել է էկոլոգիապես մաքուր ջրամբարներում (ջրատարածքներում), ինչպես նաեւ ձեռնարկություններում դրանց վերամշակումից ստացված սննդամթերքը, որոնց նկատմամբ անասնաբուժասանիտարական սահմանափակումներ սահմանված չեն եղել:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Ձկնային արտադրանքը պետք է ենթարկվի մակաբույծների, մանրէական եւ վիրուսային վարակների առկայության մասով հետազոտության:

Թույլատրելի նորմերի սահմաններում մակաբույծների առկայության դեպքում ձկնային արտադրանքը պետք է վարակազերծվի գոյություն ունեցող մեթոդներով:



Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել ձկնային արտադրանք, որը՝

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- սառեցված է, մթերքի հաստաշերտում ջերմաստիճանը - 8 °C-ից բարձր է.
- սերմանված է սալմոնելաներով կամ մանրէական այլ վարակների հարուցիչներով.
- մշակված է ներկանյութերով, իոնացնող ճառագայթամամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով.
- վարակիչ հիվանդություններին բնորոշ փոփոխություններով է.
- զգայորոշման ցուցանիշներով լավորակ չէ.
- պահպանման ժամանակահատվածում ենթարկվել է ապասառեցման.
- հետեւյալ ընտանիքների թունավոր ձկների՝ (Tetraodontidae, Molidae, Diodontidae և Canthigasteridae).

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)**

- պարունակում է մարդու առողջության համար վտանգավոր բիոտոքսիններ:

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշման խմբագրությամբ)**

Երկփեղկ կակղամորթները, փշամորթները, թաղանթավորները եւ ծովային փորոտանիները (այսուհետ՝ կակղամորթներ) մաքրման կենտրոններում պետք է անցնեն անհրաժեշտ պահորակում:

Անասնաբուժասանիտարական փորձաքննություն անցկացնելիս ձկնային

արտադրանքը պետք է ճանաչվի պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար, եւ չպետք է պարունակի բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութեր, թիրեոստատիկ պատրաստուկներ, հակաբիոտիկներ, այլ դեղամիջոցներ եւ թունաքիմիկատներ:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշման խմբագրությամբ)***

Ձկնային արտադրանքի մանրէաբանական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները, ֆիկոտոքսինների եւ այլ աղտոտիչների պարունակությունը (կակղամորթների համար) պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու պահանջներին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

### Գլուխ 30

#### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**բնական մեղր եւ մեղվաբուծական մթերքներ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել բնական մեղր եւ մեղվաբուծական մթերքներ, որոնք ստացվել են գոտիավորմանը

համապատասխան այնպիսի տնտեսություններից (մեղվանոցներից) եւ վարչական տարածքներից, որոնք զերծ են ամերիկյան փտախտից, Եվրոպական փտախտից, նոզեմատոզից՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Մեղրը եւ մեղվաբուծական մթերքները պետք է ճանաչվեն պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար:

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել մեղր եւ մեղվաբուծական մթերքներ, որոնք՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

- ունեն զգայորոշման, ֆիզիկաքիմիական փոփոխված ցուցանիշներ կամ փաթեթվածքի խախտված ամբողջականություն.

- պարունակում են բնական կամ սինթետիկ էստրոգեն, հորմոնալ նյութեր, թիրեոստատիկ պատրաստուկներ:

Բնական մեղրի եւ մեղվաբուծական մթերքների մեջ չի թույլատրվում այնպիսի դեղապատրաստուկների մնացորդների առկայությունը, ինչպիսիք են քլորամֆենիկոլը, քլորֆարմազինը, կոլխիցինը, դապսոնը, դիմետրիդազոլը, նիտրոֆուրանները, ռոնիդազոլը, ինչպես նաեւ կումաֆոսը՝ 100 մկգ/կգ-ից ոչ ավելի, եւ ամիտրազը՝ 200 մկգ/կգ-ից ոչ ավելի պարունակությամբ:

Մեղրի եւ մեղվաբուծական մթերքների մեջ չի թույլատրվում այլ դեղապատրաստուկների մնացորդների պարունակություն, որոնք օգտագործվել են մեղրի բուժման եւ մշակման համար: Արտադրողը պետք է նշի այն բոլոր թունաքիմիկատները, որոնք օգտագործվել են մեղրի հավաքման եւ

մեղվաբուժական մթերքի արտադրության ընթացքում:

Մեղրի եւ մեղվաբուժական մթերքների քիմիաթունաբանական (ծանր մետաղներ, թունաքիմիկատներ), ռադիոլոգիական եւ այլ ցուցանիշներ պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու նորմերին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

### Գլուխ 31

#### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ձվի փոշի, մելանժ, ալբումին եւ հավի ձվի վերամշակումից ստացված այլ սննդամթերք՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել ձվի փոշի, մելանժ, ալբումին եւ հավի ձվի վերամշակումից ստացված այլ սննդամթերք, որոնք ստացվել են առողջ թռչնից՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից, եւ արտադրվել ձեռնարկություններում, որոնց նկատմամբ անասնաբուժասանիտարական սահմանափակումներ չեն սահմանվել:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Վերամշակման համար օգտագործվող ձուն պետք է ծագումով լինի կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- թռչնի գրիպից, որը, ՄԱԲ-ի Կանոնագրքին համապատասխան, ենթակա է պարտադիր հայտարարագրման՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

***պարբերությունը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշում.***

- Նյութասլի հիվանդությունից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում կամ ապրանքը ենթարկել են Նյութասլի հիվանդության վիրուսի ակտիվազրկման (ինֆեկցիոն լինելուց զրկել)՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի դրույթների համաձայն, եւ մշակումից հետո ձեռնարկվել են բոլոր պատշաճ միջոցները՝ Նյութասլի հիվանդության վիրուսի հավանական աղբյուրի հետ ձվամթերքի շփումը թույլ չտալու համար.

**(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)**

**պարբերությունը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշում:**

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել ձվից սննդային արտադրանք, որը՝

**(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)**

- ունի փոփոխված օրգանոլեպտիկ ցուցանիշներ կամ փաթեթվածքի խախտված ամբողջականություն.

- սերմանված է սալմոնելաներով կամ մանրէական այլ վարակների հարուցիչներով.

- մշակված է քիմիական նյութերով, իոնացնող ճառագայթմամբ կամ ուլտրամանուշակագույն ճառագայթներով:

Ձվից կամ ձվի պարունակությամբ մատակարարվող մթերքները պետք է ենթարկվեն վերամշակման գործընթացի, ինչի արդյունքում երաշխավորվում է կենսունակ ախտածին ֆլորայի բացակայությունը:

Արտահանող երկրի իրավասու պետական ծառայության կողմից ձվից սննդային արտադրանքը պետք է ճանաչվի պիտանի՝ մարդկանց կողմից սննդի մեջ օգտագործվելու եւ առանց սահմանափակումների ազատ վաճառքի համար:

Ձվից սննդային արտադրանքի մանրէաբանական, քիմիաթունաբանական, ռադիոլոգիական եւ այլ ցուցանիշներ պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու նորմերին:

*(Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

## Գլուխ 32

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

սննդային ձու՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել սննդային ձու, որը ստացվել է առողջ թռչնից՝ կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից, եւ արտադրվել այն ձեռնարկություններում, որոնց նկատմամբ անասնաբուժասանիտարական սահմանափակումներ չեն սահմանվել:

*(Եվրասիական փնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Ձուն պետք է ծագումով լինի կենդանիների եւ թռչունների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)*

- ՄԱԲ-ի Կանոնագրքին համապատասխան՝ պարտադիր հայտարարագրման ենթակա գրիպից՝ վերջին 6 ամսվա ընթացքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- Նյութասլի հիվանդությունից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- օրնիտոզից (պսիտտակոզից), ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Սննդային ձուն պետք է ճանաչվի պիտանի՝ սննդի մեջ օգտագործելու համար :

Սննդային ձվի մանրէաբանական, քիմիաթունաբանական եւ ռադիոլոգիական ցուցանիշները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական միության տարածքում գործող անասնաբուժական եւ սանիտարական կանոններին ու նորմերին:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***



### Գլուխ 33

#### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

կաշվե, եղջերակճղակային, աղիքային, մուշտակամորթու, ոչխարամորթու եւ գառան մորթու հումք, բուրդ եւ այծի մոհեր, խոզաստեւ, ձիու մազ, հավի, բադի, սագի եւ այլ թռչունների փետուր ու աղվափետուր՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կաշվե, եղջերակճղակային, աղիքային, մուշտակամորթու, ոչխարամորթու եւ գառան մորթու հումք, բուրդ, այծի մոհեր, խոզաստեւ, ձիու մազ, հավի, բադի, սագի եւ այլ թռչունների փետուր ու աղվափետուր, ինչպես նաեւ կենդանական այլ հումք, որոնք ստացվել են առողջ կենդանիներից (թռչուններից)՝ համապատասխան կենդանիների վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններից, եւ արտադրվել ձեռնարկություններում:

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Հումքը ծագումով կենդանիների (թռչունների) ընկալունակ տեսակների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից է՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)*

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից եւ ոչխարների սկրեպիից՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի պահանջներին համապատասխան.

- խոզերի աֆրիկյան ժանտախտից, ձիերի աֆրիկյան ժանտախտից եւ խոշոր ու մանր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշման խմբագրությամբ)***

- դաբաղից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- վարակիչ հանգուցային մաշկաբորբից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- ոչխարների եւ այծերի ծաղիկից՝ վերջին 6 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- սիբիրախտից՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- թռչնի գրիպից, որը, ՄԱԲ-ի Կանոնագրքին համապատասխան, ենթակա է պարտադիր հայտարարագրման՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- Նյուքասլի հիվանդությունից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական

տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

Կաշվե, ոչխարամորթու եւ գառան մորթու հումքը, ինչպես նաեւ մուշտակամորթ հավաքովի հումքը պետք է հետազոտվի սիբիրախտի մասով:

***(Երրորդ մաս՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշման խմբագրությամբ)***

Կաշվե եւ մորթե հումքը պետք է ունենա հստակ մակնշում (հաշվեպիտակ):

Պահածոյացման մեթոդները պետք է համապատասխանեն միջազգային պահանջներին եւ ապահովեն հումքի անասնաբուժասանիտարական անվտանգությունը:

Չի թույլատրվում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել հավաքովի հումք՝ բացի մուշտակամորթու եւ գառան մորթու հումքից:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Տաք լվացման չենթարկված բուրդը, այծի մոհերը, խոզաստեղը, ձիու մազը, աղվափետուրը եւ փետուրն ուղարկվում են հետագա վերամշակման (լվացման եւ ախտահանման) այն անդամ պետության ձեռնարկություններ, որի տարածք դրանք ներմուծվել կամ տեղափոխվել են:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

## Գլուխ 34

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ձկից, ծովային կաթնասուններից, խեցգետնակերպերից եւ անողնաշարավորներից ստացված կերային ալյուր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել ձկից, ծովային կաթնասուններից, խեցգետնակերպերից եւ անողնաշարավորներից՝ դրանց վերամշակման ընթացքում ստացված կերային ալյուր, որը նախատեսված է համակցված կերերի մշակման եւ գյուղատնտեսական կենդանիների, թռչունների ու մորթատու կենդանիների կերակրման համար (այսուհետ՝ ձկնալյուր), եւ որը բեռնառաքվում է ձկնալյուրը պետք է արտադրված լինի այն ձեռնարկություններում, որոնց նկատմամբ չեն սահմանվել անասնաբուժասանիտարական սահմանափակումներ եւ որոնք տեղակայված են կենդանիների վարակիչ հիվանդությունների մասով ապահով տարածքներում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Ձկնալյուրը պետք է բավարարի անասնաբուժասանիտարական հետեւյալ պահանջները՝

Ընդհանուր մանրէական սերմնավորումը	500 հազ. միկրոբային բջջից ոչ ավելի մեկ գրամում՝
Ախտածին միկրոֆլորա	չի թույլատրվում.
այդ թվում՝ սալմոնելա 25 գրամում	չի թույլատրվում.
Էնտերոպաթոգեն էշերիխիաներ	չի թույլատրվում.
Բոտուլինային տոքսին	չի թույլատրվում.
Պերօքսիդներ	0,1%-ից ոչ ավելի՝ ըստ յոդի.
Ալդրին	չի թույլատրվում.
ՀՔՑՀ (իզոմերների գումարը)	0,2 մգ/կգ-ից ոչ ավելի.
ԴԴՏ (մետաբոլիտների գումարը)	0,4 մգ/կգ-ից ոչ ավելի.
Հեպտաքլոր	չի թույլատրվում.
Կապար	5,0 մգ/կգ-ից ոչ ավելի.
Կադմիում	1 մգ/կգ-ից ոչ ավելի
(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)	
Սնդիկ	0,5 մգ/կգ-ից ոչ ավելի.
Արսեն	2,0 մգ/կգ-ից ոչ ավելի.
Ցեզիում 134, 137 ռադիոնուկլիդների պարունակություն	չի գերազանցում 1,62 x 10(8) կյուրի/կգ (600 բեքերելը).
Պղինձ	80 մգ/կգ-ից ոչ ավելի.
(պարբերությունը ներմուծվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշմամբ)	
Ցինկ	100 մգ/կգ-ից ոչ ավելի
(պարբերությունը ներմուծվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշմամբ)	

Մթերքը պետք է ջերմամշակման ենթարկվի +80°C-ից ոչ ցածր ջերմաստիճանում՝ 30 րոպեի ընթացքում:

## Գլուխ 35

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Կենդանական ծագման, այդ թվում՝ թռչնից եւ ձկնից ստացված կերեր  
եւ կերային հավելումներ՝ Եվրասիական տնտեսական միության  
մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների  
միջեւ տեղափոխելու դեպքում

*(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012  
թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք  
ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել այն կենդանիների  
հումքից արտադրված կերեր եւ կերային հավելումներ, որոնք ծագումով  
կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տնտեսություններից են՝

*(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի  
թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)*

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայից եւ  
ոչխարների սկրեպիից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի պահանջներին  
համապատասխան.

- խոզերի աֆրիկյան ժանտախտից՝ 3 տարվա ընթացքում  
գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական  
տարածքում.

- ձիերի ժանտախտից, խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝  
վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի  
տարածքում կամ վարչական տարածքում.

- խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրում կամ վարչական տարածքում, առնվազն վերջին երեք ամսվա ընթացքում պահվել են այդտեղ.

- ոչխարների եւ այծերի ծաղիկից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտից՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ձիերի գրիպից՝ վերջին 21 օրվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում, վարչական տարածքում, կամ դրանք մշակվել են այնպես, որ ապահովվի վիրուսի ակտիվագրկումը.

- թռչունների գրիպից՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում, կամ վերջին 21 օրվա ընթացքում պահվել են այդ տնտեսության տարածքում, կամ դրանք մշակվել են այնպես, որ ապահովվի վիրուսի ակտիվագրկումը.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- Նյուքասլի հիվանդությունից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ նախքան սպանդը.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- օրնիտոզից (պսիտտակոզից)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում:

Կերերի եւ կերային հավելումների արտադրության համար չեն օգտագործվում որոճող կենդանիների սպիտակուցներ՝ բացառությամբ ՄԱԲ-ի Կանոնագրքով առաջարկված նյութերի:

***(Երկրորդ մաս՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

Կերերի պատրաստման համար հումքը պետք է լինի միայն սպանդային ծագման եւ ենթակա է հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

Կերերի եւ կերային հավելումների արտադրության գործընթացում օգտագործվող հումքը պետք է մշակվի  $+133^{\circ}\text{C}$ -ից ոչ ցածր ջերմաստիճանում ( $271,4^{\circ}\text{F}$ ), 20 րոպեից ոչ պակաս տեւողությամբ 3 բար ճնշման տակ ( $42,824$  Ֆունտ՝ մեկ քառակուսի սմ մակերեսի վրա) կամ պետք է մշակվի ջերմամշակման այլընտրանքային համակարգի համաձայն, որը սահմանված մանրէաբանական ստանդարտի մասով ապահովում է անվտանգության համապատասխան պահանջներ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 14 որոշման խմբագրությամբ)***

Կերերը եւ կերային հավելումները չպետք է պարունակեն սալմոնելաներ, բոտուլինատոքսին (14%-ից ավելի խոնավությամբ պահածոյացված կերերի համար), էնտերոպաթոգեն եւ անաերոբ միկրոֆլորա: Մանրէային ընդհանուր սերմնավորումը չպետք է գերազանցի 500 հազար միկրոբային բջիջը՝ 1 գրամում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 244 որոշման խմբագրությամբ)***



**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**Կենդանիների համար նախատեսված բուսական ծագման կերեր՝  
Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ  
(կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի  
դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել՝ կերային հումք, բուսական ծագման կերեր եւ բուսական ծագման բաղադրիչներ պարունակող կերեր (ֆուրաժային հատիկ, սոյայի հատիկներ, ոլոռ, տապիոկ, գետնանուշի, սոյայի, արեւածաղկի աղած քուսպ եւ այլն)՝ կենդանիների համար (այսուհետ՝ կերեր), որոնք ծագում եւ բեռնառաքվում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ վարչական տարածքներից՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի  
թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի  
թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

- խոշոր եւ մանր եղջերավոր անասունների ժանտախտից, խոզերի աֆրիկյան եւ դասական ժանտախտից, ձիերի աֆրիկյան ժանտախտից, դաբաղից, ոչխարների եւ այծերի ծաղիկից, բարձր ախտածին գրիպից՝ վերջին 12 ամսվա ընթացքում վարչական տարածքում (նահանգ, գավառ, դեպարտամենտ, հող, մարզ, երկրամաս եւ այլն):

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի  
թիվ 569 որոշման խմբագրությամբ)***

Կերերը ներմուծվում կամ տեղափոխվում են վերամշակող ձեռնարկություններից:

Կերերը չպետք է թունավոր լինեն կենդանիների համար:

Կերերը չպետք է պարունակեն կերի զանգվածի 1 %-ը գերազանցող կոնցենտրացիայով՝ ֆուգարիոզի նշաններով հատիկներ:

**(չորրորդ մաս՝ Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)**

Կերերը չպետք է պարունակեն սահմանված նորմերը գերազանցող ծանր մետաղներ, միկոտոքսիններ եւ թունաքիմիկատներ:

**(մասը ներմուծվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշմամբ)**

**Առավելագույն թույլատրելի քանակները ֆուրաժային հատիկի եւ կերային այլ միջոցների առանձին տեսակների համար**

1. Տորեն, գարի, վարսակ՝

ա) թունավոր տարրեր՝

սնդիկ	0,03
կադմիում	0,1
կապար	0,2
արսեն	0,2

բ) միկոտոքսիններ՝

զեարալենոն	0,1
S-2 տոքսին	0,06

դեզօքսինիլալենոլ	1,0
աֆլատոքսին B1	0,002.
օխրատոքսին A	0,005

Աֆլատոքսինների հանրագումարը

1	2	2	2	
B	B	G	G	0,004

գ) թունաքիմիկատներ (արտադրության, պահպանման եւ փոխադրման ժամանակ դրանց կիրառման մասին անհրաժեշտ տվյալները՝ ըստ յուրաքանչյուր մատակարարման):

2. Եգիպտացորեն՝

ա) թունավոր տարրեր՝

սնդիկ	0,02
կադմիում	0,1
կապար	0,2.

բ) միկոտոքսիններ՝

աֆլատոքսին B1	0,002.
զեարալենոն	0,1
S-2 տոքսին	0,06
դեզօքսինիլալենոլ	1,0
օխրատոքսին A	0,005

Աֆլատոքսինների հանրագումարը

1	2	2	2	
B,	B	G	G	0,01

գ) թունաքիմիկատներ (արտադրության, պահպանման եւ փոխադրման ժամանակ դրանց կիրառման մասին անհրաժեշտ տվյալները՝ ըստ արտադրանքի մատակարար յուրաքանչյուր երկրի):

3. Ոլոռ՝

թունավոր տարրեր՝

սնդիկ	0,02.
կադմիում	0,1
կապար	0,5.
արսեն	0,3

միկոտոքսիններ՝

աֆլատոքսին B1	0,05
հեքսաքլորոցիկլոհեքսան (ալֆա-, բետա-, գամմա-իզոմերներ)	0,5.
ԴԴՏ եւ դրա մետաբոլիտները	0,05

սնդիկօրգանական թունաքիմիկատներ՝ չեն թույլատրվում.

2,4-Դ թթու, դրա աղերը, եթերները՝ չեն թույլատրվում.

վնասատուներով վարակվածություն՝ չի թույլատրվում:

4. Սոյայի հատիկներ՝

ա) թունավոր տարրեր՝

սնդիկ	0,02
կադմիում	0,1
կապար	0,5.
արսեն	0,3

բ) միկոտոքսիններ՝

աֆլատոքսին B1	0,002.
S-2 տոքսին	0,06
զեարալենոն	0,1.
օխրատոքսին A	0,005
ուրեազային ակտիվություն	0,1 - 0,2

նիտրատների պարունակություն,

ոչ ավելի, քան	450
---------------	-----

նիտրիտների պարունակություն,

ոչ ավելի, քան	10
---------------	----

գ) թունաքիմիկատներ (արտադրության, պահպանման եւ փոխադրման ժամանակ դրանց կիրառման մասին անհրաժեշտ տվյալները՝ ըստ արտադրանքի մատակարար յուրաքանչյուր երկրի):

5. Տապիոկ՝

ա) բնական աղտոտիչներ՝

իզոցիանիդներ	20
--------------	----

բ) միկոտոքսիններ՝

S-2 տոքսին 0,06

զեարալենոն 0,1.

գ) թունաքիմիկատներ (արտադրության, պահպանման եւ փոխադրման ժամանակ դրանց կիրառման մասին անհրաժեշտ տվյալները՝ ըստ արտադրանքի մատակարար յուրաքանչյուր երկրի):

6. Գետնանուշի աղած քուսպ՝

միկոտոքսիններ՝

աֆլատոքսին B1 0,002.

S-2 տոքսին 0,06

զեարալենոն 0,1.

օխրատոքսին A 0,005.

նիտրատների պարունակություն,

ոչ ավելի, քան 200.

նիտրիտների պարունակություն,

ոչ ավելի, քան 10

թունաքիմիկատներ (արտադրության, պահպանման եւ փոխադրման ժամանակ դրանց կիրառման մասին անհրաժեշտ տվյալները՝ ըստ արտադրանքի մատակարար յուրաքանչյուր երկրի):

7. Քուսա՝ արեւածաղկի (սովորական, տոստիավորված)՝

ա) թունավոր տարրեր՝

սնդիկ	0,02.
կադմիում	0,4
(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշման խմբագրությամբ)	
կապար	0,5
արսեն	0,5

բ) միկոտոքսիններ՝

եարալենոնգ	1,0.
S-2 տոքսին	0,1.
դեզօքսինիվալենոլ	1,0.
աֆլատոքսին B1	0,05.
օխրատոքսին A	0,05

գ) թունաքիմիկատներ (արտադրության, պահպանման եւ փոխադրման ժամանակ դրանց կիրառման մասին անհրաժեշտ տվյալները՝ ըստ արտադրանքի մատակարար յուրաքանչյուր երկրի):

Հանրագումարային բետա-ակտիվությունը չպետք է գերազանցի թվարկած բոլոր մթերքներում 1 կգ-ի հաշվով 600 Բեքերելը:

Առանց ԳՓՕ-բաղադրիչների օգտագործման արտադրված կերերը կարող են պարունակել յուրաքանչյուր ԳՓՕ-բաղադրիչի 0,5% եւ դրանից քիչ չգրանցված հոսքագծեր եւ (կամ) 0,9% եւ դրանից քիչ գրանցված հոսքագծեր:

ԳՓՕ-բաղադրիչների օգտագործմամբ արտադրված կերերը կարող են պարունակել յուրաքանչյուր ԳՓՕ-բաղադրիչի 0,5% եւ դրանից քիչ չգրանցված հոսքագծեր:

8. Սոյայի աղացած քուսպ՝

ա) թունավոր տարրեր՝

սնդիկ	0,02.
կադմիում	0,4
կապար	0,5
արսեն	0,5

բ) միկոտոքսիններ՝

զեարալենոն	1,0.
S-2 տոքսին	0,1.
դեզոքսինիվալենոլ	1,0
աֆլատոքսին B1	0,05
օխրատոքսին A	0,05

գ) թունաքիմիկատներ (անհրաժեշտ են արտադրության, պահպանման եւ փոխադրման ժամանակ դրանց կիրառման մասին տվյալները՝ ըստ արտադրանքի մատակարար յուրաքանչյուր երկրի):

Հանրագումարային բետա-ակտիվությունը չպետք է գերազանցի թվարկած բոլոր մթերքներում 1 կգ-ի հաշվով 600 Բեքերելը:

(8-րդ կետը ներմուծվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշմամբ)



## Գլուխ 37

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

շների եւ կատունների համար նախատեսված կերային հավելումներ, ինչպես նաեւ ջերմային մշակում անցած՝ շների եւ կատունների համար նախատեսված պատրաստի կերեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կատունների եւ շների համար կերային հավելումներ, ինչպես նաեւ ջերմամշակում անցած եւ ձեռնարկություններում ստացված՝ կատունների եւ շների համար պատրաստի կերեր:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Կատունների եւ շների համար ջերմամշակում անցած պատրաստի կերերը պետք է ստացված լինեն կենդանիների եւ թռչունների վարակիչ հիվանդություններից զերծ վարչական տարածքների ծագում ունեցող հումքից՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

- խոզերի աֆրիկյան ժանտախտից, ձիերի աֆրիկյան ժանտախտից, խոշոր եւ մանր եղջերավոր անասունների ժանտախտից, խոզերի դասական ժանտախտից, դաբաղից, ոչխարների եւ այծերի ծաղիկից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի մարտի 2-ի թիվ 569 որոշման խմբագրությամբ)***

- սիբիրախտից եւ անաերոբ վարակներից՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշման խմբագրությամբ)***

Կերերի պատրաստման համար հումքը պետք է լինի միայն սպանդային ծագման եւ ենթակա է հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

Կերերի արտադրության համար չի օգտագործվում հատուկ ռիսկ ներկայացնող նյութեր պարունակող հումք, խոշոր եւ մանր եղջերավոր անասունների սպանդից ստացված ստամոքսների եւ աղիքների պարունակություն, որը մթերվել է խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպատիայի մասով անապահով երկրներում:

Կերերը չպետք է պարունակեն սալմոնելաներ, բոտուլինատոքսին (պահածոյացված կերերի համար), էնտերոպաթոգեն եւ անաերոբ միկրոֆլորա: Մանրէային ընդհանուր սերմնավորումը չպետք է գերազանցի 500 հազար մ.բ՝ 1 գրամում, ինչը պետք է հաստատվի լաբորատոր հետազոտությունների տվյալներով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի փետրվարի 11-ի թիվ 18 որոշման խմբագրությամբ)***

Կերերի եւ կերային հավելումների արտադրության գործընթացում օգտագործվող հումքը պետք է մշակվի +133°C-ից ոչ ցածր ջերմաստիճանում (271,4°F), 20 րոպեից ոչ պակաս տեւողությամբ 3 բար ճնշման տակ (42,824 ֆունտ՝ մեկ քառակուսի սմ մակերեսի վրա) կամ պետք է ենթարկվի ջերմամշակման այլընտրանքային համակարգին, ինչն ապահովում է սահմանված մանրէաբանական ստանդարտի նկատմամբ անվտանգության մասով համապատասխան պահանջները:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 14 որոշման խմբագրությամբ)***

Կատուների եւ շների համար կերային հավելումների, ինչպես նաեւ կատուների եւ շների համար ջերմանշակում անցած պատրաստի կերերի ներմուծումը (ջերմաստիճանը՝ +70 °C-ից ոչ ցածր, ժամանակը՝ 20 րոպեից ոչ պակաս) սպառողական փաթեթվածքում իրականացվում է առանց այն անդամ պետության լիազոր մարմնի կողմից տրված ներմուծման թույլտվության, որի տարածք դրանք ներմուծվում են:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

**Գլուխ 38**

**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**որսորդական հաղթանշաններ՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

1. Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել որսորդական հաղթանշաններ, որոնք ստացվել են ամբողջական տաքսիդերմիկ այնպիսի մշակում անցած կենդանիներից, որով երաշխավորվում է սենյակային ջերմաստիճանում դրանց պահպանվածությունը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

2. Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող՝ ամբողջական տաքսիդերմիկ մշակում անցած կենդանիների բոլոր տեսակների եւ ձկների խրտվիլակների կամ դրանց հատվածների համար չի պահանջվում անասնաբուժական սերտիֆիկատներով եւ ներմուծման թույլտվություններով ուղեկցում՝ մանրածախ ցանցում դրանց ձեռքբերումը հաստատող փաստաթղթերը ներկայացնելու պայմանով:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

3. Չխախտելով CITES-ով («Վայրի ֆլորայի եւ ֆաունայի անհետացող տեսակների միջազգային առետրի մասին» կոնվենցիա) նախատեսված դրույթները՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող՝ տաքսիդերմիկ մշակում չանցած բոլոր տեսակի որսորդական հաղթանշանները պետք է համապատասխանեն հետեւյալ պայմաններին՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

ա) ստացված լինեն այն կենդանիներից (թռչուններից), որոնք ծագումով կենդանիների վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տարածքներից են՝

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման խմբագրությամբ)***

կենդանիների բոլոր տեսակների համար՝

- դաբաղից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- կատաղությունից՝ վերջին 6 ամսվա ընթացքում որսորդական հանդակի տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

- սիբիրախտից՝ վերջին 20 օրվա ընթացքում որսորդական հանդակի, տնտեսության տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 623 որոշման խմբագրությամբ)***

խոշոր որոճող երկկճղակավորների համար՝

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբից (պալարախտից)՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- բշտիկային ստոմատիտից, հպավարակային պլեյրոպնեմոնիայից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

մանր որոճող երկկճղակավորների համար՝

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- մանր որոճողների ժանտախտից, մեդի-վիսնայից, ադենոմատոզից, արտրիտ-էնցեֆալիտից, սահմանային հիվանդությունից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- տուբերկուլյոզից, բրուցելյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում որսորդական հանդակի, տնտեսության տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

***(Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

***պարբերությունը հանվել է: Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշում.***

- ոչխարների եւ այծերի ծաղիկից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

մանր չորոճող կենդանիների համար (ընկալունակ կենդանիների համար)՝

- խոզերի աֆրիկյան ժանտախտից՝ 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամսվա ընթացքում որսորդական հանդակի, տնտեսության տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

միասնբակավորների համար՝

- խլնախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- ինֆեկցիոն անեմիայից, զուգավորման հիվանդությունից, ձիերի ինֆեկցիոն մետրիտից՝ 12 ամսվա ընթացքում որսորդական հանդակի, տնտեսության տարածքում կամ բնակվելու այլ վայրում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

փետրավոր որսի (թռչնի) համար՝

- թռչնի գրիպից, որը ենթակա է պարտադիր հայտարարագրման՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ համաճարակաբանական հսկողության բացասական արդյունքների դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- պարբերությունը հանվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշում.

- ծաղիկից՝ վերջին 6 ամսվա ընթացքում որսորդական հանդակի, տնտեսության տարածքներում կամ բնակվելու այլ վայրում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

- Նյուքասլի հիվանդությունից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ 3 ամսվա ընթացքում սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 307 որոշման խմբագրությամբ)***

բ) պետք է ենթարկվեն ախտահանման այն դեպքում, երբ դրանք ստացվել են կենդանիների վերը թվարկված հիվանդությունների մասով անապահով տարածքների ծագում ունեցող կենդանիներից:

4. Որսորդական հաղթանշաններ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելը եւ անդամ պետությունների միջեւ տեղափոխելը 3-րդ կետում նշված հիվանդությունների մասով ապահով շրջաններից, ինչպես նաեւ նշված հիվանդությունների մասով անապահով շրջաններից, սակայն ենթարկված մշակման (ախտահանման) որսորդական հաղթանշանների ծագման երկրում ընդունված կանոններին համապատասխան, ինչը հաստատված է անասնաբուժական սերտիֆիկատով, իրականացվում է առանց անդամ պետության լիազոր մարմնի թույլտվության:

***(4-րդ կետը ներմուծվել է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի թիվ 342 որոշմամբ. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***



## Գլուխ 39

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում պատրաստված (արտադրված), հսկողության վերցված որոշ ապրանքներ անդամ պետությունների միջև տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում պատրաստված (արտադրված), հսկողության վերցված հետեւյալ ապրանքներն անդամ պետությունների միջև տեղափոխելիս ուղեկցվում են փաստաթղթերով<\*>, որոնցով հաստատվում է դրանց համապատասխանությունն անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված որակի եւ անվտանգության պահանջներին.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

---

\* Նշված փաստաթղթերի (դրանց պատճենների) վրա անասնաբուժության բնագավառում լիազորված մարմնի պաշտոնատար անձի կողմից դրվում է դրոշմակնիք (նշում)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող ձեւի համաձայն, որով հավաստվում է այն հումքի անվտանգությունը, որից պատրաստված է ապրանքը եւ ապրանքի ելքի վայրի անասնահամաճարակային բարեկեցությունը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

ԱՏԳ ԱԱ ծածկագիրը	Ապրանքի անվանումը
0305	Ձուկ՝ չորացրած, աղ դրած կամ աղաջրի մեջ դրած. ձուկ՝ տաք կամ սառը ապխտման. ձկնալյուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ հատիկներ՝ ձկներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի
0306	Խեցգետնակերպեր՝զրահի մեջ կամ առանց զրահի, չորացրած, աղ դրած կամ աղաջրի մեջ դրած. խեցգետնակերպեր՝ զրահի մեջ, շոգեխաշած կամ եռացող ջրի մեջ եփած, պաղեցրած կամ չպաղեցրած, սառեցրած, չորացրած, աղ դրած կամ աղաջրի մեջ դրած. ալյուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ հատիկներ՝ խեցգետնակերպերից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի
0307	Կակղամորթներ՝ խեցու մեջ կամ առանց խեցու, չորացրած, աղ դրած կամ աղաջրի մեջ դրած. ջրային այլ անողնաշարավորներ՝ բացի խեցգետնակերպերից եւ կակղամորթներից, չորացրած, աղ դրած կամ աղաջրի մեջ դրած. խոշոր եւ մանր աղացվածքի ալյուր եւ հատիկներ՝ ջրային այլ անողնաշարավորներից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի <*>
0402	Կաթ եւ սերուցք՝ խտացրած կամ շաքար կամ քաղցրացնող այլ նյութեր ավելացրած
0403	Թան, մակարդված կաթ եւ սերուցք, յոգուրտ, կեֆիր եւ ֆերմենտացված կամ մերած այլ կաթ ու սերուցք՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, համաբուրավետիչ հավելումներով կամ առանց դրանց, մրգեր, ընկույզ կամ կակաո ավելացրած կամ չավելացրած
0404	Կաթնային շիճուկ՝ խտացրած կամ չխտացրած, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած. մթերքներ՝ կաթի բնական բաղադրիչներից, շաքար կամ այլ քաղցրացնող նյութեր ավելացրած կամ չավելացրած, այլ տեղում չնշված կամ չներառված
0405	Սերուցքային կարագ եւ կաթից պատրաստված այլ ճարպեր ու յուղեր. կաթնային մածուկներ
0406	Պանիրներ եւ կաթնաշոռ
1516 20	Բուսական ճարպեր եւ յուղեր ու դրանց թորամասերը
1517-ից	Բացառվել է: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254 որոշում
1603 00	Լուծանավածքներ եւ հյութեր՝ ձկից կամ խեցգետնակերպերից, կակղամորթներից կամ ջրային այլ անողնաշարավորներից

\* Տվյալ խմբի մեջ է մտնում նաեւ արտեմիա Սալինան:

1605	Պատրաստի կամ պահածոյացված խեցգետնակերպեր, կակղամորթներ եւ ջրային այլ անողնաշարավորներ
1902 20-ից	Մակարոնային արտադրատեսակներ՝ միջուկով, ջերմային մշակման ենթարկված կամ չենթարկված կամ այլ եղանակով պատրաստված, ձկան, խեցգետնակերպերի, կակղամորթների կամ ջրային այլ անողնաշարավորների պարունակությամբ կամ 04 խմբի մթերքների կամ այդ մթերքների ցանկացած համադրությամբ
1904 20-ից	Հացազգիներ (բացի եգիպտացորենի հատիկից)՝ հատիկի կամ փաթիլների տեսքով կամ այլ եղանակով մշակված հատիկի տեսքով (բացառությամբ մանր եւ խոշոր աղացվածքի այլուրի)՝ նախապես եփած կամ այլ եղանակով պատրաստված, ձկան, խեցգետնակերպերի, կակղամորթների կամ ջրային այլ անողնաշարավորների պարունակությամբ կամ 04 խմբի մթերքների կամ այդ մթերքների ցանկացած համադրությամբ
20-րդ խմբից	Բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացված մթերքներ եւ դրանց խառնուրդները, ձկան կամ խեցգետնակերպերի, կակղամորթների կամ ջրային այլ անողնաշարավորների պարունակությամբ կամ 04 խմբի մթերքների կամ այդ մթերքների ցանկացած համադրությամբ
2104-ից	Հոնոգենացված բաղադրամասային պատրաստի սննդամթերք՝ ձկան, խեցգետնակերպերի, կակղամորթների կամ այլ անողնաշարավորների պարունակությամբ կամ 04 խմբի մթերքների կամ այդ մթերքների ցանկացած համադրությամբ
2105 00-ից	Պաղպաղակ՝ բացի պտղահատապտղային հիմքով մշակված պաղպաղակից, մրգային եւ սննդային սառույցից
2106-ից	Պանիրներ՝ հալած, եւ այլ պատրաստի սննդամթերք՝ ձկան, խեցգետնակերպերի, կակղամորթների կամ այլ անողնաշարավորների պարունակությամբ կամ 04 խմբի մթերքների կամ այդ մթերքների ցանկացած համադրությամբ
3501-ից	Կազեին, կազեինատներ եւ կազեինի այլ ածանցյալներ
3502-ից	Ալբումիններ (սպիտակուցներ) (ներառյալ երկու կամ ավելի այն շիճուկային սպիտակուցների խտանյութերը, որոնք պարունակում են չոր նյութի հաշվարկով 80% զանգվածային բաժնից ավելի շիճուկային սպիտակուցներ), ալբումինատներ եւ ալբումինի այլ ածանցյալներ

## Գլուխ 40

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք  
կենդանաբանական այգու եւ կրկեսային կենդանիներ ներմուծելու եւ (կամ)  
անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի  
դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

***(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2013 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 192 որոշմամբ)***

Սույն գլխում կենդանաբանական այգու եւ կրկեսային կենդանիներ ասելով հարկավոր է հասկանալ ցանկացած կենսաբանական տեսակի կենդանի, որը ծնվել եւ մեծացել է անազատության մեջ կամ պահվել է անազատության մեջ առնվազն 90 օր, ենթարկվել է պարտադիր նույնականացման՝ չի պավորման, օղակավորման կամ դաջման միջոցով:

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կլինիկապես առողջ կենդանաբանական այգու եւ կրկեսային կենդանիներ, որոնք ծագում են կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ տարածքներից կամ ջրային տարածքներից՝

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի  
դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

բոլոր տեսակի կենդանիների համար (բացի թռչուններից)՝

- դաբադից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոզերի աֆրիկյան ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- բլուտանգից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- լեպտոսպիրոզից՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- սիբիրախտից՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսության տարածքում.

- կատաղությունից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- վիրուսային հեմոռագիկ տենդից՝ վերջին 6 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

խոշոր երկկճղակավորների համար (խոշոր եղջերավոր անասունների, զուբրերի, գոմեշների, զեբուների, եզնուղտերի (յակերի), այծքաղների, բիզոնների, եղջերուների եւ այլն)՝

- խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայից եւ ոչխարների սկրեպիից՝ գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում՝ նշված հիվանդության աննշան կամ վերահսկվող ռիսկով՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան.

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբից (պալարախտից)՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- Ռիֆտ հովտի տենդից՝ վերջին 48 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- եղջերուների անասնահամաճարակային հեմոռագիկ հիվանդությունից, Ակաբանե հիվանդությունից, բշտիկային ստոմատիտից, կոնտագիոզ պլեյրոպնեմոնիայից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- Աուեսկի հիվանդությունից (կեղծ կատաղությունից)՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- բրուցելյոզից, տուբերկուլյոզից, պարատուբերկուլյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- էնզոոտիկ լեյկոզից, վիրուսային դիարեայից՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

մանր երկկճղակավորների համար (ոչխարների, այծերի, վայրի խոյերի, եղնիկների, տուրերի, մուֆլոնների, այծեղջյուրների, այծյամների եւ այլն)՝

- Ռիֆտ հովտի տենդից՝ վերջին 48 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- մանր որոճողների ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- եղջերուների էպիզոոտիկ հեմոռագիկ հիվանդությունից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոշոր եղջերավոր անասունների ժանտախտից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

- Քյու-տենդից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- մեդի-վիսնայից, ադենոմատոզից, արտրիտ-էնցեֆալիտից, սահմանային հիվանդությունից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- պարատուբերկուլյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ոչխարների սկրեպիից՝ վերջին 7 տարվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- տուբերկուլյոզից, բրուցելյոզից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ոչխարների եւ այծերի ծաղիկից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

միասնբակավորների համար (ավանակներ, ջորիներ, պոնիներ, զեբրեր, կուլաններ, Պրժեալսկու ձիեր, կիանգներ եւ այլն՝ բացառությամբ ձիերի<\*>)

- ձիերի ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- ինֆեկցիոն էնցեֆալոմիելիտի բոլոր տեսակներից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

---

\* Ձիեր ներմուծելու դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել սույն Պահանջների 11-րդ գլխով

- վիրուսային արտերիիտից՝ երկրի տարածքում՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան.

- խլնախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- զուգավորման հիվանդությունից (*Trypanosoma equiperdum*), սուրրայից (*Trypanosoma evansi*), պիրոպլազմոզից (*Babesia caballi*), նուտտալիոզից (*Nuttallia equi*)՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում.

- ձիերի ինֆեկցիոն մետրիտից՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

տարբեր տեսակի ընտանի եւ վայրի խոզերի համար՝

- խոզերի աֆրիկյան ժանտախտից՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոզերի դասական ժանտախտից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոզերի բշտիկային հիվանդությունից, բշտիկային ստոմատիտից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- Աուեսկի հիվանդությունից (կեղծ կատաղությունից)՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում կամ տնտեսության տարածքում.

- խոզերի էնտերովիրուսային էնցեֆալոմիելիտից (Տեշենի հիվանդությունից, խոզերի տեքստովիրուսային էնցեֆալոմիելիտից)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.



- խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

տարբեր տեսակի մսակերների համար՝

- մսակերների ժանտախտից, վիրուսային էնտերիտից, տոքսոպլազմոզից, ինֆեկցիոն հեպատիտից՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- տուլյարեմիայից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

բոլոր տեսակի թռչունների համար՝

- բադերի ժանտախտից, բադիկների վիրուսային հեպատիտից (ջրլող թռչունների համար)՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- ՄԱԲ-ի Կանոնագրքին համապատասխան՝ պարտադիր հայտարարագրման ենթակա թռչնի գրիպից՝ վերջին 6 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում.

- օրնիտոզից (պսիտտակոզից), ինֆեկցիոն բրոնխիտից, ծաղիկից, ռեովիրուսային վարակից եւ հնդկահավերի ռինոտրախետիտից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- Նյուքասլի հիվանդությունից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան վարչական տարածքում կամ տնտեսության տարածքում.

տարբեր տեսակի կրծողների համար՝

- Ռիֆտ հովտի տենդից՝ վերջին 48 ամսվա ընթացքում երկրի տարածքում.

- տուլյարեմիայից՝ վերջին 24 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- Աուեսկի հիվանդությունից (կեղծ կատաղությունից)՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան.

- միքսոմատոզից, ճագարների վիրուսային հեմոռագիկ հիվանդությունից, լիմֆոցիտար խորիոմենինգիտից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- տորքոպլազմոզից՝ վերջին 12 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

տարբեր տեսակի մաշկաթաթավորների եւ կետանմանների համար՝

- փոկերի ժանտախտից (մորբիլլիվիրուսային վարակից), բշտիկային էկզանտեմայից՝ վերջին 36 ամսվա ընթացքում դրանց բնակության (ծագման) վայրերում.

փղերի, ընձուղտների, օկապիների, սովորական գետածիերի, ռնգեղջյուրների, գետակինճերի, կիսաատամնավորների եւ խողովակաատամնավորների, միջատակերների, պարկավորների, չղջիկների, ջրարջակերպերի, կզաքիսազգիների, վիվերազգիների եւ էկզոտիկ կենդանիների այլ տեսակների համար՝

- Ռիֆտ հովտի տենդից՝ վերջին 48 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- վենեսուելյան էնցեֆալոմիելիտից՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- խոշոր եղջերավոր անասունների վարակիչ հանգուցային մաշկաբորբից (պալարախտից)՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- ձիերի աֆրիկյան ժանտախտից, Աուեսկի հիվանդությունից (կեղծ կատաղությունից), ջրաքիսների տրանսմիսիվ էնցեֆալոմիելիտից, լիմֆոցիտար խորիոմենինգիտից՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

- տուլյարեմիայից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

տարբեր տեսակի պրիմատների համար՝

- Ռիֆտ հովտի տենդից, տուլյարեմիայից՝ վերջին 6 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

- հեմոռագիկ տենդից (Լասսա, Էբոլա, Մարբուրգ, Դենգե, դեղին տենդից, արեմտյան Նեդուսի տենդից), կապիկների ծաղիկից՝ տնտեսության տարածքում կամ վարչական տարածքում, որտեղից արտահանվում են պրիմատները՝ արձանագրված դեպքերի բացակայության պարագայում:

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ուղարկելու կամ անդամ պետությունների միջև տեղափոխելու համար ընտրված կենդանաբանական այգու եւ կրկեսային կենդանիներն արտահանող երկրի տարածքում առնվազն 21 օր պահվում են կարանտինային բազաներում (եթե անդամ պետության լիազորված մարմնի կողմից կանխարգելիչ կարանտինի այլ ժամկետ սահմանված չէ): Կարանտինի ժամանակ անցկացվում է գլխաքանակի կլինիկական զննում՝ պարտադիր ջերմաչափմամբ: Այդ ընթացքում անցկացվում են ախտորոշիչ հետազոտություններ.

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

- խոշոր երկկճղակավորների՝ բրուցեյյոզի, տուբերկուլյոզի, պարատուբերկուլյոզի, էնզոոտիկ լեյկոզի, բլուտանգի մասով.

- մանր երկկճղակավորների՝ բրուցեյյոզի, պարատուբերկուլյոզի, բլուտանգի.

- միասնաբակավորների՝ խլնախտի, զուգավորման հիվանդության, սուրրայի, պիրոպլազմոզի, նուտտալիոզի, ռինոպնեմոնիայի, ինֆեկցիոն մետրիտի, ինֆեկցիոն անեմիայի, վիրուսային արտերիիտի մասով:

- ջրաքիսների՝ ալեուտյան հիվանդության մասով:

- թռչունների՝ օրնիտոզի (պսիտտակոզի), թռչունների գրիպի մասով:

- պրիմատների՝ տուբերկուլյոզի մասով:

Կենդանիներին տարին 1 անգամ պատվաստում են՝

- բոլոր մսակերներին՝ կատաղության դեմ:

- շներին, աղվեսներին, բեւեռաղվեսներին, գայլերին, շնագայլերին՝ մսակերների ժանտախտի, վիրուսային էնտերիտի, հեպատիտի, լեպտոսպիրոզի դեմ:

- ջրաքիսներին, ժանտաքիսներին՝ վիրուսային էնտերիտի, մսակերների ժանտախտի դեմ:

- ճահճակուղբերին՝ պաստերելյոզի դեմ:

- կատվազգիներին՝ կատաղության, պանլեյկոպենիայի, կալիցիվիրոզի եւ վիրուսային ռինոտրախետիտի դեմ:

- կրծողներին (ճագարներին)՝ միքսոմատոզի եւ վիրուսային հեմոռագիկ հիվանդության դեմ:

- թռչուններին (հավազգիների խմբի)՝ Նյուքասլի հիվանդության դեմ:

Եթե կենդանիները չեն պատվաստվել վերջին 12 ամսվա ընթացքում, ապա պատվաստումը պետք է կատարվի ուղարկելուց ոչ ուշ, քան 20 օր առաջ:

Կրկեսային այն կենդանիները, որոնք պարբերաբար փոխադրվում են հյուրախաղերին մասնակցելու համար, տեղափոխվում են առանց կանխարգելիչ կարանտին անցկացնելու՝ պայմանով, որ դրանք պահվում են պետական (գերատեսչական) անասնաբուժական ծառայության հսկողության տակ եւ տարին 1 անգամ ենթարկվում ախտորոշիչ հետազոտությունների՝

- խոշոր երկկճղակավորներ՝ բրուցեյրոզի, տուբերկուլյոզի, պարատուբերկուլյոզի, էնզոոտիկ լեյկոզի, բլուտանգի մասով.
- մանր երկկճղակավորներ՝ բրուցեյրոզի, պարատուբերկուլյոզի մասով
- միասմբակավորներ՝ խլնախտի, զուգավորման հիվանդության, ինֆեկցիոն անեմիայի մասով.
- ուղտազգիներ՝ բլուտանգի, խլնախտի, սուրուի, տուբերկուլյոզի, բրուցեյրոզի մասով.
- ջրաքիսների՝ ալեուտյան հիվանդության մասով.
- կատվազգիներ՝ դերմատոֆիտոզի մասով (լյումինեսցենտային ախտորոշման մեթոդով).
- թռչուններ՝ օրնիտոզի (պսիտտակոզի), թռչունների գրիպի, սալմոնելյոզի մասով.
- պրիմատներ՝ տուբերկուլյոզի մասով:

Անդամ պետության լիազորված մարմնի պահանջով կրկեսային կենդանիների՝ երրորդ երկրներում հյուրախաղերից վերադառնալուց հետո (կախված այդ երկրներում առկա անասնահամաճարակային իրավիճակից) կարող է անցկացվել դրանց կարանտինացում առնվազն 30 օրվա ընթացքում՝ ամբողջական համալիր ախտորոշիչ հետազոտությունների անցկացմամբ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Այն անդամ պետության լիազորված մարմինը, որի տարածքում իրականացվում է կենդանիների ներմուծում (տեղափոխում), կարող է պահանջել նաեւ այլ հիվանդությունների մասով հետազոտությունների եւ պատվաստումների անցկացում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

**ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք կենդանի անձրեւաորդեր (Lumbricina ենթակարգ) եւ դրանց բժժոժները ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

***(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 244 որոշմամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել կենդանի անձրեւաորդեր (Lumbricina ենթակարգ) եւ դրանց բժժոժները (այսուհետ՝ անձրեւաորդեր եւ դրանց բժժոժները), որոնք նախատեսված են արդյունավետ աճեցման (որդաբուծություն), հողի բարելավման, կոմպոստների եւ կենսահումուսի պատրաստման, որպես կենդանի կեր, ձկնորսական խայծ օգտագործելու համար, եւ որոնք աճեցվել են որդաբուծության մեջ բնական կամ արհեստական սուբստրատում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող՝ արդյունավետ աճեցման (որդաբուծություն) համար նախատեսված անձրեւաորդերը եւ դրանց բժժոժներն ուղարկելուց առաջ 72 ժամվա ընթացքում պետք է ենթարկվեն արտաքին զննման, որի արդյունքում չպետք է հայտնաբերվի որդերի զանգվածային (փաթեթվածքում որդերի ավելի քան 10%) կորուստ:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի  
դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխվող՝ որդաբուծության մեջ աճեցված անձրեաորդերն ու դրանց բոժոժները եւ դրանց աճեցման համար նախատեսված բնական սուբստրատը (հող, տորֆ, կոմպոստ, կենսահումուս, գոմաղբ, բույսերի մասեր) պետք է ծագեն տնտեսություններից (ձեռնարկություններից), որտեղ չեն գրանցվել սիբիրախտ, դաբաղ, խոզերի աֆրիկյան ժանտախտ եւ սպունգանման էնցեֆալոպաթիա:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի  
դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Անձրեաորդերի եւ դրանց բոժոժների փոխադրման համար օգտագործվում են փաթեթվածքներ (բեռնարկղեր եւ այլն), որոնք ապահովում են դրանց կենսունակությունը փոխադրման ժամանակ: Այն փաթեթվածքների (բեռնարկղերի եւ այլն) ներմուծումը, որոնցում սահմանը հատելիս արտաքին զննում անցկացնելու պահին հայտնաբերվել է անձրեաորդերի զանգվածային կորուստ, արգելվում է: Նշված փաթեթվածքները (բեռնարկղերը եւ այլն) պարունակության հետ միասին ենթակա են վերադարձման արտահանող երկիր կամ ոչնչացման (օգտահանման)՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի  
դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Փաթեթվածքները (բեռնարկղերը եւ այլն) պետք է լինեն մեկանգամյա օգտագործման եւ լցված անձրեաորդերի ու դրանց բոժոժների կենսունակությունը պահպանող սուբստրատով: Փաթեթվածքի յուրաքանչյուր միավոր (բեռնարկղերը եւ այլն) պետք է լինի համարակալված եւ մակնշված պիտակով: Պիտակը պետք է պարունակի որդերի տեսակի անվանումը, տեղեկություններ անձրեաորդերի քանակի կամ զանգվածի, դրանց ծագման, փոխադրման պայմանների մասին եւ կարող է պարունակել բեռը եւ դրա ծագումը բնութագրող այլ տեղեկություններ:

## Գլուխ 42

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք լաբորատոր կենդանիներ (մկներ, ավազամկներ, առնետներ, ծովախոզեր, ճագարներ, գերմանամկներ, կատուներ, շներ, ոչ մարդանման պրիմատներ, թռչուններ), ինչպես նաև դրանց բեղմնավորված ձվաբջիջները (զիգոտները) եւ սաղմերը ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում

*(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեզիայի*

*2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշմամբ)*

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել լաբորատոր հետազոտություններում եւ (կամ) գիտական նպատակներով օգտագործման համար նախատեսված կենդանիներ (մկներ, ավազամկներ, առնետներ, ծովախոզեր, ճագարներ, գերմանամկներ, կատուներ, շներ, ոչ մարդակերպ պրիմատներ, թռչուններ) (այսուհետ՝ լաբորատոր կենդանիներ), ինչպես նաև՝ նշված նպատակներով օգտագործման համար նախատեսված՝ դրանց բեղմնավորված ձվաբջիջները (զիգոտները) եւ սաղմերը (այսուհետ՝ բեղմնավորված ձվաբջիջներ (զիգոտներ) եւ սաղմեր):

Սույն գլխի նպատակներով՝ լաբորատոր դոնոր կենդանիներ ասելով հարկավոր է հասկանալ այն լաբորատոր կենդանիները, որոնցից ստացվել են բեղմնավորված ձվաբջիջները (զիգոտները) կամ սաղմերը:

Լաբորատոր կենդանիները եւ լաբորատոր դոնոր կենդանիները պետք է լինեն կլինիկապես առողջ, ստացված չլինեն վայրի բնության մեջ որսված կենդանիներից եւ ծագեն մասնագիտացված բուժարաններից, որոնք պաշտոնապես զերծ են կենդանիների վարակիչ հիվանդություններից (այդ թվում՝ բեղմնավորված ձվաբջիջներ (զիգոտներ) կամ սաղմեր վերցնելու օրը):



Լաբորատոր կենդանիների եւ լաբորատոր դոնոր կենդանիների առողջության կարգավիճակը պետք է հաստատված լինի ՄԱԲ-ի առաջարկություններին համապատասխան անցկացված լաբորատոր թեստերի արդյունքներով:

Լաբորատոր կենդանիների եւ լաբորատոր դոնոր կենդանիների գենետիկ կարգավիճակը պետք է հայտնի լինի: Եվրասիական տնտեսական միության տարածք ներմուծվող լաբորատոր կենդանիները, դրանց բեղմնավորված ձվաբջիջները (զիգոտները) եւ սաղմերը պետք է ուղեկցվեն կենդանիների տեսակի, ցեղատեսակի (կրծողների համար՝ նաեւ գծի կամ հոսքի մասին) եւ կատարված գենետիկ միջամտությունների (գենետիկորեն փոփոխված կենդանիների համար) մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերով:

Բեղմնավորված ձվաբջիջներում (զիգոտներում) եւ սաղմերում չպետք է պարունակվեն ախտածին եւ թունածին միկրոօրգանիզմներ: Դրանք պետք է վերցվեն, պահպանվեն եւ փոխադրվեն ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան:

Փոխադրման ժամանակ լաբորատոր կենդանիները չպետք է շփում ունենան այլ կենդանիների հետ:

Լաբորատոր կենդանիները փոխադրվում են նոր բեռնարկղերում կամ հիվանդության հարուցիչների ոչնչացման նպատակով մաքրում եւ մանրէազերծում անցած բեռնարկղերում:

Յուրաքանչյուր բեռնարկղ պետք է լինի մակնշված պիտակով եւ համարակալված:

### **Եզրափակիչ եւ անցումային դրույթներ**

1. Նախքան հսկողության վերցված ապրանքները Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծելու համար

թույլտվությունների տրամադրման միասնական էլեկտրոնային համակարգը գործողության մեջ դնելը՝ անդամ պետությունները ղեկավարվում են 2010 թվականի հուլիսի 1-ի դրությամբ գործող թույլտվությունների տրամադրման՝ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված կարգերով:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2012 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 254, 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշումների խմբագրությամբ)***

2. Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձեւերը գործողության մեջ են դրվում 2010 թվականի հուլիսի 1-ից: Հսկողության վերցված ապրանքներն անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ը թույլատրվում է անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի ձեւերի օգտագործումը, որոնք 2010 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կիրառվում են անդամ պետությունների միջեւ փոխադարձ առեստրում:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

3. Մինչեւ 2011 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածը՝ անդամ պետության լիազորված մարմինները ձեւավորում են անասնաբուժության մեջ կիրառման համար՝ գրանցված դեղամիջոցների, ախտորոշման համակարգերի, կենդանիների հակամակաբուժային մշակման միջոցների եւ կենդանիների համար կերային հավելումների ռեեստր՝ ազգային համապատասխան ռեեստրների հիման վրա: Նախքան նշված ժամկետը՝ կենդանիների համար դեղամիջոցների, ախտորոշման համակարգերի, կենդանիների հակամակաբուժային մշակման միջոցների եւ կենդանիների համար կերային հավելումների ներմուծումը երրորդ երկրներից եւ այլ անդամ պետությունների տարածքից թույլատրվում է այն դեպքում, երբ դրանք գրանցված են կողմերի ցանկացած անդամ պետության լիազորված մարմնի կողմից: Անդամ պետությունների լիազորված մարմիններն իրականացնում են յուրաքանչյուր անդամ պետության անասնաբուժության մեջ կիրառելու համար՝ գրանցված

դեղամիջոցների, ախտորոշման համակարգերի, կենդանիների հակամակաբուժային մշակման միջոցների եւ կենդանիների համար կերային հավելումների մասին տեղեկությունների փոխանակումը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

4. Երրորդ երկրների հետ անդամ պետությունների փոխադարձ առևտրի դեպքում մինչև 2013 թվականի հունվարի 1-ը թույլատրվում է ներմուծել հսկողության վերցված ապրանքներ անասնաբուժական սերտիֆիկատներով, որոնք անդամ պետություններից մեկի կողմից նախաստորագրվել են արտահանող երկրների հետ 2010 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ դրանցում կատարված ցանկացած հետագա փոփոխությամբ, որը համաձայնեցվել է անդամ պետության եւ արտահանող երկրի կողմից մյուս անդամ պետությունների համաձայնեցված դիրքորոշման հիման վրա: Նախաստորագրված անասնաբուժական սերտիֆիկատների բացակայության դեպքում հսկողության վերցված ապրանքները պետք է ուղեկցվեն սույն Պահանջների կատարումը երաշխավորող անասնաբուժական սերտիֆիկատներով:

***(Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 455, 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 726 որոշումների, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

5. Անդամ պետությունների լիազորված մարմիններին՝ անցկացնել բանակցություններ այդպիսի բանակցություններ անցկացնելու մասին հիմնավորված հարցումով դիմած արտահանող երկրների իրավասու մարմինների հետ այն անասնաբուժական սերտիֆիկատները համաձայնեցնելու նպատակով, որոնք տարբերվում են Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 607 որոշմամբ հաստատված՝ երրորդ երկրներից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող՝ հսկողության վերցված ապրանքների համար տրամադրվող Միասնական անասնաբուժական

սերտիֆիկատների ձեւերից (այսուհետ՝ անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձեւեր) եւ սույն Պահանջների առանձին դրույթներից:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Այդպիսի անասնաբուժական սերտիֆիկատի համաձայնեցման մասով շահագրգռված՝ անդամ պետություններից մեկի լիազորված մարմինը (այսուհետ՝ բանակցություններ նախաձեռնողը) այդպիսի բանակցություններ սկսելու մասին որոշում կայացնելուց հետո ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում դրանց մասին տեղեկացնում է մյուս անդամ պետությունների այն լիազորված մարմիններին, որոնք, շահագրգռված լինելու դեպքում, իրավունք ունեն միանալու բանակցություններին ցանկացած փուլում:

***(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Այդպիսի անասնաբուժական սերտիֆիկատի նախագծով բանակցությունների գործընթացի ավարտից հետո բանակցություններ նախաձեռնողն անասնաբուժական սերտիֆիկատի նախագիծն ուղարկում է մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններ: Անդամ պետությունների լիազորված մարմինները առարկությունների բացակայության դեպքում համապատասխան նամակներ են փոխանակում: Եթե անդամ պետություններից մեկի լիազորված մարմինը համարում է, որ այդպիսի անասնաբուժական սերտիֆիկատի նախագծի դրույթները չեն համապատասխանում ՄԱԲ-ի Կանոնագրքի եւ Կողմերս Ալիմենտարիուսի հանձնաժողովի ստանդարտներին, առաջարկություններին ու ուղեցույցներին եւ (կամ) առկա է մարդու եւ կենդանիների առողջության ու կյանքի համար վտանգի սպառնալիքի համապատասխան գիտական հիմնավորում, ապա բանակցություններ նախաձեռնողը մյուս անդամ պետությունների լիազորված մարմիններին հետ կազմակերպում է խորհրդատվություններ:

***(պարբերությունն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 830 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Այն դեպքում, երբ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն անդամ պետություններից մեկի լիազորված մարմին Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձեւերից եւ սույն Պահանջների առանձին դրույթներից տարբերվող անասնաբուժական սերտիֆիկատ մշակելու մասին հարցումով դիմում է այն արտահանող երկրի իրավասու մարմինը, որի եւ անդամ պետությունների մեկի միջև մինչև 2010 թվականի հուլիսի 1-ը նախաստորագրվել է համապատասխան անդամ պետության տարածք հսկողության վերցված ապրանքը ներմուծելու համար անասնաբուժական սերտիֆիկատ, նախաստորագրված անասնաբուժական սերտիֆիկատի, ինչպես նաեւ մյուս անդամ պետությունների հետ համաձայնեցված՝ այդպիսի սերտիֆիկատում կատարված ցանկացած հետագա փոփոխության գործողության ժամկետը երկարաձգվում է մինչև Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձեւերից եւ սույն Պահանջների առանձին դրույթներից տարբերվող անասնաբուժական սերտիֆիկատը համաձայնեցնելը:

***(5-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 726 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

6. Երկարաձգել Միասնական անասնաբուժական պահանջներից տարբերվող՝ անդամ պետություններից մեկի եւ արտահանող երկրի միջև 2010 թվականի հուլիսի 1-ից 2010 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում նախաստորագրված՝ բացառապես նշված անդամ պետության տարածք հսկողության վերցված ապրանքը ներմուծելու եւ սպառելու համար անասնաբուժական սերտիֆիկատների գործողության ժամկետը մինչև 2013 թվականի հունվարի 1-ը:

***(Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

Այն դեպքում, երբ այն արտահանող երկրի իրավասու մարմինը, որի եւ անդամ պետություններից մեկի միջեւ 2010 թվականի հուլիսի 1-ից 2010 թվականի դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում նախաստորագրվել է բացառապես համապատասխան անդամ պետության տարածք հսկողության վերցված ապրանքը սպառման համար ներմուծելու անասնաբուժական սերտիֆիկատ, մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը անդամ պետություններից մեկի լիազորված մարմին դիմում է հարցումով՝ Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձեւերից եւ սույն Պահանջների առանձին դրույթներից տարբերվող անասնաբուժական սերտիֆիկատ մշակելու մասին, ապա նախաստորագրված անասնաբուժական սերտիֆիկատի գործողության ժամկետը երկարաձգվում է մինչեւ մյուս անդամ պետությունների համաձայնեցված դիրքորոշման հիման վրա անդամ պետության եւ արտահանող պետության կողմից Անասնաբուժական սերտիֆիկատների միասնական ձեւերից եւ սույն Պահանջների առանձին դրույթներից տարբերվող անասնաբուժական սերտիֆիկատը համաձայնեցնելը:

***(6-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 726 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

7. Անասնաբուժական սերտիֆիկատները համաձայնեցվում են կոնսենսուսի հիման վրա՝ անդամ պետությունների լիազորված մարմինների եւ արտահանող երկրի իրավասու մարմնի կողմից եւ պետք է ապահովեն անդամ պետությունների կողմից սահմանվող անասնաբուժական պաշտպանության մակարդակը:

***(7-րդ կետն ավելացվել է Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 15-ի թիվ 726 որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160 որոշման խմբագրությամբ)***

## Գլուխ 43

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք խոզերի սաղմեր ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

**(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեզիայի 2016 թվականի փետրվարի 2-ի թիվ 14 որոշմամբ)**

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել առողջ տոհմային կենդանիներից ստացված սաղմերը:

Արտադրող արու խոզերը պետք է պահվեն սերմնահեղուկի վերցման կենտրոններում եւ (կամ) արհեստական սերմնավորման կենտրոններում, իսկ սաղմերի դոնոր խոզամայրերը վերջին 40 օրվա ընթացքում պետք է պահվեն կենդանիների վարակիչ հիվանդություններից զերծ արհեստական սերմնավորման տնտեսություններում եւ (կամ) կենտրոններում, պետք է գտնվեն արտահանող երկրում ծնվելու պահից կամ սերմնահեղուկը կամ սաղմերն ստանալուց առաջ առնվազն 6 ամիս եւ չպետք է շփում ունենան վերջին 12 ամսվա ընթացքում երկիր ներմուծված կենդանիների հետ:

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ անդամ պետությունների միջեւ տեղափոխվող խոզերի սաղմերը պետք է ծագեն գոտիավորմանը համապատասխան այն երկրներից կամ վարչական տարածքներից, որոնք զերծ են կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից՝

- խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում.
- դարբաղ, խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում.

- խոզերի բշտիկային հիվանդություն՝ վերջին 24 ամսվա ընթացքում:

Սաղմերի դոնոր խոզամայրերի սերմնավորման համար նախատեսված սերմնահեղուկը պետք է համապատասխանի սույն Պահանջների 8-րդ գլխի պահանջներին:

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող եւ անդամ պետությունների միջեւ տեղափոխվող խոզերի սաղմերը պետք է ծագեն խոզերի սաղմերի ստացման արհեստական սերմնավորման այն տնտեսություններից եւ (կամ) կենտրոններից, որոնք զերծ են կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից՝

- տուբերկուլյոզ, բրուցելյոզ, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշ, խոզերի տեքսովիրուսային էնցեֆալոմիելիտ (Տեշենի հիվանդություն կամ խոզերի էնտերովիրուսային էնցեֆալոմիելիտ)՝ վերջին 6 ամսվա ընթացքում.

- Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն)՝ վերջին 12 ամսվա ընթացքում,

- լեպտոսպիրոզ՝ վերջին 3 ամսվա ընթացքում.

- սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում:

Սաղմերի դոնոր խոզամայրերը պետք է 12 ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ լաբորատորիայում (սահմանված կարգով հավատարմագրված կամ սերտիֆիկացված) ենթարկվեն բացասական արդյունքով ստուգման, ՄԱԲ-ի կողմից առաջարկվող մեթոդներով (առկայության դեպքում) հետեւյալ հիվանդությունների մասով՝ խոզերի դասական ժանտախտ, Աուեսկի հիվանդություն, խոզերի ռեպրոդուկտիվ-ռեսպիրատոր համախտանիշ, վիրուսային տրանսմիսիվ գաստրոէնտերիտ, խոզերի բշտիկային հիվանդություն, տուբերկուլյոզ, բրուցելյոզ, լեպտոսպիրոզ, խլամիդիոզ:



Սաղմերի դոնոր խոզամայրերը դրանցից սաղմերն ստանալուց հետո պետք է առնվազն 30 օր գտնվեն անասնաբույժի հսկողության տակ:

Կենդանիների՝ սույն գլխում նշված վարակիչ հիվանդություն հայտնաբերելու դեպքում Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք խոզերի սաղմերի ներմուծումը եւ (կամ) անդամ պետությունների միջեւ դրանց տեղափոխումը պետք է արգելվեն:

Անդամ պետության լիազորված մարմինը կարող է ՄԱԲ-ի ցանկում ընդգրկված մյուս հիվանդությունների մասով հետազոտության վերաբերյալ հարցումով դիմել միայն այն դեպքում, երբ հարցում կատարող անդամ պետության տարածքում անցկացվում են այդ հիվանդությունների կանխարգելմանը եւ (կամ) վերացմանն ուղղված ծրագրեր:

Խոզերի սաղմերը պետք է վերցվեն, պահպանվեն եւ փոխադրվեն ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան:

#### **Գլուխ 44**

#### **ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

**Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումք ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից)***

***2016 թվականի հունիսի 7-ի թիվ 63 որոշմամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության

համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումք, որն ստացված է այն սպանդային կամ մսի վերամշակման ձեռնարկություններում կենդանիների կամ թռչունների սպանդից եւ վերամշակումից, որոնց նկատմամբ սահմանված չեն որեւէ անասնաբուժասանիտարական սահմանափակում եւ որոնք գտնվում են անասնաբուժական ծառայության հսկողության ներքո:

Այն կենդանիները, որոնցից ստացվել է ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումք, ենթակա են նախասպանդային անասնաբուժական զննման, իսկ դրանց մսեղիքը, գլուխները եւ ներքին օրգանները՝ հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության:

Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը պետք է ստացված լինի այն կենդանիների սպանդի կամ վերամշակման ժամանակ, որոնք ծագում են կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից պաշտոնապես զերծ տնտեսություններից կամ վարչական տարածքներից՝

բուլոր կենդանիների համար (բացի թռչուններից)՝

դաբաղ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում,

սիբիրախտ՝ վերջին 20 օրվա ընթացքում տնտեսությունում:

Խոշոր եղջերավոր անասուններ.

խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ, վարակիչ պլեյրոպնեմոնիա (թոքերի ներմուծման (տեղափոխման) դեպքում)՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիա: Հումքը ծագում է խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայի մասով ապահով նախիրներից, եւ կենդանիները չեն պատկանում խոշոր եղջերավոր անասունների սպունգանման էնցեֆալոպաթիայով հիվանդ կենդանիների սերնդին. կենդանիների կերակրման համար չեն օգտագործվել որոճող կենդանիներից ստացված սպիտակուցներ՝ բացառությամբ այն բաղադրիչների, որոնց օգտագործումը թույլատրվում է ՄԱԲ-ի Կանոնագրքով. մինչեւ սպանող կենդանիների շմեցումը չի կատարվել կենդանիների գանգատուփ սեղմված օդ կամ գազ ներմուծող մեխանիզմի օգնությամբ, եւ չեն ենթարկվել գլխուղեղի ծակման. հատուկ ռիսկ ներկայացնող նյութերը կենդանիների մսեղիքից հեռացվել են ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան:

Ոչխարներ եւ այծեր.

ոչխարների սկրեպի՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան.

մանր որոճողների ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

խոշոր եղջերավոր անասունների ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում:

Խոզեր.

խոզերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

խոզերի բշտիկային հիվանդություն՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում, կամ վերջին 9 ամսվա ընթացքում գոտիավորմանը

համապատասխան այն երկրի տարածքում կամ վարչական տարածքում, որտեղ անցկացվել է սանիտարական սպանդ (stamping out).

խոզերի դասական ժանտախտ՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

Աուեսկի հիվանդություն (կեղծ կատաղություն)՝ գլուխների եւ ներքին օրգանների ներմուծման (տեղափոխման) դեպքում՝ երկրի տարածքում ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան:

Թռչուն.

թռչնի գրիպ, որը ՄԱԲ-ի Կանոնագրքին համապատասխան՝ ենթակա է պարտադիր հայտարարագրման՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ վերջին 3 ամսվա ընթացքում՝ սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում.

Նյուքասլի հիվանդություն՝ վերջին 12 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում կամ վերջին 3 ամսվա ընթացքում՝ սանիտարական սպանդ (stamping out) անցկացնելու եւ անասնահամաճարակային հսկողության բացասական արդյունքների դեպքում:

Ձիեր՝

ձիերի աֆրիկյան ժանտախտ՝ վերջին 24 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

խլնախտ՝ վերջին 36 ամսվա ընթացքում գոտիավորմանը համապատասխան երկրի տարածքում կամ վարչական տարածքում.

ձիերի ինֆեկցիոն անեմիա՝ վերջին 3 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում.

Էպիզոտիկ լիմֆանգոիտ՝ վերջին 2 ամսվա ընթացքում տնտեսության տարածքում հիվանդության դեպքեր չեն գրանցվել:

Ճագարներ.

ճագարների հեմոռագիկ հիվանդություն՝ մինչև սպանդը վերջին 60 օրվա ընթացքում տնտեսությունում հիվանդության դեպքեր չեն գրանցվել:

Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը ստացված է խոզի մսեղիքից, որի հետազոտությամբ արձանագրվել է տրիխինելյոզի բացասական արդյունք կամ որոնք ենթարկվել են սառեցման՝ ինչպես նշված է աղյուսակում՝

Ժամանակը (ժամ)	Ջերմաստիճանը (°C)
106	-18
82	-21
63	-23,5
48	-26
35	-29
22	-32
8	-35
½	-37

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջև տեղափոխել այն մսեղիքից ստացված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումք, որը՝

հետսպանդային անասնաբուժասանիտարական փորձաքննության ժամանակ, ինչպես նաև տարբեր նյութերով թունավորումների ժամանակ՝ չունի վարակիչ հիվանդություններին բնորոշ փոփոխություններ, հելմինթներով ախտահարում՝

պահպանման ժամանակ չի ենթարկվել ապաստեցման.

չունի փչացման նշաններ.

մկանների հաստաշերտում ջերմաստիճանը բարձր չէ - 8 °C-ից՝ սառեցված ոչ սննդային մսային հումքի համար, եւ բարձր չէ +4 °C-ից՝ պաղեցրած հումքի համար:

Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը պետք է համապատասխանի անասնաբուժասանիտարական հետեւյալ պահանջներին՝

մանրէների ընդհանուր քանակը,  $\text{ԳԱՄ/գ} - 5 \times 10^6$ .

սալմոնելաները 25,0 գ-ում՝ չեն թույլատրվում (միայն մորթատու կենդանիների կերակրման համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային այն հումքի համար, որը կենդանիներին կերակրելուց առաջ չի ենթարկվի ջերմամշակման).

աղիքային ցուպիկի էնտերոպաթոգեն տեսակները 1,0 գ-ում՝ չեն թույլատրվում.

կապար՝ 10,0 մգ/կգ-ից ոչ ավելի.

կադմիում՝ 0,5 մգ/կգ-ից ոչ ավելի.

մկնդեղ՝ 2,0 մգ/կգ-ից ոչ ավելի.

սնդիկ՝ 0,3 մգ/կգ-ից ոչ ավելի:

Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի

արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքի մեջ ցեզիում-137-ի եւ ստրոնցիում-90-ի պարունակությունը չպետք է գերազանցի՝ ցեզիում-137՝ 600 Բք/կգ-ը, ստրոնցիում-90՝ 100 Բք/կգ-ը:

Կատուների եւ շների համար կերերի ու կերային հավելումների արտադրության գործընթացում օգտագործվող կենդանական ծագման հումքը պետք է մշակված լինի + 133 °C -ից (271,4 °F) ոչ ցածր ջերմաստիճանում 20 րոպեից ոչ պակաս տեւողությամբ 3 բար ճնշման տակ (43,511 ֆունտ՝ մեկ դյույմի<sup>2</sup> վրա) կամ ենթարկված լինի ջերմամշակման այլընտրանքային համակարգին, որը սահմանված մանրէաբանական ցուցանիշի նկատմամբ ապահովում է անվտանգության համապատասխան պահանջները:

Ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքը փաթեթվածքի կամ պոլիբլոկի վրա պետք է ունենա մականշվածք: Պիտակը պետք է փաթեթվածքի վրա սոսնձված լինի պիտակի կրկնակի օգտագործման հավանականությունը բացառող եղանակով: Այն դեպքում, երբ փաթեթվածքի կառուցվածքը չի կանխում դրա չարտոնված բացումը, պիտակը պետք է փաթեթվածքի վրա փակցված լինի այնպես, որ փաթեթվածքի ցանկացած բացում հանգեցնի պիտակի ամբողջականության խախտմանը:

Փաթեթվածքը, որն անմիջականորեն շփման մեջ է գտնվում ոչ մթերատու ընտանի կենդանիների եւ մորթատու կենդանիների կերերի արտադրության համար նախատեսված՝ կենդանական ծագման ոչ սննդային հումքի հետ, պետք է լինի մեկանգամյա օգտագործման եւ պետք է համապատասխանի Եվրասիական տնտեսական միության պահանջներին:

## Գլուխ 45

### ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք որձ շների սերմնահեղուկ ներմուծելու եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխելու դեպքում**

***(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017 թվականի մայիսի 30-ի թիվ 60 որոշմամբ)***

Թույլատրվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծել եւ (կամ) անդամ պետությունների միջեւ տեղափոխել այն տարածքներում առողջ կենդանիներից ստացված՝ որձ շների սերմնահեղուկ, որտեղ սերմնահեղուկ վերցնելու, այն հետազոտելու, մշակելու, կոնսերվացնելու եւ պահպանելու համար պայմաններ կան:

Սերմնահեղուկի դոնոր որձ շները (այսուհետ՝ դոնոր որձ շներ) ծագում են պահման վայրերից, որոնք զերծ են կենդանիների հետեւյալ վարակիչ հիվանդություններից՝

կատաղություն՝ վերջին 6 ամսվա ընթացքում (դոնոր որձ շների մոտ սերմնահեղուկը վերցնելուց հետո 15 օրվա ընթացքում չեն դրսևորվել կատաղության նշաններ).

տուբերկուլյոզ՝ վերջին 6 ամսվա ընթացքում:

Դոնոր որձ շները սերմնահեղուկը վերցնելուց առնվազն 20 օր առաջ պետք է պատվաստված լինեն, եթե դրանք վերջին 12 ամսվա ընթացքում չեն պատվաստվել կատաղության, մսակերների ժանտախտի, պարվոփրուսային եւ ադենովիրուսային վարակի, լեպտոսպիրոզի դեմ:

Դոնոր որձ շները սերմնահեղուկը վերցնելուց ոչ ուշ, քան 14 օր առաջ պետք է հետազոտվեն հավատարմագրված լաբորատորիայում (անասնաբուժական



սերտիֆիկատում պետք է նշվեն լաբորատորիայի անվանումը, հետազոտության ամսաթիվը եւ մեթոդը), որի արդյունքում պետք է արձանագրվեն բացասական արդյունքներ լեպտոսպիրոզի (եթե դրանք չեն պատվաստվել կամ կանխարգելիչ նպատակով չեն մշակվել դեհիդրոստրեպտոմիցինով կամ համարժեք ազդեցության՝ արտահանող երկրում գրանցված այլ նյութով) եւ բրուցելյոզի մասով:

Դոնոր որձ շները սերմնահեղուկը վերցնելուց առնվազն 14 օր առաջ չեն օգտագործվում բնական սերմնավորման համար եւ գտնվում են դրա հավանականությունը բացառող պայմաններում:

Դոնոր որձ շները սերմնահեղուկը վերցնելուց ոչ ուշ, քան 10 օր առաջ պետք է մշակվեն հակահելմինտային պատրաստուկներով:

Առողջ լինելու փաստը հաստատելու համար դոնոր որձ շները սերմնահեղուկը վերցնելուց առաջ պետք է ենթարկվեն կլինիկական զննման՝ պարտադիր ջերմաչափմամբ:

Դոնոր որձ շների սերմնահեղուկում չպետք է պարունակվեն ախտածին եւ թունածին միկրոօրգանիզմներ:

Սերմնահեղուկը պետք է վերցվի, պահպանվի եւ փոխադրվի՝ ՄԱԲ-ի Կանոնագրքի առաջարկություններին համապատասխան:

Հավելված 1

Անասնաբուժական հսկողության  
(վերահսկողության) ենթակա ապրանքներին  
ներկայացվող Միասնական անասնաբուժական  
(անասնաբուժասանիտարական) պահանջների

## **ՑԱՆԿ**

**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ  
ԿԻՐԱՌՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ**

***Փոփոխող փաստաթղթերի ցանկ***

***(ավելացվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 294  
որոշմամբ, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 160,  
2017 թվականի ապրիլի 24-ի թիվ 34 որոշումների խմբագրությամբ)***

Համարը՝ ը/կ	ԵՍՄ ԱՏԳ ԱԱ խումբը, ծածկագիրը	Ապրանքի անվանումը	Ապրանքներն ուղեկցող փաստաթղթերը	Ներմուծման թույլտվություն (այո/ոչ)	Երրորդ երկրների ձեռնարկությունների ռեեստր (այո/ոչ)
1	2	3	4	5	6
I. Մինչև Առետրի համաշխարհային կազմակերպությանը Ղազախստանի Հանրապետության միանալու պահը կիրառվող միջոցները					
1	0101	Ձիեր, ավանակներ, ջորիներ եւ կիսագրաստներ կենդանի	անասնաբուժական սերտիֆիկատ կամ անասնաբուժական անձնագիր (մարզական ձիերի համար)	այո	ոչ
2	0102	Խոշոր եղջերավոր անասուն՝ կենդանի	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	ոչ
3	0103	Խոզեր՝ կենդանի	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	ոչ
4	0104	Ոչխարներ եւ այծեր՝ կենդանի	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	ոչ
5	0105	Ընտանի թռչուն՝ կենդանի, այսինքն ընտանի հավեր (Gallus domesticus), բադեր, սազեր, հնդկահավեր եւ խայտահավեր	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	ոչ
6	0106	Կենդանի կենդանիներ՝ բացառությամբ սույն ցանկի 1-5-րդ դիրքերում նշված կենդանիների	անասնաբուժական սերտիֆիկատ կամ անասնաբուժական անձնագիր (ոչ ավելի, քան երկու գլուխ շների եւ կատուների համար, որոնք ներմուծվում են անձնական օգտագործման նպատակով)	այո՝ բացառությամբ անձնական օգտագործման համար ոչ ավելի, քան երկու գլուխ շների եւ կատուների ներմուծման դեպքերի	ոչ
7	0201	Խոշոր եղջերավոր անասունների միս՝ թարմ կամ պաղեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո

8	0202	Խոշոր եղջերավոր անասունների միս՝ սառեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
9	0203	Խոզի թարմ միս՝ պաղեցրած կամ սառեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
10	0204	Ոչխարի կամ այծի միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
11	0205 00	Ձիու, ավանակի, ջորու կամ կիսագրաստի միս՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
12	0206	Խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, այծերի, ձիերի, ավանակների, ջորիների կամ կիսագրաստների սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
13	0207	Սույն ցանկի 5-րդ դիրքում նշված ընտանի թռչունների միս եւ սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
14	0208	Այլ միս եւ մսից սննդային ենթամթերք՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած՝ բացառությամբ սույն ցանկի 7-13-րդ դիրքերում նշվածների	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
15	0209	Անյուղ մսից առանձնացված խոզի ճարպ եւ չհալեցրած կամ այլ եղանակով	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո

		չստացված ընտանի թռչունների ճարպ՝ թարմ, պաղեցրած, սառեցրած, աղ դրված <1>, աղաջրի մեջ դրված <1>, չորացրած <1> կամ ապխտած <1>			
16	0210	Միս եւ մսից սննդային ենթամթերք՝ աղ դրված <1>, աղաջրի մեջ դրված <1>, չորացրած <1> կամ ապխտած <1>. սննդային ալյուր՝ ստացված մսից կամ մսի ենթամթերքից <1>	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
17	0301-ից	Կենդանի ձուկ՝ նախատեսված սննդի մեջ օգտագործելու համար	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
18	0301-ից	Կենդանի ձուկ՝ դեկորատիվ նպատակներով աճեցման համար նախատեսված, այդ թվում՝ սննդի մեջ օգտագործման համար չնախատեսված ակվարիումի ձկներ	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	ներառումը ռեեստրում չի պահանջվում, սակայն ներմուծման թույլտվության մեջ եւ անասնաբուժական սերտիֆիկատում պետք է նշվեն հսկողության վերցված ապրանքը շրջանառության մեջ դրած ձեռնարկության համարը եւ (կամ) անվանումը
19	0302	Ձկներ՝ թարմ կամ պաղեցրած՝ բացառությամբ սույն ցանկի 21-րդ դիրքում նշված ձկան ֆիլեի եւ ձկան այլ մսի	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
20	0303	Ձուկ՝ սառեցրած՝ բացառությամբ սույն ցանկի 21-րդ դիրքում նշված ձկան ֆիլեի եւ ձկան մսի	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո

21	0304	Ձկան ֆիլե եւ ձկան այլ միս (ներառյալ խճողակը) թարմ, պաղեցրած կամ սառեցրած	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
22	0305	Ձուկ՝ չորացրած, աղ դրված կամ աղաջրի մեջ դրված. ձուկ՝ ապխտած՝ մինչեւ ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման չենթարկված կամ ենթարկված <1>. ձկնայլուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ ձկներից հատիկներ՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի <1>	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո
23	0306	Խեցգետնակերպեր՝ պատյանի մեջ կամ առանց պատյանի, կենդանի, թարմ, պաղեցրած, սառեցրած, չորացրած <1>, աղ դրված <1> կամ աղաջրի մեջ դրված <1>. Խեցգետնակերպեր՝ ապխտած՝ պատյանի մեջ կամ առանց պատյանի, մինչեւ ապխտելը կամ ապխտելու ընթացքում ջերմամշակման չենթարկված կամ ենթարկված <1>. Խեցգետնակերպեր պատյանի մեջ՝ շոգեխաշած <1> կամ եռացող ջրի մեջ եփած <1>, պաղեցրած կամ չպաղեցրած, սառեցրած, չորացրած <1>, աղ դրված <1> կամ աղաջրի մեջ դրված <1>. այլուր՝ մանր եւ խոշոր աղացվածքի, եւ հատիկներ Խեցգետնակերպերից՝ սննդի մեջ օգտագործելու համար պիտանի <1>	անասնաբուժական սերտիֆիկատ	այո	այո

